ISSN 1829-2003

ՎԱՐՁՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK

DUTY OF SOUL

N 18 2022

Ռաֆֆի Քորթոշյան
Ի ՀԱՎԵԼՈՒՄՆ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՑՈՒՑԱԿԻ



էջ 1

Հուման Բախշայի, Բեհրուզ Խան Մոհամադի
ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՖԹԻԱՆ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԻԱՊԻ ՇԵՐՏԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԵՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑՆԵՐԸ

էջ 19

Հեթում քհն. Թարվերդյան
ԱԽԹԱԼԱՅԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

էջ 29

Սամվել Կարապետյան
ՄԻ ԽԱՉՔԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

էջ 38

Էմմա Աբրահամյան
ՍՊԻՏԱԿ ԽԱՉ ՎԱՆՔ

էջ 39

Ռաֆֆի Քորթոշյան
ՓՐԿՎԱԾ ՄԱՍՆԻԿՆԵՐ ՀՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ

էջ 52

Էմմա Աբրահամյան
ԱՐՑԱԽՅԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԴԵՐԲԵՆԴԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻՑ

էջ 56

ISSN 1829-2603

ՎԱՐՁՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE
YARDZK

N 18 2022

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
EDITORIAL BOARD
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
EMMA ABRAHAMIAN
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
RAFFI KORTOSHIAN
ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՋԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՇՅԱՆ
Designers
ARMEN GEVORGIAN
LIANA HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223
ՏՐՎԱԾ 13.10.2010
Certificate No. 03Ա089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
Responsible for this issue
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24/4
Baghramian 24/4 , Yerevan, RA

armenianarchitecture.us
raa-am.org
artsakhmonuments.org
raayer@sci.am, raatransfer@yahoo.com
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ RAA Foundation
010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture Foundation

Ի ՀԱՎԵԼՈՒՄՆ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՑՈՒՑԱԿԻ

Ռաֆֆի Քորքոշյան

Երջանկահիշատակ Ս. Կարապետյանի աշխատասիրությամբ գրավոր աղբյուրների և դաշտային ուսումնասիրությունների հիման վրա դեռևս 1995 թ. հրատարակվել է Վրաստանի Հանրապետության հայկական եկեղեցիների համահավաք առաջին ցուցակը՝ 638 միավորով:

Ս. Կարապետյան, «Հայկական եկեղեցիները Վրաստանում» (1995 թ.)

Հաշվի առնելով ուսումնասիրության տարածքի մեծությունը (ՎՀ-ի 65 շրջաններից 40-ը)՝ ի սկզբանե պարզ էր, որ նշված թիվն ավելանալու էր միայն հետագա դաշտային հետազոտական շարունակական աշխատանքներով: Այս մտայնությամբ էլ 2004-2015 թթ.՝ մինչև Վրաստանի համար անցանկալի անձ[1] հայտարարվելը, Ս. Կարապետյանը մեկը մյուսի ետևից ղեկավարել է 7 գիտարշավ, որոնց արդյունքները դեռ մշակման փուլում են:

Վրաստանի հայկական եկեղեցիների ցուցակագրման հարցը վերաաշխուժացնելուն ծառայող սույն հոդվածով ներկայացնում ենք նշյալ ցուցակում ավելացման արժանի հայկական քրիստոնեական այն կառույցները, որոնք հայտնաբերել ենք 2015-2017 թթ.՝ խնդրին հետամուտ տարբեր խմբերի հետ համատեղ աշխատանքների շնորհիվ:

Հավելենք նաև, որ հոդվածում ներկայացվող հայկական պաշտամունքային կառույցներին հատուկ են հայերեն արձանագրությունները, հայառձ խաչաքանդակները, հայ առաքելական ծիսական սովորույթներին բնորոշ ճարտարապետական լուծումները: Ցավոք, հենց այդ հատկանիշների վերացման նպատակով էլ ենթարկվել են վանդալական (վրացականացման) գործողությունների:

Բոլնիսի շրջան

Բոլնիս քաղաք[2]

Միրտաշենի հայկական համալիրը (ԺԶ-ԺԷ դդ.). գտնվում է քաղաքից 6 կմ հյուսիս-արևելք՝ Խրամ գետի աջ ափին՝ բլրի վրա (N 41.491888, E 44.593930)՝ Միրտաշեն գյուղատեղիի[3] տարածքում: Բաղկացած է միանավ, թաղածածկ հորինվածքով երեք (երկուսն իրար կից են, մեկը՝ առանձին) եկեղեցիներից՝ կառուցված հիմնականում տարբեր չափերի կոպտատաշ ու սրբատաշ քարով և կրաշաղախով: Համեմատաբար ավելի լավ վիճակում է արևմտյան կողմում գտնվող մեկուսի կառույցը, որի միակ մուտքը հարավային ճակատից է: Բոլոր ճակատներում ունի մեկական լուսամուտ:



ՄԻՐՏԱՇԵՆ. համալիրի եկեղեցիների հատակագծերը (չափ.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Համալիրի արևելյան եկեղեցիների որմերը պահպանվել են մինչև 1,5 մ բարձրությամբ՝ բացառությամբ հյուսիսային եկեղեցու խորանի հատվածի, որն ամբողջական է: Ի դեպ, հարավային եկեղեցու խորանը մաքրելիս նախնական տեղում ի հայտ եկավ վեմ-քարը, որի վրա նշմարվում է հայերեն կիսաեղծ փորագիր արձանագրություն.

... Ներս[էս] ... | ... | ...n... | ՌԺԳ (1564):

Հրատ. առաջին անգամ:

1 **Կարապետյան Ս.**, Անցանկալի անձ Վրաստանի համար. ինչո՞ւ, «Վարձք», 2016, № 11, էջ 1-2:

2 Ս. Կարապետյանի ցուցակում քաղաքի տարածքում նշված է ԺԶ-ԺԷ դդ. 2 եկեղեցի (**Կարապետյան Ս.**, Հայկական եկեղեցիները Վրաստանում. ցուցակ և քարտեզ, Երևան, 1995): Տեղադրությունը՝ N 41.502694, E 44.538806 և N 41.451619, E 44.538479:

3 **ցուցոշվილ დ.**, მატერიალური კულტურის ძეგლები ქვემო ქართლის ისტორიულ-არქეოლოგიური ექსპედიციის მასალების მიხედვით, ძეგლების მეგობარი, № 50, 1979, გვ. 13.

ՄԻՐՏԱՇԵՆ. համալիրի մեկուսի եկեղեցու հարավային և արևելյան ճակատները, ինչպես նաև ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Համալիրի տարածքում հայկական գերեզմանոցն է՝ հիմնականում անմշակ սալատապաններով: Առկա են նաև քանդակազարդ 1 և արձանագիր 2 տապանաքարեր, ինչպես նաև 2 խաչքար և խաչազարդ բազմաթիվ բեկորներ:

Տապանաքար. արևմտյան եկեղեցուց հարավ՝ գերեզմանոցում, արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան Ավաքի որդի Մխ(ի)թարին, եղբարն Զուրապ(ի)ն, Սարգիս(ի)ն: | ...ստ. | Նազար:

Հրատ. առաջին անգամ:

ՄԻՐՏԱՇԵՆ. Իրար կից արևելյան եկեղեցիները հարավ-արևմուտքից, հարավային և հյուսիսային եկեղեցիների ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)



ՄԻՐՏԱՇԵՆ. Համալիրի արևելյան եկեղեցիներից հարավայինի խորանը մինչև մաքրելը և դրանից հետո, հայտնաբերված արծանագիր վեմքարը և գրչանկարը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2017, 2022 թթ.)



ՄԻՐՏԱՇԵՆ. համալիրի գերեզմանոցում գտնվող խաչքարերը և հայերեն արձանագրությամբ տապանաքարը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2017, 2022 թթ.)

Խախալաջվարի (Դեմիրլի) գյուղ

Եկեղեցի (1655 թ.). գտնվում է գյուղից 500 մ հարավ-արևելք՝ Մաշավերա գետի ձախ վտակի՝ Գետա գետի աջ ափից ոչ հեռու (N 41.419782, E 44.364400):

Միանավ, թաղածածկ հորինվածքով եկեղեցին կառուցված է անմշակ և կոպտատաշ քարով, կրաշաղախով: Թաղակիր կամարներն ու շքամուտքը շարված են սրբատաշ քարերով, արևելյան լուսամուտի կամարը՝ աղյուսով: Միակ մուտքն արևմտյան ճակատից է: Արևելյան, արևմտյան և հարավային կողմերում ունի մեկական լուսամուտ: Մկրտության ավազանի խորշն ավանդական տեղում է: Խորանի հարավային և հյուսիսային հատվածներում առկա է մեկական խորշ:

Արևմտյան ճակատին պահպանվել է հայերեն շինարարական արձանագրությունը (1655 թ.), իսկ ներսում՝ եկեղեցին կառուցողի կնոջ տապանաքարը (1652 թ.):

Ոչ վաղ անցյալում քանդվել է խորանի՝ հայկական եկեղեցիներին բնորոշ բարձր բեմը: Խորանի որմին երևում է երբեմնի բեմի վերին սահմանի հետքը: Տեղահանվել է նաև մկրտության ավազանը և անխնամ նետվել եկեղեցուց մոտ 50 մ հյուսիս-արևմուտք: Վերոնշված գործողությունները հուշում են, որ վրացականացման նպատակով եկեղեցին ենթարկվել է կանխամտածված վանդալիզմի:

Շինարարական արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատին՝ մուտքից հարավ, 8 տող.

Ի թվին ՌՃԴ (1655), ես՝ Թամ/ազս, շինեց{ե}ի ս(ուր)ք եկ/եղեցիս վ(ա)ս(ն) փրկութե(ան) հոգ/ո իմոյ, ծն(ո)ղաց իմոյ, / կենակից իմ՝ Դարէջան, / հա(յր) իմ՝ պ(ա)ր(ոն) Ղաիթմազն, / [մայր]ն իմ՝ Թէթոյ, որդիք / իմ՝ Նարիման, ըՌամ(ա)ն:

Հրատ. **გაგოშიძე გ., ჩანტლაძე ნ.,** მონოფიზიტური ძეგლები საქართველოში (არქიტექტურა, რელიეფები, წარწერები), I, ქვემო ქართლი, გვ. 34.

ԽԱԽԱԼԱՁՎԱՐԻ. եկեղեցին հյուսիս-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք, արտաքուստ՝ արևելքից, մկրտության ավազանի խորշը և ավազանը՝ ընկած եկեղեցուց հյուսիս-արևմուտք (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ.)



ԽԱԽԱԼԱՋՎԱՐԻ. եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Տապանաքար. ընկած է եկեղեցու ներսում, արձանագրությունը՝ 4 տող.

Ա(յ)ս է յանգ|իստ Դառէ|ջանին, թ(վին) ՌՃ|Ա (1652):

Հրատ. առաջին անգամ:



ԽԱԽԱԼԱՋՎԱՐԻ. Դարեջանի տեղահանված տապանաքարը՝ հենված եկեղեցու հարավային որմին (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Մամխութի (Սարաչլո) գյուղ

Ստորին եկեղեցի (Ե-Է դդ.). գտնվում է գյուղից 1,5 կմ հարավ-արևմուտք (N 41.362400, E 44.697367):

Պատկանում է արտաքուստ շեշտված խորանով, միանավ հորինվածք ունեցող սակավաթիվ շինությունների տիպին: Երկաստիճան որմնախարսխի վրա վեր բարձրացող բազիլիկ է: Կառուցված է միջին չափերի սրբատաշ քարով, կրաշաղախով: Միակ մուտքը հարավային ճակատից է, արևելյան և հարավային կողմերում առկա է մեկական լուսամուտ: Մինչև վերանորոգումը ծածկն ամբողջությամբ փլուզված էր, իսկ եկեղեցու որմին ագուցված են եղել ԺԱ-ԺԲ դարերին բնորոշ հայկական ծաղկած որմնախաչեր: Վերջիններս «վերանորոգում» կատարող խումբը հավանաբար ազգային պատկանելությունը փոխելու միտումով տեղահանել է: Դրանցից մեկն ամբողջական է և ընկած եկեղեցուց մոտ 200 մ հյուսիս-արևելք, իսկ մյուսը բեկորված է:

ՄԱՄԽՈՒԹԻ. ստորին եկեղեցին հարավից, տեղահանված ծաղկած որմնախաչերը (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ.)

Հայտնի է, որ 2006 թ. նոյեմբերի 7-ին Վրաստանի նախագահի հրամանագրով եկեղեցին հայտարարվել է ազգային նշանակության կառույց:

Գարդաբանի շրջան

Նորիո գյուղ[4]

Սբ. Սարգիս (Սոմխիշվիլեբիս սաղդար, թարգ.՝ հայկական մատուռ) եկեղեցի (ԺԸ-ԺԹ դդ.).



ՆՈՐԻՈ. Սբ. Սարգիս եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ն. Թորոսյանի, 2016 թ.)

ՆՈՐԻՈ. Սբ. Սարգիս եկեղեցին հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Դարչինյանի, 1980-ական թթ.) և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ հոդվածագրի, 2016 թ.)

4 Ս. Կարապետյանի ցուցակում գյուղի տարածքում նշված է 1 եկեղեցի՝ Սբ. Աստվածածին (**Կարապետյան Ս.**, նշվ. ցուցակ և քարտեզ): Տեղադրությունը՝ N 41.781998, E 44.986328:



ԲՈՍԼԵԲ. մատուռը հարավից, ներքին տեսքը դեպի արևելք և արձանագրությունը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2015 և 2022 թթ.)

գտնվում է գյուղի հարավարևմտյան եզրին՝ հայկական նոր գերեզմանոցից (N 41.782917, E 44.976833) ոչ հեռու՝ ԺԹ դարի հայերեն տապանաքարերով փոքր մեկ այլ գերեզմանոցի հյուսիսային կողմում:

Եռանավ բազիլիկ եկեղեցին կառուցված է աղյուսի և գետաքարերի համադրությամբ: 1980-ական թթ. դեռևս կանգուն եկեղեցին 2016 թ. արդեն կիսավեր էր, մասամբ պահպանվում էին միայն արևելյան և հարավային ճակատները:

5 Ս. Կարապետյանի ցուցակում գյուղի տարածքում նշված է 2 եկեղեցի՝ ԺԲ-ԺԳ դդ. կիսավեր և ԺԹ դ. Սբ. Աստվածածին (**Կարապետյան Ս.**, նշվ. ցուցակ և քարտեզ):

Դմանիսի շրջան

Բոսլեբ գյուղ[5]

Գերեզմանոցի մատուռ (ԺԶ դ.). գտնվում է գյուղի հյուսիսարևելյան եզրին՝ հայկական հին գերեզմանոցում (N 41.358235, E 44.303852):

Միանավ, թաղածածկ հորինվածքով մատուռը կառուցված է անմշակ և կոպտատաշ քարով, կրաշաղախով: Միակ մուտքը հարավային ճակատից է: Արևելյան և արևմտյան կողմերում ունի մեկական լուսամուտ:



ԿԱԿԼԻԱՆ. եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և արևելյան ճակատն արտաքուստ (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ.)

Խորանի հյուսիսային հատվածում՝ սվաղի վրա, պահպանվում է թվակիր հայերեն արձանագրություն: Հստակ երևում է հայկական եկեղեցիներին բնորոշ երբեմնի բարձր բեմի հետքը, որը վրացականացնելու նպատակով դարձյալ կանխամտածված քանդվել է:

Արձանագրություն. եկեղեցու խորանի հյուսիսային հատվածում՝ 2 տող.

Թվ(ին) ՌՂԲ (1643), | Մինաս:
Հրատ. առաջին անգամ:

Կակլիան գյուղ

Եկեղեցի (ԺԶ-ԺԷ դդ.). գտնվում է գյուղի կենտրոնում (N 41.373300, E 44.288367):

Միանավ, թաղածածկ (չի պահպանվել) հորինվածքով եկեղեցին կառուցված է անմշակ, կոպտատաշ և սրբատաշ քարով, կրաշաղախով: Միակ մուտքը հարավային ճակատից է, իսկ միակ լուսամուտը՝ արևելյան: Ունի հայկական եկեղեցիներին բնորոշ բարձր բեմ, որը հիմնականում միտումնավոր ոչնչացվել է:

Սակիրե գյուղ[6]

«Կարմիր» վանք (Ժ-ԺԱ դդ.). գտնվում է գյուղից 800 մ արևելք (N 41.262087, E 44.286648):

Միանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին կառուցված է հիմնականում կարմիր սրբատաշ քարով, կրաշաղախով, իսկ թաղը և հետագա վերանորոգումները՝ անմշակ և կոպտատաշ քարերով: Որմերին տեղադրվել են նաև վաղքրիստոնեական քառակող կոթողների և ճարտարապետական այլ բեկորներ: Թեք լանջին կառուցված եկեղեցու հյուսիսային պատն ամբողջությամբ կից է ժայռին: Միակ մուտքը հարավային ճակատից է, արևելյան, արևմտյան և հարավային կողմերում առկա է մեկական լուսամուտ:

ՍԱԿԻՐԵ. «Կարմիր» վանքն արևելքից (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ.)

Եկեղեցու մուտքի արևելյան կողային նիստին առկա է նվիրատվական երկու հիշատակագրություն:

6 Ս. Կարապետյանի ցուցակում գյուղի տարածքում նշված են ԺԶ-ԺԷ դդ. երկու եկեղեցի և ԺԵ-ԺԸ դդ. մեկ մատուռ (**Կարապետյան Ս.**, նշվ. ցուցակ և քարտեզ):

ՍԱԿԻՐԵ. «Կարմիր» վանք. եկեղեցին հարավ-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք, խաչազարդ ճարտարապետական բեկոր, խորանի անկյունների խոյակներ, եկեղեցու արևելյան ճակատին ագուցված վաղքրիստոնեական ճարտարապետական բեկորներ (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ՍԱԿԻՐԵ. «Կարմիր» վանք. քառակող կոթողների բեկորներ (լուս.՝ հոդվածագրի, 2015 թ.)



ՍԱԿԻՐԵ. «Կարմիր» վանք. նվիրատվական հիշատակագրություններ (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2015 և 2022 թթ.)

Արձանագրություն. փորագիր, 2 տող.

ՌՃԸ (1659 թ.) ...ն... | ...թ...:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն (ԺԷ-ԺԸ դդ.). ելնդագիր, 3 տող.

Էս է Հ|անէս(ի) գ|(ի)ր(ը):

Հրատ. առաջին անգամ:

Փոքր Դմանիս գյուղ[7]

Մատուռ Ա (ԺԶ դ.). գտնվում է գյուղից 650 մ հյուսիս-արևելք (N 41.337033, E 44.347067)՝ Դմանիս քաղաքատեղիի տարածքում:

7 Ս. Կարապետյանի ցուցակում գյուղի տարածքում նշված է ԺԱ-ԺԳ դդ. երկու մատուռ (**Կարապետյան Ս.**, նշվ. ցուցակ և քարտեզ): Տեղադրությունը՝ N 41.329648, E 44.341179 և N 41.336430, E 44.342623:

ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. առաջին մատուռն արևմուտքից, արևելքից և հարավից, ներքին տեսքը դեպի արևելք և հարավային ճակատի խաչքարը (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Միանավ, թաղածածկ հորինվածքով մատուռը կառուցված է անմշակ և կոպտատաշ քարով, կրաշաղախով (սրբատաշ են լուսամուտների շրջանակները և մուտքի ճակատակալ քարը): Միակ մուտքը հարավային ճակատից է, արևելյան, արևմտյան և հարավային կողմերում առկա է մեկական լուսամուտ: Ակնհայտ երևում է, որ հայկական եկեղեցիներին բնորոշ բարձր բեմը միտումնավոր ոչնչացվել է:

Մատուռի մուտքի արևելյան որմին ագուցված խաչազարդ քարին առկա է հայերեն նվիրատվական հիշատակագրություն.



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. առաջին մատուռի արձանագիր խաչազարդ քարը (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2019 թ.)

Արձանագրություն. խաչազարդ քարին՝ 6 տող.

ՁԿԱ (1512) ս(ուրբ) խ(ա)չ(ս): || [Մարտի]-բոս|ն Ռ (1000) նմ|ռ...տմ...| ... ամէ(նակալ) Ա(ստուա)ծ | ող(որմի):

Հրատ. առաջին անգամ:

Մատուռ Բ (ԺՁ դ.). գտնվում է գյուղից 480 մ հյուսիս-արևելք (N 41.335667, E 44.344717)՝ Դմանիս քաղաքատեղիի տարածքում:

Միանավ, թաղածածկ (չի պահպանվել) հորինվածքով մատուռը կառուցված է հիմնականում անմշակ և կոպտատաշ քարով, կրաշաղախով: Միակ մուտքը հարավային ճակատից է, արևելյան, արևմտյան և հարավային կողմերում առկա է մեկական լուսամուտ: Ակնհայտ երևում է, որ հայկական եկեղեցիներին բնորոշ բարձր բեմը միտումնավոր ոչնչացվել է: Երբեմնի բեմի ճակատը զարդարող տեղահան խաչքարերը 2017 թ. գտնվում էին եկեղեցու ներսում:

Մատուռի հարավային լուսամուտի արևելյան կողմում ագուցված խաչազարդ քարը թվակիր է՝ *ՁԾՁ (1507 թ.)*:



Լայնական կտրվածք դեպի Աե



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. առաջին մատուռի լայնական կտրվածքը դեպի արևելք և հատակագիծը (չափ.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Խորանի կամարի քարերից մեկի (ընկած է եկեղեցում) կոր մակերեսին ևս առկա է արձանագրություն:

Արձանագրություն. փորագիր, 7 տող.

Խաչով բեմս: | Տ(է)ր | Ա(ստուա)ծ | Յ(իսու)ս | Ք(րիստո)ս: | Թվ(ին) ՌԲ (1553) ... | ...անա...:

Հրատ. առաջին անգամ:



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. Երկրորդ մատուռը հարավից, հյուսիս-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք, արծանագիր խաչազարդ քարն ու գրչանկարը, բեմի ճակատը զարդարող տեղահան խաչքարերը (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. տապանաքար երկրորդ մատուռի գերեզմանոցում, 1284 թ. (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. տապանաքար երկրորդ մատուռի գերեզմանոցում, 1746 թ. (լուս. և գրչ. `հոդվածագրի, 2017 և 2022 թթ.)



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. երկրորդ մատուռի արձանագիր կամարի քարը (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2019 թ.)



ՓՈՔՐ ԴՄԱՆԻՍ. խաչքար երկրորդ մատուռում, 1556 թ. (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ., գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Մատուռի շուրջ տարածվում է գերեզմանոցը՝ հիմնականում անմշակ սալատապաններով, որտեղ առկա է արձանագիր 2 տապանաքար, իսկ մատուռի ներսում՝ գերեզմանոցից տեղահան արձանագիր 1 խաչքար:

Արձանագրություն. տապանաքարի կողերին՝ փորագիր, 5 տող.

Ի թվիս ՉԼԳ (1284): | ...ցին եւ կազմ... գեղեցիկ որդի ու[թ] ամեաց նոր դեռայ|... ...մանի սիրելի եւ ... ...յս հասակաւ ...ա մանկութեան || ...ար զս...ան ...ցն ... | ...նիր եւ թողի ծերացեալ ծն[ողս] ...ազան, որք կարդայք յիշ(եցէք):

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. խաչքարի կողին՝ փորագիր, 3 տող.

Թ(վին) | Ռ|Ե (1556):

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. տապանաքարի երեսին՝ փորագիր, 13 տող.

Թվ(ի)ն Ռ|ՃԵ (1746): | Տապանս | այս տ(է)ր | Աւաքին, | զոր անխրատ | մարդք չեն | արժան կոչ|ել, վ(ա)ս(ն) պար|տոց հոս | մեկացա, | սրախող | եղայ:

Հրատ. առաջին անգամ:



ՃԻՎՃԱՎ. եկեղեցին հարավից, հարավ-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք և հատակագիծը (լուս. և չափ.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Թեթրի-Ծղարոյի շրջան

Ճիվճավ գյուղ

Եկեղեցի (Ժ-ԺԲ դդ.). գտնվում է գյուղից 500 մ հյուսիս (N 41.536483, E 44.422117):

Միանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին կառուցված է մեծ և միջին չափերի սրբատաշ քարով, կրաշաղախով: Միակ մուտքը հարավային ճակատից է: Պատերը մինչև 1962 և 2004 թթ. կատարված անգրագետ կոնսերվացումն ու վերանորոգումը պահպանված են եղել մոտ 1,5 մ բարձրությամբ: Նշված աշխատանքների ժամանակ հիմնովին աղճատվել է նաև խորանի նախնական տեսքը:

Ուշագրավ է հարավային ճակատի հարդարանքը, որով էլ կարելի է եկեղեցին համարել հայկական: Արևելյան եզրի հսկայական անկյունաքարին՝ քառաստիճան պատվանդանի վրա, ձողաբարձ պարզ խաչի բարձրաքանդակ է: Արևմտյան եզրին հարթաքանդակների պատկերախումբ է, որտեղ արևմուտք-արևելք ուղղությամբ պատկերված են՝ 1. Սբ. Գևորգ զորավարը ձիու վրա՝ ձեռքին խաչագլուխ նիզակ: 2. Նախամարդ Ադամը, գլխավերևում՝ օձ[8]: 3. Ծաղկած խաչ: 4. Դանիելն առյուծների գբում:

Ճիվճավ. խաչի բարձրաքանդակ (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Մառնեուլի շրջան

Ղուդրի գյուղ[9]

Սբ. Նշան եկեղեցի (ԺԶ-ԺԷ դդ.). գտնվում է գյուղից 3 կմ հյուսիս-արևելք (N 41.347806, E 44.690417):

8 Գ. Քոքիշվիլին այս մարդակերպ պատկերը նմանեցնում է առասպելական աստծո որդուն՝ Կոպալային, իսկ գլխի վերևի օձը՝ ալիքաձև շանթի կամ մտրակի (საქართველო და მსოფლიო> გაზეთი, 3-9 მარტი, 2010 წელი, № 8 (51), გვ. 26, უცნობი საქართველო. ავტორი გელა ქოქიაშვილი, ავტორის ფოტოები): Նշվածի հետ համաձայն չենք և համարում ենք, որ բոլոր պատկերները պետք է լինեն աստվածաշնչյան կերպարներ:

9 Ս. Կարապետյանի ցուցակում գյուղի տարածքում նշված է ԺԵ-ԺԸ դդ. 6 եկեղեցի կամ մատուռ (**Կարապետյան Ս.**, նշվ. ցուցակ և քարտեզ): Վերջիններս, ի տարբերություն մեր նշած եկեղեցու, գտնվում են գյուղում կամ դրանից դեպի հարավ:



ՃԻՎՃԱՎ. Խաչի բարձրաքանդակը և հարթաքանդակների պատկերախումբը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2017 և 2022 թթ.)

Միանավ հորինվածքով եկեղեցուց մոտ 1 մ բարձրությամբ պահպանվել է միայն հարավային կեսը՝ շարված անմշակ քարով: Խորանի կենտրոնում՝ նախնական տեղում է վեմ-քարը, որն ունի հայերեն արձանագրություն, իսկ հարավային եզրին՝ եկեղեցու անունը կրող (ըստ մեզ) գեղաքանդակ մի խաչքար, ինչպես նաև վերջինիս կից տեղահան խաչքարի բեկոր:

Հարկ է նշել նաև, որ եկեղեցու շրջակայքում տարածված գերեզմանոցում առկա են խաչքարերի պատվանդաններ և գեղաքանդակ սալատապաններ:

Արձանագրություն. վեմ-քարին՝ 3 տող.

Ս(ուրբ)ք խաչս բարէխօս է Գուլ|թին, Ահուն(ա)յին, ...ւան|ին և Շամին:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. խորանի հարավային եզրի խաչքարին.

Ս(ուրբ)ք Նշ(ան):

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. խաչքարի բեկորին՝ 3 տող.

[Սուրբ] խաչս բարէ[խօս] | է Խումա{ր}շին ...|թունին ...:

Հրատ. առաջին անգամ:



ՂՈՒԴՐԻ. եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք, եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հատակագիծը (լուս. և չափ.՝ հոդվածագրի, 2017 թ.)





ՂՈՒԴՐԻ. եկեղեցու արձանագիր խաչքարերը և այլ խաչքարերի պատվանդաններ (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՖԹԻԱՆ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՒԱՂԻ ՇԵՐՏԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԵՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑՆԵՐԸ

Հուման Բախշայի, Բեհրուզ Խան Մոհամադի

Ներկայացնում ենք Հուման Բախշայի[1] եւ Բեհրուզ Խան Մոհամադի[2] զեկոյցները Սալմաստի Հաֆթուան գիւղի եկեղեցու սւաղի շերտերի հեռացման եւ որմնանկարների ուսումնասիրութեան մասին[3]:

Առաջին զեկոյց, 2015 թ.

Նախաբան

Սալմաստն Իրանի Արեւմտեան Ատրպատականի ամենամարդաշատ գաւառն է: Գտնւում է Ուրմիոյ գաւառի հիւսիսում եւ Խոյի հարաւում: Մինչ օրս յայտնաբերւել են աւելի քան 39 հայկական պատմական եկեղեցիներ[4], որոնք կառուցւել են ԺԳ-ԺԹ դարերում: Ցաւօք, նրանց մեծ մասն աւերւել է: Այժմ միայն հետքեր են մնացել:

Կանգուն մնացածներից ուշագրաւ է պատմական Սբ. Գէորգ եկեղեցին, որը գտնւում է Սալմաստ գաւառի Զոլա չայի շրջանի Հաֆթուան գիւղում՝ Մահլամ գիւղից դէպի գաւառի կենտրոն՝ Սալմաստ քաղաք տանող ճանապարհին: Այն եւ նրան կից թատրոնի աւերակները գտնւում են գիւղի կենտրոնում եւ պարսպապատ են: Սոյն յօդւածն անդրադարձ է եկեղեցու որմնանկարների բացայայտմանը եւ նրանց ուսումնասիրութեանը:

Յուշարձանի ուսումնասիրութեան պատմութիւնը

Սբ. Գէորգ եկեղեցին, ըստ երեւոյթին, առաջին անգամ ուսումնասիրել է պրոֆ. Վոլֆրամ Քլայսը 1969 թ.[5], իսկ Իտալիայի Միլան քաղաքի Պոլիտեխնիկական համալսարանի արշաւախմբերից մէկը՝ 1977-1978 թթ.:

Հայ հետազօտող Անդրանիկ Հովեանը[6], ինչպէս նաեւ Նադերեի Շոջադելը[7] եւ սոյն յօդւածի հեղինակներից մէկը[8] եւս իրենց ուսումնասիրութիւններում խօսել են այս պատմական յուշարձանի մասին:

Եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերեալ առկա են տարբեր տեսակէտներ. արեւմտեան ճակատից բացւած մուտքին նշւած է ԺԳ-ԺԴ դդ., սակայն այն վերակառուցւել է Սեֆեան տիրապետութեան շրջանում: Թոհիդ Մալեքզադեհ Դիլմաղանին «Սալմաստի տասը հազար տարուայ պատմութիւն» գրքում գրել է. «Այս եկեղեցին Շահ Աբասի հրամանով է կառուցւել, որը կործանւել է 1930 թ. երկրաշարժից, ապա հիմնովին վերակառուցւել է, որի յատակագիծը, համեմատելով տարածաշրջանի նման եկեղեցիների յատակագծերին եւ օգտագործւած շինանիւթին, վստահաբար պիտի որ կառուցւած լինի Սեֆեան շրջանում»:

Ինչպէս արդէն նշել ենք, եկեղեցու հարեւանութեամբ են գտնւում թատրոնի աւերակները: Այն կառուցւել է 1914 թ.՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ, երբ ռուսները գրաւել էին տարածաշրջանը եւ գործածել որպէս թատրոնի սրահ[9]: Վերջին տարիներին աւերակներից գտնւել են խեցեղէնի բեկորներ, որոնց վրայ կա ռուսական ցարական զինանշան: Մեր օրերն են հասել շինութեան միայն մուտքի վերեւի եռանկիւնի բարաւորը, պատերի մի մասը եւ սիւների խարիսխները:

Ճարտարապետական իւրայատկութիւնները

Սբ. Գէորգը բաղկացած է եկեղեցուց (արտաքին չափ.՝ 9,5 x 9,7 մ) եւ նրան արեւմուտքից կից գավթից (չափ.՝ 13,3 x 15 մ): Եկեղեցին ունի արեւելք-արեւմուտք ուղղութիւն: Մուտքը (լայնութիւնը՝ 1 մետր, բարձրութիւնը՝ 1,7 մետր) արեւմուտքից է եւ գտնւում է որմնակամարներից առաջացած խորշի մէջ: Նրանից վեր կան երկու որմնակամարներ՝ 4,3 եւ 4,8 մ բարձրութեամբ: Խորանն արեւելեան մասում է:

---

1 Թեհրանի արւեստի համալսարանի դասախօս եւ պատմական յուշարձանների վերականգման աւագ գիտաշխատող:

2 «Իրանի մշակոյթային ժառանգութիւն» կազմակերպութեան Արեւմտեան Ատրպատական նահանգի հնագիտութեան բաժնի աւագ գիտաշխատող:

3 Զեկոյցները լոյս են տեսել Թեհրանի «Պայման» պարսկալեզու մշակոյթային պարբերականում (2015, № 72; 2018, № 86): «Վարձք» հանդէսում հայերէն տարբերակը լոյս է տեսնում «Պայման» պարբերականի խմբագրակազմի անդամ Շահէն Յովսէփեանի թարգմանութեամբ:

4 Ըստ ՀՃՈՒ հիմնադրամի ուսումնասիրութիւնների՝ միայն Սալմաստ գաւառում գրանցվել է մոտ 60 եկեղեցի, որի 40%-ը հիմնաւեր է («Վարձք»-ի խմբագրակազմ: Տե՛ս **Կարապետեան Ս.**, Հայաստանի պատմութիւն. Սալմաստ, Երեւան, 2017, էջ 204-205):

5 **Kleiss W.**, Bericht über zwei erkundungsfahrten in Nordwest-Iran, “Archäologische Mitteillungen aus Iran”, NF 2, 1969, p. 92.

6 **Հովեան Ա.**, Իրանահայերի եկեղեցիները, Թեհրան, 2003, էջ 127 (պարսկերեն):

7 **Նադերեհ Շոջադել**, Հաֆթուանի Սբ. Գէորգ եկեղեցին, «Պայման», 2012, № 62, էջ 47-54 (պարսկերեն):

8 **Բեհրուզ Խան Մոհամադի**, Հայերի պատմական եկեղեցիները Արեւմտեան Ատրպատականում, «Պայման», 2005, № 31, էջ 78-88 (պարսկերեն):

9 Հարկ է նշել, որ այս տեղեկութիւնը չի համապատասխանում իրականութեանը («Վարձք»-ի խմբագրակազմ), քանի որ հայաբնակ Հաֆթուանն այն եզակի գիւղերից էր, որոնք դեռեւս ԺԹ դարի վերջից ունեին թատերասրահներ: Առաջինը կառուցվել է 1894 թ., իսկ եկեղեցու մոտ գտնւող թատրոնի այս շէնքը՝ 1913 թ. (**Կարապետեան Ս.**, նշվ. աշխ., էջ 204-205):

Եկեղեցին և գաւիթը հիւսիսից (լուս.՝ Ս. Դանիէլեանի, 2016 թ.)

Գաւիթը քառանկիւնի, քառասիւն կառոյց է (ներքին չափերն են՝ 10,5 x 12,2 մ): Քառակուսի կտրուածքով սիւները, որոնց իւրաքանչիւր նիստն ունի 1,1 մ լայնութիւն, հիւսիսային եւ հարաւային պատերից հեռու են 1,9 մ, իսկ միմեանցից՝ 4,5 մ: Սիւներն իրար են միացուած սլաքաձեւ չորս կամարներով, որոնց վրայ հանգչում է 12 նիստանի գմբէթը, որի թմբուկի բարձրութիւնը 1,7 մ է, իսկ գմբէթինը՝ գաւթի յատակից 13,5 մ: Թմբուկի իւրաքանչիւր նիստում բացուած է մէկական լուսամուտ:



Համար 1 եւ 2 սիւները

Որմնանկարների սւաղի շերտերի հեռացման զեկոյցը

2014 թ. օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներին Սբ. Գէորգ եկեղեցին ուսումնասիրելու ընթացքում կատարուեցին նաեւ երկու սիւների չորս նիստերի որմնանկարների սւաղի շերտերի հեռացման աշխատանքներ: Միեւնոյն ժամանակ նորացուեցին նաեւ գմբէթի՝ անմխիթար վիճակում գտնուող հին լուսամուտները, իսկ զանգակատան կիսաւեր սիւները նորոգուեցին եւ ամրակայուեցին: Սակայն ամենակարեւոր աշխատանքը գաւթի արեւելեան երկու սիւների վրայի սւաղի շերտերի հեռացումն էր:

Գաւթի քառակուսի սիւները, որոնց բարձրութիւնը 5,5 մ է, ժամանակին եկեղեցու ներսի որմերի հետ ամբողջովին ծածկուել են գաջով: Տարիների ընթացքում սիւների որոշ հատուածների գաջը թափուել էր, եւ տեսանելի էին ինչ-որ որմնանկարների հետքեր: Երկու ամիսների անդադար եւ դժուարին աշխատանքի շնորհիւ հեռացուեցին գաջի շերտերը:

Աշխատանքներն ավարտելիս առաջին սեան արեւմտեան եւ հարաւային, իսկ երկրորդ սեան արեւմտեան եւ հիւսիսային ճակատներում ի յայտ է գալիս չորսական որմնանկար: Դրանք տարածաշրջանում եզակի են մարդկային, կենդանական, բուսական եւ երկրաչափական գունաւոր պատկերներով:

Սիւն 1, որմնանկար համար 1

Սոյն որմնանկարը գտնւում է սեան հարաւային նիստի վերին հատուածում՝ ներառուած շրջանակի մէջ (չափ.՝ 79 x 90 սմ): Պատկերուած են մի տղամարդ եւ մի կին՝ կանգնած, մերկ վիճակում: Նրանց միջեւ սրճագոյն մի ծառ է: Ադամն ու Եւան են՝ շրջապատուած բոյսերի պատկերներով: Ցաւօք, որմնանկարը վնասուած է: Պատկերի քառանկիւնի շրջանակը զարդարուած է բուսազարդերով:

Գաւթի արեւելեան սիւները՝ համար 1 եւ 2, նախքան սւաղի շերտի հեռացնելը և սւաղի հեռացման աշխատանքը (լուս.՝ յօդւածագիրների, 2015 թ.)



1 եւ 2 սիւների որմնանկարների գծանկարները

Որմնանկար համար 1՝ Ադամի եւ Եւայի պատկերը

Սիւն 1, որմնանկար համար 2

Սոյն որմնանկարը գտնւում է սեան հարաւային պատին՝ թիվ 1 որմնանկարի ներքո՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Մասամբ ոչնչացել է: Պահպանւած կենտրոնական հատուածում երեւում են մի շեղանկիւն եւ բուսապատկերներ:

Սիւն 1, որմնանկար համար 3

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւմտեան նիստին՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Պատկերւած է կանգնած մի մարդ՝ նարնջագոյն թիկնոցով եւ լուսապսակով, իսկ նրա մօտ՝ աւելի փոքրահասակ մարդ, ուսին՝ կապոյտ թիկնոց, որի մեծ մասը ոչնչացել է[10]: Շրջանակի վերեւի մասում երեւում են հրեշտակների թեւեր եւ բուսականութեան պատկերների հետքեր:

Սիւն 1, որմնանկար համար 4

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւմտեան նիստին՝ նախորդից ցած՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Նման է սեան հարաւային նիստի ներքեւի որմնանկարին, բայց աւելի լաւ վիճակում է:

Սիւն 2, որմնանկար համար 5

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւմտեան նիստի վերեւի հատւածում՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Պատկերւած է հեծեալ, որն ունի երկար թիկնոց, կարմիր եւ կանաչ գոյնի հանդերձանք: Նրա դիմաց եւ շրջանակի ձախ կողմում կա երկու եղեւնի: Շրջանակի ներքեւի մասում առասպելական ինչ-որ կենդանու պատկեր է, իսկ դրանից ցած՝ հայերէն վեցտողանի արձանագրութիւն: Շրջանակի վրայ առկա են բուսազարդեր:

Սիւն 2, որմնանկար համար 6

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւմտեան նիստի համար 5 որմնանկարի տակ՝ 79 x 90 սմ քառանկիւնի շրջանակի մէջ: Ցաւօք, շատ քիչ բան է պահպանւել: Հաւանաբար այն պէտք է նման լինի միւս սեան ներքեւի հատւածի որմնանկարին:

Սիւն 2, որմնանկար համար 7

Սոյն որմնանկարը գտնւում է սեան հիւսիսային նիստի վերեւի հատւածում՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Աջ կողմում պատկերւած է նստած մի մարդ, որի գլխավերեւում երեւում է ինչ-որ կենդանու պատկեր (վնասւած է): Նրանից ձախ եւ նրա դիմաց կանգնած է մէկ ուրիշ մարդ: Երկուսն էլ ունեն կապտագոյն հանդերձանք:

Սիւն 2, որմնանկար համար 8

Սոյն որմնանկարը գտնւում է սեան հիւսիսային նիստի նախորդ պատկերի տակ՝ 79 x 90 սմ քառան-

10 Նկարագրութիւնը ճիշտ չէ, որմնանկարում պատկերւած է Յիսուս Մանուկը Մարիամ Աստուածածնի գրկում («Վարձք»-ի խմբագրակազմ):

Որմնանկարներ համար 1 եւ 2

Որմնանկարներ համար 3 եւ 4



Որմնանկարներ համար 5 եւ 6

Որմնանկարներ համար 7 եւ 8

կիւնի շրջանակի մէջ: Նրանից գրեթէ ոչինչ չի պահպանուել: Հաշուի առնելով միւս որմնանկարների ստորին պատկերները՝ հաւանաբար սա եւս պիտի միւսների նման լինի:

Եզրակացութիւն

Հաֆբւանի Սբ. Գէորգ եկեղեցու որմնանկարների բացայայտումը կարեւոր իրադարձութիւն է Իրանի հիւսիսարեւմտեան շրջանի պատմութեան չպարզուած բաժինները լուսաբանելու համար: Սոյն շրջանի պատմական եկեղեցիների մեծ մասը կառուցել են Սեֆեան տիրապետութեան շրջանում Շահ Աբասի հրամանով Իրանի կենտրոնական հատուածներ եւ Ուրմիոյ լճի շրջակայք գաղթած հայերը[11]: Եկեղեցիները նիւթական սղութեան պատճառով զուրկ են եղել զարդարանքներից, ինչպէս նաեւ ճարտարապետական բարդ լուծումներից: Պարզապէս կառուցուել են որպէս պարզ աղօթատեղիներ: Այնուհանդերձ, ինչպէս Խոյի Ֆանայի եւ Սալմաստի Հաֆբւան գիւղերի եկեղեցիները, մի քանիսն ունեն գեղարուեստական եւ ճարտարապետական զարդարանքներ: Նկատի ունենալով տարածաշրջանի պատմական կարեւորութիւնը եւ Հաֆբւանի եկեղեցու իւրայատուկ դիրքը՝ բացի սիւներից, հաւանաբար որմերին եւս պիտի լինեն պատկերներ, իսկ դրանք երեւան կգան միայն սւաղի շերտերը հեռացնելուց յետոյ: Յոյս ունենք շուտով վերսկսել մաքրման աշխատանքները, քանի որ եկեղեցու ներսի որմերի որոշ մասերի (ինչպէս հիւսիսային պատինը) գաջը թափելուց յետոյ երեւան են եկել մարդկային պատկերներ, որոնք, հնարաւոր է, լինեն ընդարձակ որմնանկարի մի փոքր մասը: Չի բացառւում, որ տարածաշրջանի՝ հայերի կողմից աւելի ուշ նորոգւած միւս կանգուն եկեղեցիներում եւս լինեն որմնանկարներ, որոնց գեղարուեստական կարեւորութեանը ուշադրութիւն չեն դարձրել, եւ դրանք սւաղուել են:

Ակնյայտ է իրանական եւ իսլամական ճարտարապետութեան ազդեցութիւնն Իրանի հիւսիսարեւմտեան եկեղեցիների ճարտարապետութեան վրայ եւ հակառակը: Սոյն ազդեցութիւնը կարելի է տեսնել որմնանկարներում առկա բուսականութեան պատկերներում, ինչպէս Ֆանայի եւ Հաֆբւան գիւղերի եկեղեցիներում: Սոյն որմնանկարներն ուսումնասիրելով, ըստ երեւոյթին, հնարաւոր կլինի պարզել իրանական-իսլամական եւ հայկական մշակոյթների փոխազդեցութիւնը:

Երկրորդ զեկոյց, 2018 թ.

Ի յաւելումն 2015 թ. ուսումնասիրութեան ընթացքում յայտնաբերւած ութ որմնանկարների՝ 2018 թւականին՝ երկրորդ փուլի ուսումնասիրութեան ժամանակ, սիւների վրայ յայտնաբերւեցին եւս ութ որմնանկարներ, որոնց մի մասը վնասւած է: Գաւթի հիւսիսային եւ հարաւային որմերի գաջի սւաղները հեռացնելով՝ երեւան եկան այլ որմնանկարներ, եւ պարզւեց, որ սոյն մասի որմնանկարները թերի են: Հաւանաբար արւեստագէտը ցանկացել է առաջին հերթին աւարտին հասցնել այն մասերը, որոնք տեսանելի են եղել եկեղեցին մուտք գործողների համար: Արեւմտեան երկու սիւների (համար 3 եւ 4) ստորին մասի որմնանկարները եւս նման են արեւելեան երկու սիւների (համար 1 եւ 2) նոյն հատւածի որմնանկարներին, իսկ վերեւինները թեմատիկ առումով տարբեր են:

Սիւն 3, որմնանկար համար 9

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւմտեան նիստին՝ 79 x 90 սմ քառանկիւնի շրջանակի մէջ, որից շատ բան չի պահպանուել: Տեսանելի են միայն երեք մարդկանց գլուխներ, որոնցից երկուսն ունեն երկար մորուք եւ լուսապսակ: Հաւանաբար առաքեալներից կամ քրիստոնէութեան սրբերից են:



Համար 1-6 համարակալւած սիւները և պատերը

11 Ուրմիո լճի շրջակայքում՝ Սալմաստ և Ուրմիա գաւառներում, հայերը եկեղեցիներ են կառուցել՝ սկսած Դ դարից: Կարծում ենք՝ դրանք պետք չէ նոյնացնել Իրանի կենտրոնական հատւածներում Շահ Աբասի կողմից ԺԷ դարում բնակեցւած հայերի կառուցած եկեղեցիների հետ («Վարք»-ի խմբագրակազմ):

Միւն 3, որմնանկար համար 10

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւմտեան նիստի նախկին պատկերի տակ՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Այն համեմատաբար լաւ է պահպանւել: Ունի կենտրոնում շեղանկիւն գծագրութեան եւ տարբեր բոյսերի պատկերներ:

Միւն 4, որմնանկար համար 11

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւելեան նիստին՝ 79 x 90 սմ քառանկիւնի շրջանակի մէջ: Մասամբ լաւ է պահպանւել: Սլացող հեծեալ է՝ երկար մորուքով, նարնջագոյն թիկնոցով, որը երկու ձեռքով բռնել է սանձը: Ամենայն մանրամասնութեամբ պատկերւած են ձին եւ հեծեալը:

Միւն 4, որմնանկար համար 12

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւելեան նիստին՝ նախորդ պատկերի տակ՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Համեմատաբար լաւ է պահպանւել: Ինչպէս միւսները, այն եւս բաղկացած է բուսական եւ երկրաչափական պատկերներից:

Միւն 1, որմնանկար համար 13[12]

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւելեան նիստին՝ 79 x 90 սմ քառանկիւնի շրջանակի մէջ: Այն լաւ է պահպանւել: Որմնանկարում պատկերւած է գահին նստած մի կին, գրկին՝ դեղնագոյն լուսապսակով մի մանուկ, այսինքն՝ Սբ. Մարիամ Աստուածածինը եւ մանուկ Յիսուս Քրիստոսը: Նրանց գլխավերեւում պատկերւած է երկու հրեշտակ, որոնց ձեռքին մի թագ կա: Աստուածածնի գլխի հետեւում բողբոջները բացւած կարմիր եւ դեղին գոյնի ծաղիկներ են: Ինչպէս միւս, այս որմնանկարի շրջանակը եւս զարդարւած է բոյսերով:

Միւն 1, որմնանկար համար 14[13]

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւելեան նիստին՝ նախորդ պատկերի տակ՝ 79 x 90 սմ շրջանակի մէջ: Միւս որմնանկարների նման ունի բուսաերկրաչափական պատկերներ:

Միւն 2, որմնանկար համար 15

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւելեան նիստին՝ 79 x 90 սմ քառանկիւնի շրջանակի մէջ: Վերեւի մասն ամբողջովին ոչնչացւել է: Պատկերւած ձիաւորը ձեռքի երկար նիզակը մտցնում է ձիու ոտքերի տակ ընկած առասպելական կենդանու բերանը: Ցաւօք, վերեւի մասից հնարաւոր չի եղել սւաղն ամբողջովին հեռացնել:

Միւն 2, որմնանկար համար 16

Սոյն որմնանկարը գտնւում է սեան արեւելեան նիստին՝ նախորդ որմնանկարի տակ՝ 79 x 90 սմ քառանկիւնի շրջանակի մէջ: Շատ քիչ բան է երեւում, սակայն պահպանւած հատւածը պարզում է, որ այն միւս սիւների ներքեւի հատւածի որմնանկարների կրկնութիւնն է:

Որմնանկարներ համար 9 և 10

12 Սա 2015 թ. առաջին զեկոյցի համար 3 որմնանկարն է («Վարձք»-ի խմբագրակազմ):

13 Սա 2015 թ. առաջին զեկոյցի համար 4 որմնանկարն է («Վարձք»-ի խմբագրակազմ):

Որմնանկարներ համար 11 և 12



Որմնանկարներ համար 13 և 14

Գաւթի հարաւային պատի որմնանկարները

Հաֆթաւանի եկեղեցու ամենակարեւոր որմնանկարը գտնւում է գաւթի հարաւային նիստին՝ լուսամուտի շուրջ: Սւաղը հեռացնելուց յետոյ լուսամուտի ներսի որմերին եւս երեւան եկան որմնանկարների հետքեր: Այն բաժանւած է հինգ փոքր մասերի, իւրաքանչիւրն ունի իր շրջանակը: Ամենալաւ պահպանւածները երկուսն են, որոնք գտնւում են լուսամուտի երկու կողմերում, իսկ միւս երեքը նրանց ստորին մասում են եւ վնասւած են:

Որմնանկարներ համար 15 և 16

Հարաւային պատի լուսամուտի աջ կողմի վերեւի հատւածի որմնանկարը

Սոյն որմնանկարը միւսների համեմատ լաւ վիճակում է: Ձիաւորի պատկեր է[14], որի հետեւում նստած է մի մանուկ, ձեռքին՝ երկար նիզակ: Ձին քայլում է բուսականութեան եւ ծաղիկների միջով:

Հարաւային պատի լուսամուտի աջ կողմի ներքեւի հատւածի որմնանկարը

Խիստ վնասւած է: Երեւում է թեւերը բացած, կապոյտ գոյնի մի հրեշտակ: Նրա դիմաց՝ ծառի

14 Սուրբ Սարգսի պատկերն է («Վարքք»-ի խմբագրակազմ):

Գաւթի հարաւային պատի որմնանկարները սւաղը հեռացնելուց յետոյ

Հարաւային պատի լուսամուտի ձախ կողմի որմնանկարները եւ գծանկարը

Հարաւային պատի լուսամուտի աջ կողմի որմնանկարները եւ գծանկարը

վրայ, փոքրամարմին մարդկային կերպարանք է, որի ձեռքին մագաղաթ է, գլխին՝ իւրայատուկ գլխարկ: Նրանից ներքեւ երեւում է վերեւինի նման գլխարկ (հաւանաբար ոչնչացւած մէկ այլ մարդկային պատկերի գլխարկն է): Հրեշտակի թիկունքում կան թփեր եւ տարբեր բոյսեր:

Հարաւային պատի լուսամուտի ներքեւի հատւածի որմնանկարը

Այս որմնանկարը խիստ վնասւել է, որի մնացած հատւածում հնարաւոր է տեսնել աղօթք անող երկարամորուս մի ծերունու:

Հարաւային պատի լուսամուտի ձախ կողմի վերեւի հատւածի որմնանկարը

Այս որմնանկարում ձիաւորի պատկեր է[15], որն ուսերին ունի կարմիր երկար թիկնոց, իսկ գլխին՝

Հարաւային պատի լուսամուտի ներքեւի հատւածի որմնանկարը

15 Սուրբ Գէորգի պատկերն է («Վարձք»-ի խմբագրակազմ):

Գաւթի հիւսիսային պատի որմնանկարը սւաղը հեռացնելուց յետոյ

Դատաւածներ գաւթի հիւսիսային պատի որմնանկարից

դեղին գոյնի լուսապսակ: Նա նիզակահարում է ձիու ոտքերի տակ տապալուած, ոլորուած, երկար պոչով առասպելական մի սողունի:

Հարաւային պատի լուսամուտի ձախ կողմի ներքեւի հատուածի որմնանկարը

Սոյն որմնանկարը վնասուած է, որից մնացել է թամբած ձիու պատկեր: Ըստ երեւոյթին, հեծեալը (պատկերի մեծ մասը ոչնչացուած է, եւ երեւում են կարմիր թիկնոցի մի մասը եւ գլխի մազերը) իջել է ձիուց եւ կանգնած է նրա մօտ: Ձիու գլխավերեւում հայերէն արձանագրութիւն է:

Գաւթի հարաւային պատի վերեւի հատուածներում երեւում են ինչ-որ որմնանկարների հետքեր: Սւաղը հեռացնելուց յետոյ կպարզւի ամբողջական վիճակը:

Գաւթի հիւսիսային պատի որմնանկարները

Եկեղեցում բացայայտուած ամենամեծ որմնանկարը գտնւում է գաւթի հիւսիսային պատի վրայ՝ երկու որմնասիւների մէջ: Այն մի ամբողջական քառանկիւնի շրջանակի մէջ է եւ ունի տարբեր թեմաներ՝ Դատաստանի օրը, դժոխքն ու դրախտը եւ մեղաւորներին պատժելը:

Որմնանկարի ձախ կողմում՝ քառանկիւնի շրջանակի մէջ, կան վեց կլորակներ: Իւրաքանչիւրի մէջ պատկերուած է դէպի աջ նայող մէկական սուրբ: Նրանց գլխավերեւում լուսապսակներ կան: Սոյն պատկերների մօտ կան ծառեր, ծաղիկներ ու թփեր, որոնց մէջ շրջում են ինչ-որ մարդիկ: Հաւանաբար պատկերուած է դրախտը: Ստորին մասում մարդկանց վեց խումբ է՝ իւրաքանչիւրը բաղկացած չորս հոգուց, որոնք կանգնած են վեց առանձին ժայռերի վրայ: Նրանց շրջակայքում կա բուսականութիւն:

Որմնանկարի կենտրոնում մի հրեշտակ է՝ թեւերը բացած եւ կշեռքը ձեռքին: Պատկերուած են նաեւ սատանաներ եւ Դատաստանի թեմայով պատկերներ, որտեղ քննարկում են մարդու գործունէութիւնը: Անկիւնում մի հրեշտակ ծնկի եկած փող է նվագում, որը յիշեցնում է Դատաստանի օրը: Ներքեւի մասում լուսապսակը գլխին մի մեծ հրեշտակ է, նրա հետ նորածին կայ: Հրեշտակի դիմաց մի տարօրինակ արարած է կանգնած, որը մի մագաղաթ է փոխանցում: Նրանից ցած գլխարկով և սեւ պոչով մէկ այլ արարած է պատկերուած:

Հրեշտակի ձեռքի կշեռքի մի կողմում ինչ-որ սեւ գոյնի, իսկ միւս կողմում՝ սպիտակ նիւթ է լցուած: Սեւագոյն կշեռքի շղթայից կախուած են գլխարկներով մարդկային երկու ինչ-որ կերպարանքներ, իսկ նրանցից ցած գավազանը ձեռքին համանման մի պատկեր է:

Որմնանկարի աջ կողմում դժոխք մուտք գործող մեղաւորներն են, ապա խառը պատկերներ են՝ տանջանքների ենթարկուողներ, մեծ կաթսա՝ մէջը կրակ, տարօրինակ կոտոշաւոր արարածներ, օձեր եւ մեղաւորներին տանջելու տեսարաններ: Կենտրոնում՝ գահի վրայ, նստած է կոտոշաւոր սատանան, իսկ նրա դիմաց կանգնած են երեք մերկ սպասաւորներ: Սոյն պատկերի ներքեւում մեղաւորների շուրջը փաթաթուած բազմաթիւ օձեր են եւ երկար ճանկերով, կոտոշաւոր, պոչաւոր մի քանի արարածներ:

Որմնանկարի վերեւի մասում մուգ գոյներով պատկերուած են մեղաւորների տանջանքների բազմաթիւ տեսարաններ, որոնք խոնաւութեան պատճառով վնասւել են եւ խամրել:

Հիւսիսային պատի որմնանկարներում չեն պահպանուել համաչափութիւնները, բայց պատկերները ներկայացնում են գիշեր ու ցերեկ, գեղեցիկ ու տգեղ, դրախտ ու դժոխք, բարի եւ չար, լոյս ու խաւար եւ այլն: Որմնանկարում հրեշտակներին, սրբերին եւ հաւատքով մարդկանց նկարել են ուրախ եւ գեղեցիկ, իսկ չար մարդկանց ու սատանային՝ մուգ եւ սեւ գոյներով: Նկարիչը ջանացել է գովել բարութիւնը եւ գեղեցկութիւնը, իսկ չարութիւնը պախարակել է եւ անընդունելի համարել:

Եզրակացութիւն

Հաշուի առնելով Հաֆբւանի եկեղեցու պատմական եւ տարածաշրջանային դիրքը՝ հաւանական ենք համարում, որ բացի վերոնշեալներից՝ կլինեն նաեւ այլ որմնանկարներ սվաղը չհեռացած որմերի վրայ: Դրանք հետազօտութեան կարիք ունեն: Ներքին պատերի որոշ մասերից, յատկապէս՝ գաւթի հիւսիսային պատի վերեւից, թափւել են գաջի սւաղի որոշ շերտեր, եւ տեսանելի են որմնանկարների հետքեր: Սոյն տարածաշրջանում ակնյայտ է իսլամական եւ իրանական մշակոյթի փոխադարձ ազդեցութիւնն այս եկեղեցու որմնանկարների վրայ: Այն պատկերները, որոնք ներկայացնում են մահւանից յետոյ եւ Դատաստանի թեմաները, գոյութիւն ունեն թէ՛ Իսլամի եւ թէ՛ Քրիստոնէութեան մէջ եւ կարիք ունեն քննարկման եւ վերլուծութեան: Նման որմնանկարներն աւելի խորն ուսումնասիրելով՝ կպարզւեն իսլամական, իրանական եւ հայկական մշակոյթների փոխազդեցութիւնները:

Այժմ ամենակարեւոր աշխատանքներն են սոյն որմնանկարները վերականգնելը եւ պահպանելը, քանի որ ժամանակը, խոնաւութիւնը, ուժեղ լոյսը, այցելուների անուշադրութիւնը լուրջ վնասների պատճառ կարող են դառնել: Հաֆբւանի եկեղեցու որմնանկարներն այժմ էլ լաւ վիճակում չեն. որոշ մասեր խիստ վնասւած են: Բարձիթողի մնալով՝ ամբողջովին կոչնչանան: Ուստի հարկաւոր է ժամ առաջ սկսել նրանց վերականգնման եւ պահպանման աշխատանքները:

Սոյն յօդւածի հեղինակները որմնանկարների վերլուծութեան մասին ոչ մի յաւակնութիւն չունեն: Յօդւածի միակ նպատակը կատարւած աշխատանքը ներկայացնելն է, իսկ որմնանկարների կրօնական վերլուծութիւնը թողնում ենք համապատասխան ոլորտի մասնագէտներին:

ԱԽԹԱԼԱՅԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հեթում քհն. Թարվերդյան

Ախթալայի ամրոցը գտնվում է ՀՀ Լոռու մարզի համանուն քաղաքում: Այն երեք կողմից շրջապատված է բնական ամրություններով, իսկ հյուսիսից՝ բրգաձև բարձր պարիսպներով[1]: Այստեղ է գտնվում Ախթալայի Սբ. Աստվածածին վանքը[2]՝ կառուցված Կյուրիկյանների կողմից Ժ-ԺԳ դդ.:

Հայ մատենագրության մեջ տեղեկություններ են պահպանվել Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքի վերաբերյալ: Այսպես՝ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է հետևյալը. «Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն, ի դուռն եկեղեցւոյն, զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց»[3]:

Հիմք ընդունելով Կիրակոս Գանձակեցու այս հիշատակությունը՝ ուսումնասիրողները եզրակացրել են, որ Պղնձահանքի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցել է Իվանե Ա Երկայնաբազուկ Զաքարյանը: Միայն բանասեր, պատմաբան Ներսես Ակինյանն է նկատել, որ «առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց» արտահայտությունը պետք է հասկանալ «...հոն «քաղկեդոնիկ» հայերու վանք հաստատեց»[4] իմաստով: Ի հավելումն՝ հայագետ, կովկասագետ Պարույր Մուրադյանը գրում է. «Իրոք էլ, եթե ի սկզբանե վանքը կառուցվեր իբրև «վրացի վանս», ապա պատմիչը չէր ընդգծի «առեալ ի հայոց» արտահայտությունը: Նշանակում է՝ արտահայտությունը ուղղակիորեն վերաբերում է վանքին՝ իբրև հոգևոր կենտրոնի և ոչ Պղնձահանք կոչված տեղանքին կամ Ախթալա գյուղին, որ ասել է թե՝ մինչ Իվանե Երկայնաբազուկը միաբնակություն դավանող այս հաստատությունը XIII դարի առաջին տասնամյակներում վերածվել է վրացադավան (քաղկեդոնական) միաբանության»[5]:

Ախթալայի վանքի եկեղեցական համալիրը հարավ-արևմուտքից (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)

Հարգարժան գիտնականն իր տեսակետը հիմնավորում է նաև նրանով, որ Զաքարյաններն այս շրջանում, ըստ էության, Հյուսիսային Հայաստանի փաստացի տերերն էին, ուստի կարիք չունեին հայերից ինչ-որ բան խլելու, առավել ևս, որ նման դեպք ընդհանրապես հիշատակված չէ որևէ սկզբնաղբյուրում. «Պատմական աղբյուրներում ոչ մի անգամ Զաքարյանների տիրությունը որևէ տարածության հանդեպ «առեալ ի հայոց» չի դիտվել և հասկանալի պատճառներով չէր էլ կարող: Հայազգի Երկայնաբազուկները որոշ արձանագրություններում նույնիսկ իբրև թագավոր են հորջորջվում՝ ազգանվեր ու շինարարական արտակարգ բեղուն գործունեությամբ»[6]:

Ի դեպ, անհրաժեշտ է նշել, որ Գանձակեցու հիշատակությունն իրականում վերաբերում է հայոց վանքը վրացապատկան դարձնելու իրողությանը: Պատմիչը հստակորեն տարբերակում է վանքն ու եկեղեցին: Ավելին՝ նրա սույն վկայությունն օգնում է անգամ պարզելու վանական համալիրում առկա շինությունների կառուցման ընթացքը: Պատմիչի հաղորդած տեղեկությունից հստակ է, որ Իվանեն կառուցել է ոչ թե վանքը կամ եկեղեցին, այլ գավիթը, որն այստեղ անվանվում է «ի դուռն եկեղեց-

1 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Երևան, 1986, էջ 599-601:

2 Ախթալայի վանքի մասին Սարգիս արք. Ջալալյանցը գրում է. «Ախտալի: Է մեծանիստ գիւղ ի ձորամիջի, առ ոտն Լալվարու, երկու ժամաւ հեռի ի Ճոճկանայ, ի կողմն արեւմտից:... Մերձ սորա է ուխտն Աստուածամաւր հոյակապ և երկնանման կաթուղիկէիւ, որ զտեսօղն հիացուցանէ զարմացմամբ, մանաւանդ արտաքին չքնաղ քանդակագործութիւնն, բազմօք անցանէ զներկայ ճարտարապետութեամբ: Եկեղեցին է կառուցեալ ի բարձրագոյն վիմի ի վերայ երկուց սեանց. և գաւիթ նորա շրջապատեալ է ամրագոյն պարսպաւ...» (**Ջալալեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփխիս, 1842, էջ 85):

3 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 222: Ի դեպ, պատմիչը վերոնշյալ տեղեկությունը գրեթե նույնությամբ կրկնում է նաև հաջորդող հատվածում. «Եւ զի յառաջ քան զսակաւ ժամանակս մեռեալ էր Իւանէ, տարան թաղեցին զնա ի Պղնձահանքն, զոր իւր շինեալ էր վանս վրաց, առեալ ի հայոց» (նշվ. աշխ., էջ 238):

4 **Ակինեան Ն.**, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951, էջ 3-4 (այսուհետ՝ Սիմէոն Պղնձահանեցի, համապատասխան էջերով):

5 **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 1, էջ 39: Տե՛ս նաև **նույնի**՝ համանուն աշխատությունը, Երևան, 1977, էջ 199-200:

6 Նշվ. հոդվ., էջ 39, ծնթ. 4 և նշվ. աշխ., էջ 199, ծնթ. 4:

ւոյն»[7]: Հիշենք, որ ԺԳ դարում և հատկապես Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում է մեծ տարածում գտել եկեղեցիներին կից գավիթների կառուցումը: Բացի այդ՝ Իվանեի թաղման պարագայում հիշատակվում է, որ նրա մարմինն ամփոփվել է իր իսկ կառուցած եկեղեցում կամ գավթում, այլ ոչ թե հիմնած վանքում: Հետևաբար վանքն արդեն գոյություն է ունեցել նախքան Զաքարյանները, իսկ Իվանեն այն վերցրել է հայերից, դարձրել վրացապատկան և այնտեղ կառուցել կա՛մ եկեղեցին, կա՛մ էլ գավիթը, քանի որ ոչ թե եկեղեցու շուրջն է վանք հաստատվում, այլ, ընդհակառակը, հիմնված վանքում են աստիճանաբար կառուցվում եկեղեցիներ և հարակից տարբեր շինություններ՝ ձևավորելով վանական համալիրը:

Այսպիսով, եթե Գանձակեցու վկայությունը վերաբերում է ոչ թե վանքի հիմնադրմանը, այլ այն հայ քաղկեդոնիկներին կամ վրացադավանների տրամադրելուն, ապա հարց է առաջանում՝ ե՞րբ են կառուցվել վանքն ու հարակից եկեղեցիները:

Վախուշտի Բագրատիոնի արքայազնը (1696-1757) տեղի եպիսկոպոսական աթոռի հիմնադրումը վերագրում է վրաց Վախթանգ Գորգասալ թագավորին (Ե դար), որը, իհարկե, չի կարող հավաստի տեղեկություն լինել, քանի որ, դեպքերի ժամանակակից չէ[8]: Վախուշտին Ագարակի մասին գրում է հետևյալը. «Հաղբատից ցած գտնվում է Ճոճկանի ձորը՝ Լալվար (Լելվար) լեռան տակ, այգիներով լի, մրգաշատ, պտղավետ և օդով սքանչելի: Նրանից ցած՝ դեպի հյուսիս, գտնվում է Ագարակի եկեղեցին, ուր [Վախտանգ] Գորգասալն եպիսկոպոս կարգեց, որ հետագայում Սոմխիթի մետրոպոլիտ և [վրացադավանների] թեմակալը [դարձավ], և որի հոտն էին կազմում Խունանը, Գարդաբանը և Բերդուջ գետ[ի ձորը]: Եկեղեցին գմբեթավոր, մեծակառույց է, այժմ կոչվում է Ախտալա և երեցի տեսչության ներքո է»[9]:

Ախթալայի վանքի հիմնադրման վերաբերյալ պահպանվել է ևս մի ավանդություն, համաձայն որի՝ վանքը կառուցել է Բյուզանդիայի Հերակլ Ա կայսրը (գահակալել է 615-641 թթ.) Խաչափայտի գերադարձի համար դեպի Երուսաղեմ ձեռնարկած արշավանքի ընթացքում: Հավելենք, որ այս ավանդապատումը գրի է առել ռուս հայտնի զինվորական և հետազոտող Ա. Մուրավյովը (ԺԹ դարի առաջին կես): Ըստ նրա՝ այս վայրերի տեղագրությամբ զբաղվող վարդապետներից մեկի (իմա՛ Սարգիս Ջալալյան) ասությամբ՝ Հերակլ Ա-ն, պարսկական

Ախթալայի Տիրամոր որմնանկարը (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

արշավանքի ժամանակ լսելով այստեղ եղած մետաղահանքերի մասին, արդյունահանման համար ուղարկել է հույն հանքափորների: Մուրավյովը հանգում է այն եզրակացության, որ թերևս ավանդությունը կարող է լինել ճշմարտանման, սակայն վանքը, այնուամենայնիվ, պետք է որ հիմնված լինի ԺԲ դարից հետո, և, որպես իր խոսքերի հիմնավորում, վկայակոչում է նույն վարդապետի նշած 1244 թ. արձանագրությունը[10]:

7 Սիմէոն Պղնձահանեցի, էջ 4:

8 Լևոն Մելիքսեթ-Բեկը գրում է. «1724 թվին Վախուշտին իր հոր՝ Վախտանգ VI թագավորի և եղբայր Բաքարի հետ միասին, օսմանցիներից պարտություն կրելուց հետո, գաղթում է Մոսկվա, ուր նվիրվում է գրական-գիտական գործունեության: Ապրելով «Պրեսնյա»-ում, նա վախճանվում է մոտավորապես 1770-ական թվականներին» (**Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 28 (այսուհետ՝ Վրաց աղբյուրները, հ. Գ):

9 Նշվ. աշխ., էջ 80:

10 **Муравьев А.**, Грузия и Армения, ч. II, СПб, 1848, с. 315. Հմմտ. **Մուրադյան Պ.**, նշվ. աշխ., էջ 204:

Ախթալայի Տիրամոր որմնանկարը (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2012 թ.)

Նշենք նաև, որ Ջալալյանցը նույնպես ակնարկում է այս վանքի՝ հույների կողմից կառուցված լինելու մասին՝ առանց հիշատակելու Հերակլ կայսրին:

Ա. Մուրավյովը ներկայացնում է ևս մեկ ավանդություն՝ կապված Պղնձահանքի վանքում գտնվող Վլախերնյան Տիրամոր սրբապատկերի հետ: Ըստ հեղինակի վկայության՝ վանքի կառուցման այս պատմությունը, որը բերանացի փոխանցվել է սերնդեսերունդ, իրեն պատմել են տեղի Մելիքով վրաց իշխանները: Ավանդազրույցի համաձայն՝ պարսկական արշավանքի ընթացքում Հերակլ կայսրը տեղեկանալով, որ մի կողմից սկյութները, մյուս կողմից պարսիկները մոտենում են կայսրության մայրաքաղաքին, երդվում է կառուցել Տիրամորը նվիրված մի վանք այնտեղ, որտեղ կլսի Կ. Պոլսի փրկության լուրը: Ուրախ լուրը նրան հասնում է այն ժամանակ, երբ անցնում էր Ախթալայի մոտով: Ահա այս պատճառով եկեղեցում էր գտնվում Վլախերնյան Տիրամոր պատկերը, քանի որ Կ.Պոլսի շրջափակման ժամանակ հրաշագործ այս սրբապատկերի առջև պատրիարք Սերգին ողջ գիշերն անց է կացնում աղոթքով ու հոգևոր երգեցողությամբ, և հարձակվողները պարտություն են կրում[11]:

Ահա այս ավանդությամբ մեզ հասած հրաշքի հետ է կապվում Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցում առկա որմնանկարը, որն իր գեղեցկությամբ ապշեցնում է այցելուներին: ԺԹ դարի ուղեգիրները, սակայն, տեղեկացնում են որմնապատկերի՝ արդեն վնասված լինելու մասին: Մուրավյովն ինքն էլ վնասված է տեսել այն: Նա գրում է, թե տեղի հույների ասությամբ՝ Լենկ-Թեմուրի զինվորները Սբ. Գևորգի անունը կրող լեռան բարձունքից կրակել են տաճարից ներս և վնասել Տիրամոր խորանի այս պատկերը: Սակայն անհավանական է համարում, որ դա տեղի է ունեցել Լենկ-Թեմուրի ժամանակ, քանի որ այդ շրջանում հրետանի դեռևս գոյություն չուներ: Ենթադրում է, որ դեպքը տեղի է ունեցել 1784 թ. լեզգիների արշավանքի ժամանակ[12]:

Ի դեպ, Կիրիոն եպիսկոպոսը ևս հաստատում է նշված թվականին որմնանկարի վնասված լինելը[13]:

Ախթալայի որմնանկարների և մասնավորապես վերոնշյալի մասին Ե. Լալայանը գրում է. «Պատերը ծածկուած են գեղեցիկ, իւղանկար պատկերներով, որոնք մեծ մասամբ այժմ փչացած են կաթիլքից: Այս պատկերներից ամենանշանաւորն է սեղանի վերև նկարուած Աստուածածինը՝ Մանկիկ Յիսուսը գրկում: Ներկերի գոյները դեռևս հիացուցիչ են, միայն Ս. Կուսի դէմքն ու կուրծքը բծերով ծածկուած

11 Վլախերնյան Տիրամոր զորությամբ կատարված այս հրաշքը բյուզանդական եկեղեցին հիշատակում է Մեծի Պահոց շրջանի հինգերորդ շաբաթվա շաբաթ օրը՝ որպես գոհաբանություն Տիրամորը (**Муравьев А.**, նշվ. աշխ., էջ 323-324):

12 Նշվ. աշխ., էջ 321:

13 **Епископ Кирион**, Ахтальский Монастырь, Тбилиси, 2005, с. 49-50.

են»[14]: Իսկ Հերակլ Ա կայսեր՝ սույն վանքը կառուցած լինելու պարագայում Լալայանը հավելում է. «...տեղական մի ավանդութիւն այս եկեղեցու շինութիւնը վերագրում է Հերակլ կայսրին VII դարում, Պարսից դէմ արշաւած միջոցին»[15]: Այս տողերից պարզ չէ, թե հեղինակն ավանդության ո՞ր տարբերակը նկատի ունի՝ կայսրի Պղնձահանքը կառուցելո՞ւ, թե՞ Տիրամորն ապավինելու:

Ախթալայով անցած ուղեգիրներին տեղացիները պատմել են նաև Սբ. Աստվածածին եկեղեցում պահպանված Վլախերնյան Տիրամոր սրբապատկերի հետ կապված հրաշքների մասին, որոնցից մեկը նկարագրում է Ա. Մուրավյովը՝ միաժամանակ տեղեկացնելով, որ հրաշքը տեղի է ունեցել իր՝ այստեղ գալուց որոշակի ժամանակ առաջ. «Ասում են՝ բարձր ժայռի վրա հոն հավաքող մի աղջիկ ծնողների աչքի առաջ ձորն է ընկնում: Վշտահար ծնողները, երբ սկսում են նրա մարմինը որոնել, տեսնում են, որ մանկական անմիջականությամբ նա շարունակում է հատապտուղ հավաքել, կարծես թե ոչինչ չի եղել»[16]:

Ինչ վերաբերում է Հերակլ Ա-ի՝ այստեղ պղնձահանք հիմնելու մասին ավանդությանը, ապա կարծում ենք, որ Է դարի բյուզանդական կայսրին շփոթել են ԺԸ դարի վրացական նույնանուն թագավորի հետ, որն էլ Պղնձահանքում կազմակերպել է արծաթի և ոսկու արդյունահանումը:

Վանքի հիմնադրմանն առնչվող հաջորդ ավանդությունն ուղղակիորեն կապված է Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկությունների հետ: Համաձայն այս պատումի՝ Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցել է Թամար թագուհին: Ա. Մուրավյովն էլ իր հերթին հիշատակում է մի ավանդություն, ըստ որի՝ Թամար թագուհին հիմնել է ոչ միայն վանքը, այլև սեղանատունը, որի կառուցման ժամանակ նրա հակառակորդները թագուհուն վնասելու մտադրությամբ հանում են այն երկու սյուներից մեկի պատվանդանը, որոնց վրա հիմնված էր կամարը: Սակայն պատվանդան չունեցող սյունը գետնին տապալվելու փոխարեն երկինք է բարձրանում, իսկ կամարը մեկ սյան վրա մնում է այնքան ժամանակ, մինչև թագուհին երկրորդն է կանգնեցնում[17]: Ռուս հեղինակը եկեղեցու որմնանկարների շարքում մատնանշում է նաև Թամար թագուհու սրբապատկերը, որտեղ նրա գլխին լուսապսակ է, իսկ թագուհու կողքին կանգնած են ամուսինը՝ Դավիթ Սոսլանին, և որդին՝ Գեորգին: Մեկնաբանելով որմնապատկերը՝ նա կարծում է, որ վերջին երկուսի ով լինելը որոշվում է նրանց՝ թագուհու նկատմամբ պատկերված մերձավորությամբ[18]:

Կիրիոն եպիսկոպոսը, սակայն, չի ընդունում այս տեսակետը և ենթադրում է, որ որմնանկարում Եկատերինա նահատակուհին է[19]:

Վանքի հիմնադրմանը վերաբերող ժամանակային այս բազմաշերտությունը պատճառ է դարձել, որ ԺԹ դարի հայ հետազոտողները չեն կարողացել հստակ ասել, թե երբ և ով է հիմնադրել այն: Հաղպատ-Սանահին և շրջակա վայրեր կատարած մի ուղևորության ընթացքում վանք է այցելել նաև «Կաթողիկոսական դիվան»-ի հրատարակիչ Գյուտ քահանա Աղանյանցը և այն այսպես բնորոշել. «...Ախտալա հինավուրց վանքը, որ յոյներին է պատկանում»[20]: Վանքի կառուցման ժամանակի առնչությամբ նրա տեսակետը հիմնված է ճարտարապետական առանձնահատկությունների և արձանագրություններում պահպանված տեղեկությունների վրա. «Տաճարի մէջ ոչ մի յիշատակարան չկայ, որից իմացուէր, թէ որ դարու եւ ժամանակի գործ է: Սակայն մերձակայ ուրիշ վանքերի արձանագրութիւններին նայելով՝ մեզ թւում է, թէ Ժ դարից հին չէ»[21]:

Վախուշտի արքայազնի տեսակետը, թե Ախթալայի վանքը հիմնվել է Ե դարում, զարմանալիորեն վավերական է համարել Ե. Լալայանը՝ ենթադրելով, որ նշյալ դարում «...Ախտալի Պղնձահանքում հին ժամանակից ...կանգնած է եղել եկեղեցի, որի մօտ հետզհետէ շինուել են միւս եկեղեցիները, և ի վերջոյ Ս. Աստուածածին մայր եկեղեցին, հաւանականօրէն Իւանէի ժամանակ և սրա ջանքով, երբ Թամար թագուհու յաղթական թագաւորութեան միջոցին ճարտարապետութիւնը դարձեալ սկսել էր ծաղկել»[22]:

Վրացի հետազոտող Ե. Թաղայշվիլին ԺԹ դարավերջին հայտնել է այն տեսակետը, ըստ որի՝ Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցին չէր կարող Իվանեն կառուցած լինել, քանի որ սույն հորինվածքը բնորոշ է Ժ-ԺԲ դարերի ճարտարապետությանը, բայց ոչ թե միայն ԺԲ դարինը: Միաժամանակ հավելում է, որ այս հանգամանքը, սակայն, չի կարող նսեմացնել հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները[23]: Ս. Ջալալյանցը թեև չի անդրադարձել վանքի կառուցման ժամանակային հարցին, սակայն խնդրի առնչությամբ երկմտանքով է գրել. «Այս տեղի երբեմն եղեալ է եպիսկոպոսարան յունաց, այլ թէ իսկապէ՞ս յունաց է, թէ հայոց՝ չէ յայտ, ըստ որում չիք ճշմարիտ վէպ և կամ արձանագիր. միայն մերձ սորա գոյ մատուռ և խաչ փոք-

14 **Լալայեան Ե.**, Բորչալուի գաւառը, «Ազգագրական հանդես», գիրք Է-Ը, Տփխիս, 1901, էջ 430:
15 Նշվ. աշխ., էջ 429:
16 **Муравьев А.**, նշվ. աշխ., էջ 322:
17 Նշվ. աշխ., էջ 326-327:
18 Նշվ. աշխ., էջ 329:
19 **Епископ Кирион**, նշվ. աշխ., էջ 70:
20 **Աղանեանց Գ.**, Հնից-նորից (հնախուզական ուղևորութիւն), «Լումայ», գիրք Ա, Տփխիս, 1900, էջ 242:
21 Նշվ. հոդվ., էջ 245:
22 **Լալայեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 429:
23 **Такайшвили Е.**, Грузинские надписи Ахталы, “Сборник материалов для описания древностей и племен Кавказа”, вып. XXIX, Тифлис, 1901, с. 143.

Կյուրիկե Բ-ի դստեր՝ Մարիամի խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

րիկ, գրեալ ի վերայ խաչին՝ կանգնեցաւ խաչս օգնական Աւագայ, յառաջնորդութեան Համազասպայ, և ի ծինամծղարութեան Պետրէի, ի թուին հայոց ՈՂԳ-ին»[24]:

Պղնձահանքի վանքի հետ կապված վիճահարույց խնդիրներին իրենց ուսումնասիրություններում համառոտ անդրադարձել են այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են Պ. Իոսելիանին[25], Ա. Երիցյանը[26], Լ. Մելիքսեթ-Բեկը[27], Հ. Ոսկյանը[28], Ս. Էփրիկյանը[29] և այլք, սակայն վանքի կառուցման ստույգ ժամանակը դեռևս հայտնի չէ:

Ախթալայի վանքի պատմության ուսումնասիրության համար կարևոր է 1188 թ. կերտված խաչքարի[30] արձանագրությունը, որի առաջին հրապարակողներից է Լ. Մելիքսեթ-Բեկը[31]: Համաձայն խաչքարի թիկունքին 11 տողով փորագրված արձանագրության՝ Պղնձահանքի (Ախթալայի) Սբ. Աստվածածին վանքը նշված թվականին կառուցել է Կյուրիկե Բ-ի դուստր Մարիամը.

Ես՝ Մարիամ, դ/ուստր Կիւրիկէ/ի, կանգնեցի զ/Պղընձահան/ացս Հոդհա/տի Ս(ուր)ք Ա(ստուա)-ծած/ինս, որք եր/կրպագէք, զ/մեզ յաղաւ/թս յիշեցէք: / Թուի(ին) ՈԼԷ (1188) էր[32]:

Պ. Մուրադյանը հաստատակամորեն պնդում է, որ «...սուրբ Աստուածածինս ասելով՝ առաջին հերթին պետք է հասկանալ այդ խաչքարը, որին պիտի երկրպագեին, սակայն «զՊղնձահանացս հոդհատի սուրբ Աստուածածինս» ամբողջական արտահայտությունն իրավունք է տալիս մտածելու, թե խոսքը վերաբերում է Պղնձահանքի բուն կառույցին՝ Ս. Աստվածածին վանքին, այլապես ստիպված պիտի լինենք այդ միջավայրում մեկ ուրիշ «Պղնձահանք» տեղանուն փնտրել: «Հոդհատ» տերմինի գոյությունը ևս, որ մեր մատենագիտության մեջ առաջին անգամ է վկայվում և չկա Նոր Հայկազյան բառարանում, հանք ունեցող տեղանք է մատնացուցում (հող+հատ (հատանել)-հողափոր, հանքափոր նշանակությամբ)»[33]: Մենք նույնպես համակարծիք ենք, որ վերոնշյալ խաչքարը վերաբերում է Պղնձահանքին[34]:

ԺԳ դարասկզբին Պղնձահանքի վանքն այնպիսի մեծ հռչակ էր վայելում, որ, օրինակ, 1216 թ. այնտեղ էր պահվում Պռոշ կողմնակալի որդու՝ Վասակ իշխանի ընծայած Օրբելյանների «աստուածընկալ սուրբ խաչը», որը «...կայր ի պահեստի ի Պղնձահանքն»[35]: Հատկանշելի է, որ այդ խաչը, ունենալով նյութական բարձր արժեք, ի պահ է տրվել Պղնձահանքին՝ իբրև նշանավոր կենտրոնի: Եվ, իրոք, խաչի նկատմամբ ի հայտ եկած հավակնություններն այնքան են մեծանում, որ Իվանեն Դվինում նախադեպը չունեցող կազմով «դատաստան» է հրավիրում, որտեղ Ճղոնդիդելիին ու Վարձիայի եպիսկոպոսին հավասար իրավունքներով հիշվում է նաև «...զծինամծղարն Պղնձահանիցն...»[36]:

Հարկ է ասել, որ թվարկված գրականության մեջ հաճախ է նշվում, որ Սբ. Աստվածածինը եղել է վրացական վանք: Ըստ Պ. Մուրադյանի՝ «Երկար ժամանակ բանասիրությանը հայտնի չէր, որ «վրաց վանք», «վրացի» ասելով՝ պատմական Հայաստանի սահմաններում նկատի են ունեցել ոչ միայն իրապես ազգությամբ վրացի, այլև վրացի ըստ դավանության, վրացադավան հայազգի: Այս գաղտնիքի բանալին ակադեմիկոս Ն. Մառը հայտնաբերեց հայ քաղկեդոնականությանը նվիրված իր նշանավոր աշխատությամբ[37]: Պղնձահանքի վերաբերյալ հավաստի է Գանձակեցու տեղեկությունը, «զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց»[38], բայց այդ չի նշանակում, թե վանքը դարձավ զուտ վրացազգի հոգևորականների

24 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 85:
25 **Иосселиани П.**, Путевые записки от Тифлиса до Ахталы, Тифлис, 1850, с. 23-24.
26 **Ерицов А.**, Монастырь Ахтала, “Кавказская старина”, № I, Тифлис, 1872, с. 20-24.
27 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 64-69, ծնթ. 8:
28 **Ոսկեան Հ.**, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 2-3:
29 **Էփրիկեան Ս.**, Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 75:
30 Հարկ է նշել՝ վերոնշյալ խաչքարը, որը գտնվում էր Ախթալա քաղաքի թիվ 2 դպրոցի բակում, Մշակույթի նախարարության աջակցությամբ վանքի տարածք է տեղափոխվել 2017 թ. մարտի 4-ին:
31 Վրաց աղբյուրները, հ. Բ, էջ 68:
32 Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ (այսուհետ՝ ԴՀՎ IX), Երևան, 2012, էջ 261, արձ. 548:
33 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 41-42 և նշվ. աշխ., էջ 202:
34 Նշվ. հոդվ., էջ 42 և նշվ. աշխ., նույն տեղում:
35 Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան** արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 353:
36 **Ստեփաննոս Օրբէլեան**, էջ 355: Տե՛ս նաև **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 42 և նշվ. աշխ., էջ 202-203:
37 **Марр Н. Я.**, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, Санкт-Петербург, 1905, с. 72-74.
38 **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 222:

միաբանություն»[39]: Ըստ Կիրակոս Գանձակեցու և Վարդան Պատմիչի հաղորդած տեղեկության՝ Իվանե Երկայնաբազուկն ու նրա որդին՝ Ավագը, թաղված են Պղնձահանքում՝ «ի դուռն եկեղեցւոյն»[40]: Երկայնաբազուկներին այստեղ հուղարկավորելու հանգամանքն ինքնին վկայում է, որ վանքն ու միաբանությունն օտար չեն եղել բուն հայկական միջավայրին[41]:

Հարկ է նշել, որ Լ. Մելիքսեթ-Բեկը Կիրակոս Գանձակեցու և Վարդան Պատմիչի հիշատակած և Իվանե Զաքարյանի անվանն առնչվող Պղնձահանքը նույնացրել է Թայչարուխ (այժմ՝ Մեղրաձոր) գյուղի մոտ գտնվող վանքի[42] հետ: Սակայն Պ. Մուրադյանը, հակադարձելով նման կարծիքին, իրավամբ նկատում է. որ եթե Իվանեն ու նրա որդին թաղված են հայերից առած և «վրացի վանս» հաստատած մենաստանում, ապա, ինքնըստինքյան, վերանում է այդ նույնացումը[43]:

Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան հատակին պահպանվել է Մովսես քահանայի տապանաքարը (սկզբնապես խաչքար է եղել), որի վրա առկա է հետևյալ արձանագրությունը.

զՄոսէս քա/հանա յաղա/ւթս յիշէսց/իք[44]:

Պղնձահանքի վանքի հետ անմիջական առնչություն ունի ևս մի խաչքար, որը գտնվում է Ախթալայից արևելք՝ գյուղատեղիում՝ մատուռի մոտ: Թիկունքին և հարավային կողին փորագրված արձանագրությունը հաղորդում է հետևյալը.

Ի թվիս ՈՂԴ (1245) կա/նգնեցաւ սուրբ տէրո/ւնականս յարե/ւշատուքի(ւն) Աւ/ագին եւ ծինա/մ-ծղաւրութե(ան) /Պետրէի եւ հա/յրապետութե(ան) Հա/մ(ա)զասպա, ես՝ Յա/կոբ էրէց, կանգն/եցի զխաչս ի հա//ն(գ)ըստ/արան/ի մերո/յ. զի/ս եւ / զամ/ուսի/ն իմ յ/աղաւթ/ս յի/շեցէք[45]:

Վանքի մերձակայքում գտնվող եկեղեցին և 1245 թ. խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2017 թ.)

Քննելով արձանագրությունը՝ նշենք, որ *«ծինամ-ծղաւրութեան Պետրէի»* արտահայտությունը ցույց է տալիս խաչքար կանգնեցնողի կապը Պղնձահանքի հետ: Ինչ վերաբերում է հիշատակված անձանց, ապա նրանցից Ավագն Իվանե Զաքարյանի որդին է, Պետրեն՝ Ախթալայի վանքի վանահայրը, Համազասպը՝ Հաղբատի վանքի առաջնորդը: Նշենք նաև, որ վիմագիրը հավաստում է Պղնձահանքում հայ քաղկեդոնականների ներկայությունը թե՛ 1245 թ. և թե՛ դրանից առաջ: Կարծում ենք, որ այս տեսակետը հաստատվում է նաև նույն մատուռի հարավային մուտքի բարավորի արձանագրությամբ.

Կամաւ բարերա/ւրին Ա(ստուծո)յ, յամս ա(ստուա-ծ)ազաւր արք(ա)է / Դէմէտրի, առաջնորդութե(ա)ն / տ(է)ր Յովանիսի, ծինամծղաւրութե(ա)ն Սիմո/նա, ղեկանաւզութե(ա)ն Աւքրոպիրին, ես մեղ...[46]:

Թեև այս արձանագրությունն անավարտ է և անթվակիր, սակայն նրա թվականը որոշվում է նրանում հիշված անձանց ժամանակագրությամբ: Այսպես՝ վրաց Դեմետրե Բ Անձնուրաց թագավորը գահակալել է 1271-1289 թթ., տեր Հովհաննեսը Հաղբատի վանքի առաջնորդությունը վարել է՝ սկսած 1257 թ.-ից առնվազն մինչև 1288 թ.: Հիշվում են նաև Ախթալայի առաջնորդ Սիմոնը և վանահայր (ղեկանոզ) Օքրոպիրը: Ըստ այդմ, արձանագրությունը փորագրվել է 1271-1288 թթ. ընթացքում: Ինչ վերաբերում է նրանում օգտագործված վրացական տերմիններին, ապա այդ մասին Պ. Մուրադյանը գրում է. «XII-XIII դդ. հայ քաղկեդոնականների շրջանում գործածական էին վրացական

39 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 42-43:

40 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 238, 321: Տե՛ս նաև Մեծին **Վարդանայ Բարձրբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 194: Ի դեպ, ԺԹ դարավերջին արդեն անհետացած են եղել Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանի և որդու՝ Ավագի տապանաքարերը (**Ерицов А.**, նշվ. հոդվ., էջ 23: **Լալայեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 430):

41 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 43:

42 Թեժառույքի վանքը գտնվում է Մեղրաձոր գյուղի դիմաց՝ Ծաղկունյաց լեռնաշղթայի անտառապատ հրվանդաններից մեկի գագաթին՝ 2000 մ բարձրության վրա: Կառուցվել է Իվանե և Զաքարե Զաքարյան իշխանների օրոք՝ 1190 թ.: Անվան բաղադրիչները *թեժ* և *առու* արմատներն են, քանի որ վանական համալիրը կառուցվել է Մարմարիկ և Մեղրաձոր գետերի թեժ, արագահոս հատվածում: Անվան հայկական տարբերակը կիրառելի է եղել մինչև ԺԷ դարը: Հետագայում Թեժառույքում հաստատված թուրք-կարակալպակները բնակավայրի անվանումը նախ աղավաղել, ապա ժամանակի ընթացքում թյուրքերենին հարմարեցնելով՝ կոչել են Թայչարուխ, որը կազմված է թայ՝ զույգի յուրաքանչյուր հատը և չարուխ՝ կաշվե կոշիկ բառերից:

43 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 41 և նշվ. աշխ., էջ 201:

44 ԴՀՎ IX, էջ 260, արձ. 544:

45 **Լալայեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 431: Տե՛ս նաև ԴՀՎ IX, էջ 261, արձ. 546:

46 **Աղանեանց Գ.**, նշվ. հոդվ., էջ 247: Տե՛ս նաև ԴՀՎ IX, էջ 260, արձ. 545:

բառեր ու տերմիններ, հատկապես կապված եկեղեցու հետ»[47]: Ի դեպ, սույն օրինաչափությունը նա նկատել է նաև Անիում: Ինչ վերաբերում է «ծինամծղաւր» և «դեկանաւզ» տերմիններին, ապա Պ. Մուրադյանը գրում է, որ նշյալ «...տերմինների տակ չի կարելի միայն վրացազգի գործիչ հասկանալ, երբ դրանք կիրառված են հայկական սկզբնաղբյուրներում, այլ՝ նրանց վրացադավանությունը, թեև հայ քաղկեդոնական մենաստաններում վրացի հոգևորականների առկայությունն ամենևին բացառված չէ»[48]:

Հատկանշական է, որ "Православная энциклопедия"-ի հատորներից մեկում շեշտվում է որպես Հյուսիսային Հայաստանի քաղկեդոնիկ հոգևոր կենտրոնն ու ամենախոշոր վանք և վրաց եկեղեցու թեմական կառույցի մաս: Նաև ենթադրվում է, որ Պղնձահանքը ԺԴ դարի 30-ական թվականներից մտել է Ախթալայի մետրոպոլիտության մեջ և ենթարկվել Մցխեթիի կաթողիկոսարանին[49]:

Ի վերջո, խնդրի լուսաբանման համար առանձնակի կարևորություն ունի Մաթոսավանքի մուտքի ճակատակալ քարին փորագրված 1247 թ. շինարարական արձանագրությունը[50], որի մեջ հիշատակվում են հենց այն անձինք, որոնց մասին խոսեցինք վերոբերյալ երկու արձանագրության առնչությամբ: Այստեղ կարդում ենք.

Կամաւն ա(ստուծ)յ | ես՝ Յորդանան, շինեցի | զեկեղեցիս ի թվ(ին) ՈՂԶ (1247), իշխանու|թե(ան) Աւագին, ողորմութ(եամ)ք Պըղընձահանացն | Ա(ստուա)ծածնին եւ առաջնորդութ(եամ)ք Պետրէի եւ տ(է)ր | Համազասպա: Որք ե(ր)կրպագէք, յիշե(ցէք) ի Ք(րիստո)ս զծն|ողք մեր զԵնոքն եւ զամուսին իւր, եւ զՄխիթար, Մե|նոս, Զորնաթանելն, Յորդանան, Հռ(ի)մսիմ, Յոհան, Մարիան(է)ի:

Նույն Մաթոսավանքի արևմտյան մուտքի հարավային կողին պահպանվել է նաև հետևյալ արձանագրությունը.

Ես՝ Պետրէ, եւ Համազասպ հաստատեցաք զԾովքն եւ Դարատանաք (Դարամանա՞ք) ժողովուրդ Աստուածածնիս: Ով որ խափանէ, դատի ի տեառնէ[51]:

Ուրեմն, իրոք, հանձին «Պետրէ ծինամծղաւրի», Հորդանանի և Պղնձահանքի մյուս գործիչների, գործ ունենք հայ քաղկեդոնականների հետ[52]:

Հարկ է նշել, որ ԺԴ դարից սկսած՝ Պղնձահանք անվանումն այլևս չի հիշատակվում, իսկ վանքը զրկվում է նախկին վայելչությունից: Ավանդության համաձայն՝ այն ավերել է Լենկ-Թեմուրը (1336-1405): Այս մասին վկայում է ոչ միայն ավանդությունը, այլև 1837 թ. վրացական մի աղբյուր, որի հեղինակին պայմանականորեն անվանում են անանուն հնագետ: Նրա երկում կարդում ենք հետևյալը. «Հաղբատից դեպ Հյուսիս կա Ագարակի եկեղեցին, որն այժմ Ախտալա է կոչվում և որի գմբեթը քանդել է Լանգ-Թեմուրը»[53]:

Այնուհետև Ախթալա գյուղը հիշատակվում է վրաց Ալեքսանդր Ա Մեծ թագավորի (1412-1442 թթ.) հրովարտակում՝ ի թիվս Մցխեթի տաճարին նվիրված գյուղերի և ավանների[54]:

Ըստ ֆրանսիացի արևելագետ Մ. Բրոսեի դիտարկման՝ վերոբերյալ հրովարտակի արձակման տարեթիվը խեղաթյուրված է, քանի որ 1398 թ. Վրաստանի թագավորը Գեորգի Է-ն էր և ոչ թե Ալեքսանդր Ա-ն, իսկ նշյալ թվականին Դոմենտի անվամբ վրաց կաթողիկոս չի եղել: Բրոսեն առաջարկում է թվագրումը փոխել 1497-ի՝ ենթադրելով, որ այն տրված է Կախեթի թագավոր Ալեքսանդր Ա-ի (1476-1511) կողմից, իսկ Դոմենտի (ԺԶ դար) կաթողիկոսը հիշատակվում է, քանի որ, ըստ ամենայնի, հրովարտակն ընդօրինակվել է նրա օրոք: Ի դեպ, նույն՝ 1398 թվականն է նշում նաև Ա. Երիցյանը[55], հավանաբար օգտվելով Բրոսեից: Մենք ևս համամիտ ենք հրովարտակն Ալեքսանդր Ա Մեծ թագավորին վերագրելուն, քանի որ 1431 թ. նրան հաջողվում է Լոռին Վրաստանի սահմանների մեջ ներառել[56]: Հավելենք, որ Ալեքսանդր Ա-ն աներոջը՝ Սյունիքից հեռացած Բեշքեն Օրբելյանին, Լոռին նվիրում է որպես կալվածք. «Առ երեսս պատուեալ զնա՝ տայ նմա զդղեակն Լոռու»[57]: 1438 թ. Հաղպատի վանքում Հովհաննես քահանայի ընդօրինակած ձեռագիր Ճաշոցի հիշատակարանում ևս նշվում է Լոռին Բեշքեն Օրբելյանի ենթակայության տակ գտնվելու մասին. «պարոնութեան տեղւոյս եւ նահանգիս Լոռոյ՝ մեծափառ եւ աստուածասէր իշխանաց իշխանիս՝ պարոն Բէշքենին յազգէն Օրբէլեանց, թոռին մեծ պարոնին Բիւրթէլին...»[58]:

47 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 44 և նշվ. աշխ., էջ 205:

48 Պ. Մուրադյանը նշում է, որ «...տերմինն այստեղ գործածական դարձավ միայն Իվանե Երկայնաբազուկի քաղկեդոնական դառնալուց և Պղնձահանքը «ի հայոց» առնելուց հետո, XIII դարի առաջին տասնամյակից ոչ շուտ: Ուրեմն արձանագրության մեջ հիշվող Դեմետրեն վրաց թագավոր Դեմետրե II Անձնուրացն է (1271-1289 թթ.)» (նույն տեղում):

49 "Православная энциклопедия", т. IV, Москва, 2002, с. 215.

50 ԴՀՎ VI, Իջևանի շրջան, Երևան, 1977, էջ 15:

51 ԴՀՎ VI, էջ 16:

52 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 45 և նշվ. աշխ., էջ 206:

53 Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 271:

54 "Акты, собранные Кавказскою археологическою комиссией", т. VI, ч. II, Тифлис, 1875, с. 769-770.

55 **Ерицов А.**, նշվ. աշխ., էջ 22:

56 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 47 և նշվ. աշխ., էջ 207:

57 Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ **Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ**, Փարիզ, 1860, էջ 117:

58 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 486:

Ասվածից հետևում է, որ Ախթալա գյուղի ընծայաբերման մասին կարող էր խոսվել միայն 1438-1443 թթ. միջակայքում: Հավանաբար 1398 թ. բնագրի սխալ վերծանման արդյունք է. վրացերեն մեզ անհայտ օրինակում եղել է «նուսխուրի» գրչությամբ: Ուրեմն պարզ է, որ 1438 թ. Լոռիում արդեն եղել է Ախթալա անունով մի գյուղ, որի ավերակները պահպանվել են մինչ օրս[59]: Սույնից հստակ է, որ Իվանե Երկայնաբազուկի՝ Պղնձահանքը հայերից առնելու առնչությամբ Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկություններն իրականում վերաբերում են վանքին, բայց ոչ գյուղին: Գանձակեցու պատմության՝ իբրև տեղանքին վերաբերող հատվածի վկայակոչումը բանասիրության մեջ, ինչպես տեսնում ենք, վերանայելի է[60]:

Վերջին և ամենաակնառու ապացույցը Սիմեոն Պղնձահանեցու գրչագրական գործունեությունն է: Մաշտոցյան Մատենադարանի 1013 ձեռագրի հիշատակարանում (թերթ 241) նա արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ձեռագրաստեղծման վայրի, ժամանակի և հենց իր՝ գրչի մասին. «Յամին ՅՁԼԵ երորդի յաւիտենից թուոյն գրեցաւ եւ աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի յ(ը)նդիր եւ լաւ աւրինակաց հնոց, որ թարգիմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարտ եւ անարժան կրաւնաւորի Սիմէոնի, յերկիրս Հայոց՝ մերձ ի Լաւռէ, ի վանքն որ կոչի Սպլէնձահան. ընդ հովանե(ա)ւ սուրբ Աստուածածնին, յիշխանութիւն Իվանէ աթապագին, շինողի վանիցս, զոր յերկար ժամանակ արասցէ տէր որդովքն իւրովք հանդերձ: Արդ, աղաչեմ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի արարէք: Եւ որք յիշէք՝ յիշեալ լիցիք ի տեառնէ»[61]: Ձեռագրում նշված «ՅՁԼԵ երորդի յաւիտենից թուոյն»-ը հայ մատենագրության մեջ գործածված բյուզանդական կամ Արարչության կայսերական թվականն է՝ 5508-ը, ըստ այդմ՝ ժամանակային հաշվումներով համապատասխանում է հայկական 1227 թ. (6735-5508): Նշվածից ելնելով՝ կարող ենք ասել, որ ձեռագիրը գրվել է 1227 թ. «յերկիրս Հայոց մերձ ի Լաւռէ» գտնվող Սպլենձահան-Պղնձահանքում[62]՝ որպես վրացադավան հայերին պատկանող կառույց: Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք»-ի հիշատակարանում Սիմեոն Պղնձահանեցին գրում է իր ձեռնարկի դրդապատճառի մասին. «Թարգմանեցաւ գիրքս, որ է Շ(ա)ղ(ա)կապ եւ գլուխ աստուածաբանութեան Պրոկղէ Դիոդոխոսի պղատոնական իմաստասիրի, ձեռամբ Սիմէոնի անպիտան քահանայ կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս, յերկիրս Հայոց, ի վանս վրաց, որ կոչի Պղնձահանք, յաւիտենից թուականին ՅՁԾՁ (6756-5508=1248): Աղաչեմ զձեզ, ով եղբարք, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի, նախ զի ոչ էի արժանի այսպիսի սպասաւորութեան, սակս շաղախեալ գոլ մեղօք. երկրորդ զի յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաչաց եւ ի մտաց եւ ի զօրութենէ. զի զԿ (60) ամենիւք էի: Այլ զի ոչ էր սա թարգմանեալ ի մերս լեզու, եւ սա է մայր աստուածաբանութեան առաջին... Եւ ես յայն սակս թարգմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ»[63]:

Պղնձահանքը հայ և վրաց մատենագրությանը խորապես ծանոթ լինելու հանգամանքը վկայում է, որ տեղում հավանաբար եղել է թե՛ հարուստ գրադարան, թե՛ բարձրագույն ուսումնական կենտրոն: Վանքի միաբաններն Իվանե Երկայնաբազուկի հովանու ներքո շարունակում էին իրենց հայ համարել, իսկ հայերենը՝ «հայ լեզուս»[64], Հայաստանը՝ «յերկիրս հայոց», հայ մատենագրությունը՝ «...մեր լեզու, ... մի պակաս եղիցի յազգէ մերմէ»[65]: Սակայն, հակառակ այս ամենին, Պղնձահանեցին ևս, հավատարիմ ժամանակի դավանաբանական ըմբռնումներին, Սբ. Աստվածածինն անվանում է «վանս վրաց»[66]:

Պղնձահանքի միաբաններն անաչառ ուսումնասիրել են թե՛ հայկական և թե՛ վրացական մատենագրությունը, չեն մերժել մեկի նվաճումները և չեն երկմտել մյուսին հարստացնել նոր նյութերով: Պղնձահանքի միաբանների՝ նույնիսկ օտարալեզու մատենագրական ձեռքբերումներին տեղյակ լինելու և քաղկեդոնական այլ վանքերի հետ համագործակցելու առնչությամբ կարելի է վկայակոչել Բեռլինի արքայական գրադարանի հայերեն թիվ 25՝ Հովհան Սինայեցու (Կղեմաքոս) «Սանդուխք աստուածային ելից»[67] ձեռագիրը: Վերջինիս Ի գլխի վերջում տրված հիշատակարանում կարդում ենք. «Թարգմանեալ է մինչեւ աստ ի սրբամիտ կրաւնաւորէ Սինասէ Սիւնակեցէ ի Տրապիզոն քաղաք: Իսկ աստուստ՝ ի Սիմ(է)ոն քահանայէ կրաւնաւորէ Վրաց բարբառով»[68]: Նշենք նաև, որ ՄՄ 1925 ձեռագրում պահպանվել է նշյալ հիշատակարանի երկրորդ մասը. «Սրբասնեալ կրաւնաւոր Սիմէոն, թարգմանեցի Ի ճառէն ի վեր, ի վրաց լեզուէն» (թերթ 89): Բնական է, որ նույն երկի՝ տարբեր անձանց իրականացրած հայերեն փոխադրությունը (ընդ որում, Մինաս Սյունակյացը թարգմանել է հունարենից, իսկ Սիմեոնը՝ վրացերենից) վկայում է որոշակի պայմանավորվածության մասին: Պղնձա-

59 **Մուրադյան Պ.**, նշվ. աշխ., էջ 47 և նշվ. աշխ., էջ 208:

60 **Бакрадзе Д.,** Кавказ в древних памятниках христианства, Тифлис, 1875, с. 34.

61 **Սիմէոն Պղնձահանեցի**, էջ 7-8:

62 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 48:

63 **Սիմէոն Պղնձահանեցի**, էջ 23-24:

64 Նշվ. աշխ., էջ 23:

65 Նշվ. աշխ., էջ 23-24:

66 Նշվ. աշխ., էջ 23:

67 **Karamianz N.**, Verzeichniss der Armenischen Handschriften, “Die Handschriften-verzelchnisse königlichen bibliothek zu Berlin”, Band 10, Berlin, 1888, p. 18.

68 **Սիմէոն Պղնձահանեցի**, էջ 106:

հանքում ոչ միայն տեղյակ էին՝ ինչ է կատարվում հեռավոր Տրապիզոնում, հատկապես՝ դավանակիցների շրջանում, այլև ուղղակիորեն շարունակում էին նրանց՝ ինչ-ինչ պատճառներով անավարտ մնացած գործերը[69]:

Այսպիսով, պարզ է, որ Պղնձահանքի և Տրապիզոնի կրոնավորների միջև առկա գործակցությունը միանգամայն պատճառաբանված ու նպատակաուղղված բնույթ էր կրում:

Մյուս կողմից Ախթալայի Սբ. Աստվածածին վանքի (տեղացիների հունաբան հորջորջմամբ՝ Մեյրի ման) արտաքին պատերին ոչ մի արձանագրություն չկա: Վանքը ներսից գրեթե ամբողջությամբ ծածկված է որմնանկարներով՝ սուրբգրային տարբեր թեմաներով և մակագրություններով (աստվածաշնչյան անուններ, տեսարանների անվանակոչումներ և այլն): Ցավոք, ժամանակն իր կործանարար դրոշմն է դրել գլխավոր մուտքի առջև զետեղված տապանաքարերի վրա՝ եղծելով ու ոչնչացնելով արձանագրությունները:

Ախթալան մի հետաքրքիր բնակավայր է ոչ միայն իր աշխարհագրական դիրքով, բնության հրաշագեղ տեսարաններով, այլև իր պատմությամբ: Կովկասում Աստվածամոր անունը կրող ամենամեծ վանքը կարծես պաշտպանում է Հայաստանի հյուսիսային դարպասները և իր գեղեցկությամբ հմայում բոլոր ուխտավորներին:

Ախթալան կամ ավելի ճիշտ՝ Պղնձահանքը հարուստ է եղել պղնձով, ինչպես նաև տարբեր օգտակար հանածոներով: Այդ իսկ պատճառով միշտ կռվախնձոր է եղել հարևան երկու ժողովուրդների միջև: Հայտնի է, որ Ժ դարից սկսյալ Բագրատունիներն ու Կյուրիկյաններն Ախթալայում կառուցել են ամրոց և պարիսպ, որ ավելի ամրապնդեն իրենց դիրքերը: 1188 թ. Մարիամ իշխանուհին կառուցում է Սբ. Աստվածածին վանքը, որն իբրև աղոթատուն է ծառայում ո՛չ միայն Հայ Առաքելական սուրբ եկեղեցու հետևորդներին, այլև վրացիներին, հույներին և ռուսներին: Պատմության ընթացքում վանքի պատկանելության հարցը վիճելի խնդիր է եղել Ախթալայում բնակված բազմազգ սերունդների միջև:

Վերջին շրջանում խիստ հետաքրքրություն է առաջացել Ախթալայի վանքի պատմության նկատմամբ, և գաղտնիք չէ, որ մեր հարևան վրացիներն այն իրենց թեմերից մեկին կցելու մեծ ցանկություն ունեն: Սա յուրահատուկ մի եկեղեցի է, որի իրական պատմությունը հետաքրքրում է բոլորին, մի սրբավայր, որտեղ համակցված են քրիստոնեական տարբեր ժողովուրդների մշակույթներն ու հոգևոր արժեքները:

69 **Մուրադյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 49 և նշվ. աշխ., էջ 206:

ՄԻ ԽԱՉՔԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սամվել Կարապետյան

Լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2016 թ.

2016 թ. դեպի Վայոց ձոր և Սյունիք մեր ճամփորդության ժամանակ նպատակ ունեինք տեսնելու նաև Գոմք-Զառիթափ գյուղերի միջակայքում՝ Խաչիձոր անվամբ հայտնի տեղամասում գտնվող այն խաչքարը, որը կանգնեցվել էր 1288 թ. նույն վայրում աղբյուրի կառուցման կապակցությամբ:

Տեղում պարզվեց, որ 1990-ական թթ. վերջերին, պատվանդանը տեղում թողնելով, գյուղ էին փոխադրել միայն խաչքարը և կանգնեցրել հյուսիսարևելյան եզրի գերեզմանոցում (ավանդականին հակառակ դիրքով):

Մեզանից առաջ վիմագիրն ընթերցել ու հրատարակել են Քաջբերունին[1] և Ե. Լալայանը[2]: Նրանցից օգտվելով էլ՝ վիմագիրը վերահրատարակել էին Ալիշանը[3], Գ. Հովսեփյանն[4] ու «Դիվան հայ վիմագրության» Գ պրակի կազմողները[5], սակայն նրանց բոլորի մոտ բացակայում էր վիմագրի սկզբնամասը՝ *ի աշխարհակալութեան Արղուն խանին և* հատվածը:

Հուրախությամբ նշեմ, որ մեզ հաջողվեց լրացնել այդ բացը, որով էլ վիմագիրը գրեթե ամբողջացավ.

Ի թվ|ակ|ան|իս հ|այո|ց ՉԼ|Է (1288), | ի ա|շխ|արհ(ա)կա|լու|թե(ան) Արղ[ուն] | խա|ն|ի|ն և | իշխ|անութե(ա)ն Պապաք|ին և Ամիր Հասանայ, ես՝ Մ|արգիս, և որդի իմ՝ Պետրո|[ս]ն, շինեցաք զաղբուրս | [և] կանգնեցաք զխաչս ...|...ա: | Իշ|եցէ|ք ի | Ք(րիստո)ս: | Գրիչ:

1 **Քաջբերունի (Գաբրիել Հովհաննիսյան)**, Ճանապարհորդական նկատողութիւնք, «Արարատ», 1891, Գ, էջ 135:

2 **Լալայեան Ե.**, Հարաւային Վայոց-ձոր, «Ազգագրական հանդէս», XII գիրք, Թիֆլիս, 1904, էջ 288:

3 **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 174:

4 **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 141:

5 Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմ.՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1967, էջ 195:

ՍՊԻՏԱԿ ԽԱՉ ՎԱՆՔ

Էմմա Աբրահամյան

Վանքը հարավից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Սույն հոդվածում քննության են առնվում Արցախի Հանրապետության՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի հետևանքով նրա զինված ուժերի տիրապետության տակ անցած Հադրութի շրջանի նշանավոր վանքերից մեկի՝ Սպիտակ խաչի՝ մեզ հայտնի տեղեկությունները և վիմագրերը:

Տեղադրություն. գտնվում է Հադրութի շրջանում՝ համանուն շրջկենտրոնից 0,8 կմ հարավ-արևմուտք՝ Վանք գյուղի հյուսիսարևելյան եզրին՝ բլրի վրա (N 39.513544, E 47.022464, ծ. մ.՝ 810 մ):

Անվան ստուգաբանություն. վանքի անվանումն ավանդաբար կապվում է Սբ. Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Սբ. Գրիգորիսի նահատակությունից հետո նրան պատկանող սրբություններից մեկը՝ բյուրեղյա սպիտակ լանջախաչն Ամարասից այստեղ բերելու և պահելու հետ. «Աւանդութեամբ հաստատեն ամենեքեան, թէ սա է լանջական խաչ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսին, զոր շնորհեաց նմա Գրիգոր Լուսաւորիչն ի ժամ առաքելոյ զնա յԱղուանս, և յետ սոսկալի նահատակութեան նորա մնացեալ ի ձեռս հաւատացելոց որպէս սրբազան աւանդ, ուր կան անկորուստ պահեալ որդւոց յորդիս ցայսօր ժամանակի: Ապա կառուցեալ յանուն նորա եկեղեցի՝ արարեալ են զսա Եպիսկոպոսարան ի պատիւ այնր խաչի և որոշեալ առանձին նմա զվիճակ: Աստանօր տեսի զկոնդակս չորից կաթուղիկոսաց ի հաստատութիւն այսր աթոռոյ, այն է՝ Յովհաննու, Եսայեայ, Ներսիսի և Սիմէօնի, որք որդւոց յորդիս մնացեալ սերունդս Սրապիոն քահանայի, այժմ ևս վերակացուի այնր եկեղեցւոյ և խաչի: Պատմեն ծերունիք, թէ անզգոյշ պատահմամբ այրեցան ամենայն ծրարք թաշկինակաց խաչին, ընդ որս և խաչն, բայց ոչինչ գտեալ զվնաս, միայն սակաւ ինչ ճեղքեցաւ ընդ մէջ, որ յետոյ արծաթապատ արարեալ պահպանի զգուշութեամբ»[1]: Ի դեպ, ԺԹ դարավերջին խաչը նշյալ մի քանի կոնդակների հետ անհետացել է[2]:

Պատմություն. հիմնադրման ստույգ թվականի կամ ժամանակաշրջանի վերաբերյալ մատենագիտական վկայություններ չկան: Նշյալ խնդրում անփոխարինելի սկզբնաղբյուրներ են պահպանված վիմագրերը: Ըստ այդմ, եկեղեցու սեղանի վեմ-քարին փորագրված շինարարական բնույթի ԺԴ դ. կիսաեղծ արձանագրությունը (Իշխանը և որդին՝ Աջամը, նույնանում են 1346 թ. կերտված որմնափակ խաչքարի հիշատակագրության մեջ նշված անձանց հետ) թույլ է տալիս վանքը ենթադրաբար թվագրել ԺԴ դ.՝ հետագա դարերում կատարված հավելումներով:

Ինչ վերաբերում է գրավոր աղբյուրներում առկա տվյալներին, ապա դրանց հանդիպում ենք՝ սկսած ԺԷ դարից, այն էլ՝ հիմնականում տուրքերի վճարման առնչությամբ: Այսպես՝ 1667 թ. «Ներսէս կաթուղիկոսը գրում է Դիզակու Սպիտակ վանքի գիւղացիներին, որ իւր ներկայացուցիչ Ովանէս պարոն Տէրին հարկերը լիովին հատուցանեն, ՌՃԺԶ թուին»[3]:

1 **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 263-264:

2 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 68:

3 **Թօփճեան Յ. Յակոբ**, Յուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 42:

1701 թ. Աղվանից կաթողիկոս Սիմեոն Դ Խոտորաշենցին (1675-1701) տեղեկացնում է Սպիտակ խաչ և Ճախկախի[4] վանքերի թեմերին ենթակա թաղլարցիներին, որ «...այդ վանքի վանահայր է ձեռնադրում Յովհաննէս պարոն Տէրին, և յորդորում է, որ հարկերը լրիւ նրան հատուցանեն»[5]:

1773 թ. Հովհաննես Ժ Գանձասարեցի կաթողիկոսը (1763-1786) պատվիրում է «...Դիզակի Գունէ կոչուած մասի գիւղացիներին (Հադրութու ձոր, Բանազուր, Ծամծոր և այլն), որոնք Սպիտակ վանքի վիճակաւոր են..., առաջնորդ ճանաչել Պետրոս եպիսկոպոսին»[6]:

Հաջորդ տեղեկություններից պարզվում է, որ ԺԷ դ. վերջերին վանքը նյութական ծանր վիճակում էր: Դա է հաստատում, օրինակ, Աղվանից Իսրայել կաթողիկոսի՝ 1789 թ. վանքի տնտեսական աջակցությանն ուղղված կոչ-խնդրագիրը[7]: 10 տարի անց՝ 1799 թ., Իսրայել կաթողիկոսը կրկին «...պատուիրում է վիճակաւոր ժողովրդին չվշտացնել ծերունի Պետրոս եպիսկոպոսին, և յայտնում է, թէ ինքը անձամբ ուխտի գալով տեսել է Սպիտակ խաչ վանքի միաբանների աղքատ ու թշուառ կեանքը և յորդորում է վանական տուրքերը լրիւ հատուցանել»[8]:

Շուրջ մեկդարյա ընդմիջումից հետո առկա հիշատակությունները ևս լույս չեն սփռում վանքի պատմության վրա: Միայն հայտնի է, որ 1891 թ. այն կացարան էր դարձել կազակային սահմանապահ գնդերից մեկի, իսկ 1902 թ.՝ սահմանապահային ծառայության ելիզավետպոլյան բրիգադի շտաբի համար[9]:

Կովկասի 1892 թ. վարչական բաժանման համաձայն՝ վանքը մտնում էր Արցախի թեմի Ջաբրայելի գավառի մեջ[10]:

Պետք է հավելել, որ Սպիտակ խաչը եղել է մեծ ուխտատեղի ոչ միայն Վանքի, այլև շրջակա գյուղերի բնակիչների համար. «Աստանօր գտանի բիւրեղեայ սպիտակ խաչ, առ որ յաճախեն ուխտաւորք բազումք զենմամբ խոյոց և զուարակաց»[11]: Ի դեպ, ուխտավորներն այցելել են ամեն կիրակի[12]:

Միշա Բաբայանը որմնափակ խաչքարի մոտ (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Ըստ վանքի վերջին պահակի՝ 80-ամյա Միշա Բաբայանի[13] ասության՝ եկեղեցու զանգը և խաչը դրվել են 1965 թ. «Զանգը ես եմ վեր բարձրացրել, կախել 1965 թվին: Մինչև էդ խաչը իլյալ չի, ես եմ կախել: Էն ժամանակ գյուղում մի մարդ ա եղել, ինքը Երևանում գործարանում աշխատել ա, 8 կգ-անոց խաչը պատրաստել ա, ես եմ բարձրացրել: Զանգը կախել եմ, խաչն էլ...»[14]:

Մեզ հայտնի վերջին նորոգությունը սկսվում է 2020 թ. օգոստոսին ռուսաստաբնակ Սմբատ Աբրահամյանի նյութական աջակցությամբ, որը, ցավոք, կիսատ է մնում սեպտեմբերյան ողբերգական իրադարձությունների պատճառով:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո գյուղն ու վանքն անցնում են Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության ներքո, և դրանով իսկ վանքը հայտնվում է քրիստոնեական վտանգված հուշար-

4 **Թօփճեան Յ. Յակոբ**, նշվ. աշխ., էջ 42:
5 Գտնվում է Սպիտակ խաչից 3,2 կմ հարավ-արևմուտք՝ Սարինշեն գյուղից 0,9 կմ հարավ-արևելք:
6 **Թօփճեան Յ. Յակոբ**, նշվ. աշխ., էջ 42:
7 Նույն տեղում:
8 Նույն տեղում:
9 **Сегалъ И.** Елисаветпольская губерния: Впечатления и воспоминания // Кавказский вестник. Тифлис. 1902. № 5, с. 23.
10 **Խ. Վ.** /Խաչիկ վարդապետ Դադյան/, Համառօտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի, «Արարատ», 1896, Ա, էջ 44:
11 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 263: Զուարակ՝ մատաղահաս ցուլ, փոքր եզ (**Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. Ա, Երևան, 2000, էջ 445):
12 «Նոր-Դար», 1888, № 193, 17 նոյեմբերի, էջ 2:
13 Միշա Բաբայանը վանքի վերջին պահապանն էր (աշխատել է 25 տարի): Հայրենի գյուղ վերադառնալու երազանքով ապրեց մինչև կյանքի վերջը՝ 2022 թ. հունվարի 30-ը (ամփոփվել է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի գերեզմանոցում):
14 **Հակոբյան Ս.**, «Վանքի Միշա պապիկը». Իմ հիշատակը, իմ ժամը, իմ կարոտը..., 21 ապրիլ, 2021: www.mediamax.am/am/news/hadrut/42847/

ձանների շարքում: Որոշ ժամանակ անց, կեղծելով իրական պատմությունն ու կրոնածիսական, ազգային պատկանելությունը, աղրբեջանական իշխանությունները վանքը ոչ միայն պիտակում են որպես աղվանա-ուդիական կառույց, այլև հանում են գմբեթի խաչը և քանդում տանիքի ծածկասալերը[15]:

Կալվածքներ. Սպիտակ Խաչ վանքը ԺԹ դարում ուներ ոչ այնքան ընդարձակ կալվածքներ՝ տեղամասեր, վարելահողեր, այգիներ: Ըստ ամենայնի, ԺԹ դ. կեսերին դրանք անմխիթար վիճակում էին և շատ եկամուտ չէին բերում վանքին, քանի որ, օրինակ, 1856 թ. նշվել է. «Վանիցն Սպիտակ-խաչի, որ ի վանք գեղջ Հատրութայ: Մասնաւոր ինչ կալուած սոյն վանից և այգին կիսաւերակ յուսալի, թէ չափիլ ունի անվէճ»[16]:

1892 թ. վանքապատկան էր 4 կտոր վարելահող՝ 20 ռ. եկամտով[17], 1909 թ.՝ 7 դեսյատին (7,63 հա) հողատարածք («Ջորին վըղ» և «Պետին տղին տափ» վարելահողերը) և պտղատու մի այգի[18], 1912 թ.՝ նույնքան՝ 7 դեսյատին տարածք[19]:

Հարկ է նշել, որ Ի դարի առաջին տասնամյակում կալվածքներից ստացված եկամուտը տատանվում էր 1-ից 4 ռուբլու միջև. 1902 թ. կազմում էր 1 ռ. 59 կոպ., 1908 թ.՝ 2 ռ. 25 կոպ., 1910 թ.՝ 4 ռ. 30 կոպ.[20], իսկ 1911-1912 թթ.՝ 30 ռ.[21]:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Սբ. Խաչից խլվում են վանքապատկան բոլոր կալվածքները:

Քահանա. ԺԹ-Ի դարերի ընթացքում վանքում սպասավորած քահանաներից հայտնի են ներքոնշյալները.

Սրապիոն Մելքոնյան Վարդապետյանց (1798-1867). քահանա է ձեռնադրվել 1824 թ. հունվարի 16-ին Գանձասարի վանքում և այդ թվականից մինչև կյանքի վերջը՝ 1867 թ. օգոստոսի 26-ը, պաշտոնավարել Սպիտակ խաչ վանքում[22]:

Մեսրոպ Տեր-Սրապիոնյանց (ծնվ. 1832 թ.). տեր Սրապիոնի որդին էր: Գյուղի քահանան էր ձեռնադրությունից՝ 1864 թ.-ից առ 1893 թ.[23]:

Հովսեփ Մելիք-Միրայանց. ամենայն հավանականությամբ, քահանայագործել է տեր Մեսրոպի հետ միասին: 1893 թ. հիշվում է արդեն որպես հանգուցյալ[24]:

Պետրոս Տեր-Սրապիոնյանց. տեր Սրապիոնի որդին էր: 1891 թ. նոյեմբերի 2-ին ստացել է քահանայության վկայական[25]:

1912 թ. վանքը քահանայազուրկ էր[26]:

Մեսրոպ Դաղամյան. հիշվում է 1913 թ.: Հովվել է նաև Տյաք գյուղին[27]:

Դավիթ Ղալաբեկյան. Սպիտակ խաչ վանքի վերջին քահանան էր: Ըստ վավերագրերից մեկի՝ նրա քահանայական անօրինական ձեռնադրությունը կատարել էր Ամարասի վանահայր Սուրեն աբեղան[28]:

Վիմագրեր. Սպիտակ խաչ վանական համալիրում պահպանված վիմագրերն ուշադրության են արժանացել՝ սկսած ԺԹ դարի կեսերից, երբ հետազոտողներն իրենց տեղագրական աշխատություններում դրանք վկայակոչել են և գիտական շրջանառության մեջ դրել, որոնցից երկուսը մեզ չեն հասել: Սարգիս արք. Ջալալյանցն իր տեղագրական աշխատության երկրորդ հատորում ընդգրկել է 4, Մակար եպս. Բարխուտարյանցը՝ 8 վիմագիր: «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի՝ Արցախին նվիրված պրակում Սեդրակ Բարխուդարյանը հրատարակել է 11 արձանագրություն, որոնցից երկուսն անձամբ չի տեսել և ներկայացրել է ըստ նախորդների վերծանման: Մակար Բարխուտարյանցից օգտվելով՝ արձանագրություններից յոթը նույնությամբ վերահրատարակել է Համազասպ Ոսկյանը, իսկ երեքը՝ Շահեն Մկրտչյանը: Մեկ արձանագրություն էլ հրատարակել է հուշարձանագետ Սամվել Կարապետյանը:

Ի դեպ, Խաչիկ վարդապետ Դաղյանի՝ 1893 թ. ընթերցած 5 արձանագրությունները (դրանցից 3-ի՝ առաջին ընթերցողն է, 2-ի՝ երկրորդ) ցարդ անտիպ են և պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

Ճարտարապետություն. Սուրբ Խաչն արցախյան նշանավոր վանական համալիրներից է՝ բաղկացած եկեղեցուց, գավթից, հյուրատնից, օժանդակ շինություններից, գերեզմանոցից և հայ ճարտարապետության յուրօրինակ կառույցներից մեկից՝ որմնափակ խաչքարից:

---

15 Ի դեպ, ըստ աղվանա-ուդիական համայնքի ներկայացուցիչ Ռոբերտ Մոբիլիի զավեշտալի և անհիմն հայտարարությունների՝ հայերը «օկուպացիայի ընթացքում» իբր վանքի պատերին ագուցել են խաչքարեր, փորագրել հայերեն արձանագրություններ՝ ջնջելով աղվանական հետքը՝ https://www.youtube.com/watch?v=OqS26fM0z64:

16 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (այսուհետ՝ ՎՀԵՊ, գիրք Թ), Երեւան, 2001, էջ 255:

17 **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1896, Ա, էջ 44:

18 ՀԱԴ, ֆ. 56 ց. 18, գ. 764, թ. 278-279: Ի դեպ, ըստ տեղեկություններից մեկի՝ 1900 թ.-ից մինչև 1911 թ. մարտի 1-ը հասույթները գոյացել են վանքապատկան վարելահողերից և այգուց (ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 522):

19 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 355 շրջ.-356:

20 ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 523:

21 Նշվ. աշխ., էջ 548:

22 ՀԱԴ, ֆ. 56 ց. 12, գ. 531-533, 538 և ց. 18, գ. 542: Տեր Սրապիոնը ծնվել է 1798 թ., ուսանել Գանձասարի վանքում Սարգիս արքեպիսկոպոսի մոտ: Միաժամանակ հովվել է Ղուշչիլար, Տյաք և Նորշեն գյուղերում: Ուներ 3 որդի (Մեսրոպ, Պետրոս և Հովհաննես) և 3 դուստր: Տե՛ս նաև ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 206: Տապանագիրը տե՛ս էջ 51, արձ. *իգ*:

23 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 451 շրջ.-452; ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 151 շրջ.-152:

24 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 151 շրջ.-152:

25 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6012, թ. 82: Ի դեպ, 1893 թ. Տյաքի քահանան էր (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 151 շրջ.-152):

26 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 360:

27 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1010, թ. 93:

28 ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 772:

Եկեղեցին և գավիթը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք, գավթի ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Եկեղեցի և գավիթ. եկեղեցին ունի միանավ, թաղածածկ բազիլիկ հորինվածք: Արևելյան կողմում կիսաշրջան խորանն է: Լուսավորությունն իրականացված է եկեղեցու արևելյան և գավթի հարավային և արևմտյան ճակատներից բացված մեկական լուսամուտով: Հյուսիսային որմի մեջ՝ ավանդական տեղում է մկրտության խորշը՝ ավազանով հանդերձ: Նկատելի է, որ գավիթը կառուցվել է ավելի ուշ, քանի որ եկեղեցու արևմտյան պատը թերևս ինչ-ինչ պատճառներով քանդել են և նույն կողմից կից կառուցել փոքր-ինչ ավելի լայն չափերի թաղածածկ գավիթը: Եկեղեցու և գավթի միջև բաժանարար որևէ պատ գոյություն չունի: Գավթի երկթեք կոմինդրածածկ տանիքի արևելյան եզրին բարձրանում է սրածայր վեղարի ներքո առնված վեցսյունանի ռոտոնդան: Միակ մուտքը գավթի արևմտյան ճակատի կենտրոնից է:

Բացառությամբ կառուցողական առավել պատասխանատու հատվածների՝ թաղակիր կամարների, մուտքի, լուսամուտների և խորշերի պարակալների՝ ամբողջապես կառուցվել է անմշակ քարով և կրաշաղախով: Որմերում ագուցված են խաչքարեր: Երեսապատի քարերին առկա են նվիրատվական բնույթի խաչաքանդակներ՝ կից հակիրճ հիշատակագրություններով: Եկեղեցու ներքին չափերն են՝ 8 x 5,6 մ, իսկ գավթինը՝ 7,8 x 7,3 մ:

Ինչ վերաբերում է կառուցման ժամանակին, ապա, ըստ ամենայնի, նկատի ունենալով եկեղեցու սեղանի վեմ-քարի կիսաեղծ արձանագրությունը, այն կարող ենք ենթադրաբար թվագրել ԺԴ դարով, իսկ ելնելով գավթի կառուցողական և հորինվածքային առանձնահատկություններից՝ նորից թեականորեն կարող ենք համարել ԺԷ դ. կառույց: Հյուրատունը և ռոտոնդա-զանգակատունն էլ կառուցվել են 1735 թ.:

ԺԹ դարի կեսերին վանք այցելած Սարգիս արքեպիսկոսը նշում է, որ «...սուրբ ուխտն Սպիտակ Խաչ, կառուցեալ յանհարթ քարանց միջակ շինուածովք...»[29]: Նույն դարի վերջին ականատեսը շեշտում է՝ հուշարձանն անմխիթար վիճակում է և կարոտ նորոգության. «Վանքը չունի եկեղեցական և ոչ մի զարդ և գտնւում է բոլորովին անշուք, կիսամերկ դրութեան մէջ. պատերի սուաղը ներսից և դրսից բոլորովին փլուել է, իսկ տանիքը մաշուել է և անձրևային եղանակներում կաթում է, այնպէս որ անձրևի ջուրը և խոնավութեան կաթիլները, որ միշտ նկատելի են լինում, պատերի վրայ թողնում են իրենց հետքը...»[30]: Նույն ժամանակ Մակար եպիսկոպոսն էլ հավելում է, որ «անտաշ քարով և կրացեխով» կառուցված վանքն ունի «...կաթուղիկէ

29 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 263:

30 «Նոր-Դար», 1888, № 193, 17 նոյեմբերի, էջ 2-3:

Եկեղեցու մկրտության ավազանը, գավթի մուտքը և երեսապատի տեղահան խաչաքանդակ քար (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)



Եկեղեցին և գավիթը վերանորոգման ընթացքում (լուս.՝ Գ. Բուդաղյանի, 2019 թ.) և վանքի հատակագիծը (չափ.՝ Մ. Սարգսյանի, 1980-ական թթ.)

և գաւիթ: Տաճար և գաւիթ ի միասին չափելով երկարութիւնն է 15 մ 75 սանթ., լայնութիւնն՝ 7 մ 10 սանթ.: Վանքս, որ եկեղեցի համարուած է Վանք գիւղացւոցն, բայց միևնոյն ժամանակ մեծ ուխտատեղի է գաւառիս հայ բնակչաց»[31]:

1892 թ. եկեղեցին հիշատակվում է որպես «բաւական մաքուր և ամուր շինութիւն»[32]:

1922 թ. վերջին տեղեկություններից մեկն էլ պարզում է, որ չնայած գյուղում կար եկեղեցի, սակայն քահանայազուրկ էր[33]:

Եկեղեցու և գավթի որմերին առկա են վիմագիր արձանագրություններ, որոնց թվում կան նաև անվարժ գրչությամբ փորագրվածներ: Ստորև ժամանակագրական կարգով ներկայացնում ենք 12-ը.

31 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 66:
32 **Խ. Վ.**, նշվ. հոդվ., «Արարատ», 1896, Ա, էջ 44:
33 ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 760:

Խաչքար և խաչաքանդակ եկեղեցու որմերին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ. և Ս. Դանիելյանի, 2018 թ.) և վանքի տարածքում (լուս.՝ Գ. Բուդաղյանի, 2019 թ.)

Խաչաքանդակներ եկեղեցու կամարին (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.) և ռոտոնդա-զանգակատունը խաչով (լուս.՝ Ս. Կարապետյանի և Ա. Ղուլյանի, 1980-ական թթ.)

ա Խաչքար (112 x 51 x 22 սմ). ագուցված եկեղեցու հյուսիսային որմին, ներքուստ, երեսով դեպի հարավ, արձանագրությունը՝ 6 տող.

Ես՝ Սիրաք/ս, կանգնե/ցի զխաչ | հաւր իմոյ | Խութլափ/ի, թվ(ին) ՉՃԲ (1333):

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 66: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, էջ 21: **Մկրտչյան Շ.**, Լեռնային Դարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 135: ԴՀՎ V, էջ 189:

Ծանոթ. արձանագրության առաջին վերծանողն է Խաչիկ վրդ. Դադյանը 1893 թ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 23): Ի դեպ, «Դիվան»-ում այն ներկայացված է չպահպանված արձանագրությունների շարքում:

Տարընթերցում. Դադյանի մոտ տարեթիվն է՝ *ՉՃԲ* (1303):

բ Սեղանի վեմ-քար (127 x 68 x 20 սմ). արձանագրությունը՝ կիսաեղծ 2 տող.

Յանուն Ա(ստուծո)յ ես՝ Աջամի որդի Իշխա-(նա)յ, շինե/ցի զս(ուր)ք Մարի...:

Ծանոթ. վիմագրում նշված անձինք հիշվում են նաև որմնափակ խաչքարի արձանագրության մեջ, ըստ այդմ, հուշարձանը կարելի է թվագրել ԺԴ դ.: Ցավոք, Սպիտակ խաչ վանքի պատմության համար կարևոր այս վիմագիրը կիսաեղծվածության պատճառով հնարավոր չի եղել ամբողջապես ընթերցել:

գ Խաչաքանդակ քար (48 x 39 սմ). եկեղեցու հարավային ճակատին՝ փորածո խաչի թևերի միջակայքում, արձանագրությունը՝ 4 տող.

Խաչս Մախ/սուտ պ(է)կ/ին այ, | ՋԽ (1491):

Հրատ. ԴՀՎ V, էջ 188:

Ծանոթ. անձնանվան վաղագույն հիշատակություններից է:

դ Գավթի մուտքի հարավային նիստին, արձանագրությունը՝ 7 տող (երրորդ տողն անավարտ է).

Շինեցաւ ՌՃ/ՉԴ (1735) այն տարին էր | Թահմազ խան...: | Յիշատ(ա)կ է զանկ/[ակ]ատունս Սուր/ապի որդի Ովանէս | եպ(իս)կ(ոպո)սին:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 264: **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 66-67: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 21: **Մկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 136: ԴՀՎ V, էջ 189:

Ծանոթ. վիմագրի երկրորդ ընթերցողն է Խաչիկ վրդ. Դադյանը 1893 թ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 24): Ի դեպ, երրորդ տողը, կարծում ենք, պետք է ավարտվեր հյուրատան շինարարական արձանագրության վերջին տողի նման՝ *օսմանլուն երկրէս տուրս արաւ* (տե՛ս արձ. *ժգ*): Բացի այդ՝ երկու վիմագրերում էլ հիշվում են նույն անձինք:

Տարընթերցում. «Դիվան»-ում տարեթիվն է՝ *ՌՃԺԴ* (1665), իսկ Շ. Մկրտչյանի մոտ՝ *ՌՃԻԳ* (1674): Սակայն նկատի ունենալով Թահմազի խանի ժամանակաշրջանը և նրա անվան հիշատակությունը նաև հյուրատան շինարարական արձանագրության մեջ՝ կարող ենք ասել, որ հուշարձանը կառուցվել է 1735 թ.:

ե Արձանագիր քար. գավթի արևմտյան ճակատին՝ լուսամուտի միակտոր քարին, արձանագրությունը՝ 6 տող.

Տ(է)ր ա(ստուա)ծ Յ(իսուս)ի Ք(րիստո)ս: | Ես՝ տ(է)ր Ազարիե(ա)յ, | ս(ուր)ք | {թվ Խ} թվիս Ռ/ՃԽԳ (1694) | ...:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 67: ԴՀՎ V, էջ 189:

Ծանոթ. Բարխուտարյանցի մոտ *տ(է)ր Ազարիե(ա)յ*-ի փոխարեն՝ *Վրդանէս*:

Արձանագրություն դ (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2022 թթ.)



Արձանագրություն ե (լուս.՝ Գ. Բուդաղյանի, 2019 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)





Արձանագրություն զ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)



Արձանագրություն է (լուս.՝ Գ. Բուդաղյանի, 2019 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)

զ Արձանագրություն. գավթի հարավային ճակատին, 2 տող.

Ես՝ տ(է)ր Ով(անէ)ս ապեղա, ճէմծոր(ե)ցի, Ք(րիստո)ս աս(տուա)ծ սիրէսջիկ: Մի | ա(ստուա)ծ ողորմի տ(է)ր Ովանէսին, թվ(ին) ՌՃԺԵ (1666):

Ծանոթ. Ճեմծորը Հաղբուքի շրջանի Ճամձոր գյուղն է:

Արձանագրություն թ (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2022 թթ.)

է Արձանագրություն. գավթի հարավային ճակատին՝ նախորդից ցած, 2 տող.

Խաչս | տ(է)ր Ովանեսին է:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

ը Արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին՝ մուտքի մոտ.

Տ(է)ր Ովան/էս:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

թ Արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին՝ խաչաքանդակի շուրջը, 3 տող.

Խաչս տ(է)ր | Ով/անէսին է:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

ժ Արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին՝ խաչաքանդակի շուրջը, 2 տող.

Ապ(ե)ղ(ա)յ տ(է)ր Ովան/էսին Ա(ստուա)ծ ո-ղ(ո)րմե(ա)յ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

Արձանագրություն ժ (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2022 թթ.)

ժա Խաչքար (52 x 33 սմ). ագուցված եկեղեցու ներսում՝ մկրտարանի խորշում, քառատող արձանագրությունը՝ հիմնախաչի հորիզոնական թևերից վեր.

Խաչս Ղա/մ(ա)ղի(ն) / ...ն/ն:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

ժբ Տապանաքար (97 x 45 սմ). ագուցված եկեղեցու որմին, արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան Իվան բէկին, / որ է որդի Բէջան բէկին / եւ ի տոհմեն Ղօրղանօվին: / Վախջանեալ է 1839 թ.:

Արձանագրություններ ժա և ժբ (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Հյուրատուն. գտնվում է եկեղեցուց հյուսիս-արևելք: Ունի հյուսիս-հարավ երկայնական առանցքով ուղղանկյուն թաղածածկ հատակագծով սենյակ, որի մուտքը բացված է արևելյան ճակատի հյուսիսային եզրից (արտաքին չափերն են՝ 10 x 8,5 մ): Թաղը կենտրոնում ամրացված է սրբատաշ կամարով, իսկ պատերին բացված են ուղղանկյուն և կամարակապ խորշեր: Լուսավորությունն իրականացված է նույն ճակատի մեջ բացված 2 լայն լուսամուտներով: Առջևում փայտե սյունաշարով նախասրահն է: Օգտագործված շինանյութը կոպտատաշ քարն է: Բացառություն են կազմում մուտքի շրջանակը և կամարը, որոնք սրբատաշ քարից են: Ըստ մուտքի բարավորին փորագրված շինարարական արձանագրության՝ այն կառուցվել է Հովհաննես եպիսկոպոսի հիշատակին 1735 թ.:

Մեզ հայտնի վերջին նորոգությունը կատարվել է 1888 թ. շուշվաքնակ թաղասեռցի վաճառական Բաղդասար Սաֆարյանի նյութական աջակցությամբ. «...վանքի արևելեան կողմը գտնուում է մի ընդարձակ միայարկ շինութիւն, որ վկայ է, թէ այդ վանքը բաւական փառաւոր անցեալ է ունեցել, բայց այժմ այդ շինութեան բեկորներն են մնում: Ամառս այդ վանքը ուխտ գալով շուշաբնակ թաղասեռցի ...վաճառական պ. Բաղդասար Սափարեանցը և տեսնելով այդ աւերակ շինութիւնը, իւր միջոցներով շինել է տալիս և ծածկում երկաթէ տանիքով, ծախսելով առնուազն 500 ռուբլի: Պարոնի այս արարքը միակ է մեր կողմերում, ուստի արժանի է խորին շնորհակալութեան...»[34]:

ժգ Արձանագրություն. արևելյան մուտքի ճակատակալ քարին՝ 6 տող.

Ես՝ Միկրտիչս, գ/րեցի / յիշատակ է բանապիս / Սուրապի որդի Ովանէս եպ(իս)կ(ոպո)սին: / Շինեցաւ ՌՃՁԴ (1735) թվին: Այն տարին էր / Թահմազ խան օսմանլուն երկրէս տուրս ար(ա)ւ:

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 66-67: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 22: ԴՀՎ V, էջ 189:

Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակողն է Խաչիկ վրդ. Դաղյանը 1893 թ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 23): Ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է Ի. Սեգալը (**Сегаль И.** Елисаветпольская губерния: Впечатления и воспоминания // Кавказский вестник, Тифлис, 1902, № 5, с. 25):

Ուշագրավ այս վիմագիրը ոչ միայն հյուրատան կառուցման, այլև ժամանակի ռազմաքաղաքական անցքերի յուրօրինակ «քարե փաստաթուղթ» է: Նրանում հիշատակված Թահմազ խանը (Թահմասպ Ղուլի խան) հայտնի է նաև որպես Նադիր շահ (Իրանի շահ՝ 1736-1747 թթ., Աֆշարների հարստության հիմնադիր), իսկ նշված պատմական դեպքը վերաբերում է 1730-1736 թթ. թուրք-պարսկական պատերազմին:

Ի դեպ, բարավորին կից՝ կամարի կենտրոնական քարի կոր մակերեսին, արձանագրության առաջին տողի շարունակությունն է՝ *ռեցի*:

34 «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, № 193, 17 նոյեմբերի, էջ 2:

Հյուրատունն արևելքից (լուս.՝ Մ. Սարգսյանի,1980-ական թթ. և Ս. Դանիելյանի, 2018 թ.)



Հյուրատան արևելյան մուտքի ճակատակալի արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019 և 2022 թթ.)

ժդ Արձանագրություն. մուտքի հարավային նիստին՝ 3 տող.

Թվ(ին) ՌԲՃԺԵ (1766)-ին Ք(րիստոս)ի ծառա | Պետրոս վարդապետ: | Պետրո[ս]:

Հրատ. ԴՀՎ V, էջ 189:

Ծանոթ. վիմագիրն առաջին անգամ ընդօրինակել է Խաչիկ վրդ. Դադյանը 1893 թ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 23): Ի դեպ, Պետրոս վարդապետը թերևս 1773 թ. Աղվանից Հովհաննես կաթողիկոսի (1763-1786) հրամանով վանքի առաջնորդ նշանակված Պետրոս եպիսկոպոսն է (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 46):



Հյուրատան մուտքի հարավային նիստի արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019 և 2022 թթ.)

ժե Արձանագրություն. մուտքի հարավային նիստին՝ 1 անավարտ տող.

Ես՝ Պ(ետրոս):

Արձանագրություն *ժե* (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019 և 2022 թթ.)

Վիմափոր խցեր. համալիրի կազմում՝ վանքի հյուսիսային և հյուսիսարևելյան կողմերում՝ հյուրատան մոտ, պահպանվել են վիմափոր խցեր, որոնց պատերին առկա են խորշեր: Դրանք, ամենայն հավանականությամբ, ծառայել են որպես ճգնարան: Հյուսիսարևելյան վիմափոր խուցը բաղկացած է 2 սենյակից (ներքին չափերն են՝ 5,5 x 4 մ). մեծն ունի սեղանաձև հատակագիծ, որի հյու-

Վիմափոր խուց (լուս.՝ Ա. Ոսկանյանի, 2012 թ.)

Նմուշներ գերեզմանոցի խաչքարերից և տապանաքարերից (լուս.՝ Ա. Ոսկանյանի, 2012 թ., Գ. Բուդաղյանի, 2019 թ., Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

սիսարևելյան կողմում կից է փոքրիկ ուղղանկյուն հատակագծով ճգնարանը: Կիսամշակ պատերով հյուսիսային խուցն ունի ուղղանկյանը մոտ հատակագիծ (ներքին չափերն են՝ 4,2 x 3,5 մ):

Գերեզմանոց. տարածվում է Սպիտակ խաչ վանքի շուրջը: Օրորոցաձև, բարձր և հարթ ուղղանկյունաձև տապանաքարերի մեջ առանձնապես մեծ թիվ են կազմում ԺԹ դարին վերաբերողները: Պահպանվածներից հնագույնը ԺԴ դարից է: Առկա են նաև տեղահան մի քանի խաչքարեր, որոնցից մեկն ունի պատկերաքանդակ: Գերեզմանոցի ամենաուշագրավ հուշարձանը որմնափակ խաչքարն է:

Սպիտակ խաչ որմնափակ խաչքար. գտնվում է վանքից հարավ-արևմուտք (ունի շուրջ 4,5 մ բարձրություն, 290 սմ երկարություն և 230 սմ լայնություն)[35]: Կերտվել է 1346 թ. համակ սրբատաշ դեղնասպիտակավուն քարերով: Արևմտյան ճակատին՝ որմի մեջ, ագուցված է մի գեղաքանդակ խաչքար: Ի նշան հավատացյալների փրկության՝ հորինվածքում խաչի երկրորդ գալուստն է՝ երկու հրեշտակների ուղեկցությամբ[36]: Արցախյան նմանօրինակ որմնափակ խաչքարերից միակն է, որի վերին կամարաձև մասը լուծված է ոչ թե կիսաշրջան, այլ երկկենտրոն՝ սլաքաձև տարբերակով: Ունեցել է երկլանջ ծածկ:

ժզ Արձանագրություն. որմնափակ խաչքարի գլխակալ կիսակամար քարին՝ փորագիր, 6 տող.

Ես՝ Աջամի որդի Իշխանայ, կա(ն)կ/նեցի զխաչս ի{ի} փրկութի(ւն) հոգ/ոյ որդոյ իմոյ՝ Ասուղարայ: Որ/ք կարդէք, յիշեցէք ի սուրբ յ(ա)ղ/աւթս ձեր՝ աղաչեմ: Ի թվ/իս ՉՂԵ (1346):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 264: **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 67: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 22: **Սկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 136 (նույնությամբ վերահրատարակել է Մ. Բարխուտարյանցի ընթերցումը): ԴՀՎ V, էջ 187:

Ծանոթ. վիմագրի երկրորդ ընթերցողն է Խաչիկ վրդ. Դադյանը 1893 թ. (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 23):

35 Որմնափակ խաչքարի մասին մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, Արցախի որմնափակ խաչքարերը, «Էջմիածին», 1983, Ը, էջ 34-40:

36 Այս թեման իր զուգահեռներն ունի Հաղբութի շրջանի հռչակավոր վանքերից մեկի՝ Գտչավանքի խաչքարերի հետ (**Պետրոսյան Հ.**, Խաչքար, Երևան, 2008, էջ 155-157):

Սպիտակ խաչ որմնափակ խաչքարը (լուս.՝ վերատպություն, ԺԹ դար, Ս. Կարապետյանի, 1980-ական թթ. և Ս. Դանիելյանի, 2019 թ.)

Խաչքարն ընդգրկող երեք որմերի և ճակտոնի սրբատաշ քարերը պոկված են, տեղում մնացել են միայն արևմտյան ճակատի բարդ պրոֆիլավոր քարերը:

Տարընթերցում. Ջալալյանցն *Աջամի որդի Իշխանայ*-ի փոխարեն ունի՝ *Աբասի որդի Իշխանս*, իսկ *Ասուդարայ*-ի փոխարեն՝ *Բասուդարա*: Բարխուտարյանցի մոտ տարեթիվը նշված է՝ *ՉՂԷ* (1348): Բացի այդ՝ հուշարձանն անվանել է «Բեմ»:

Սպիտակ խաչ որմնափակ խաչքարի արձանագրությունը և գրչանկարը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019 և 2022 թթ.)

ժէ Արձանագրություն. որմնափակ խաչքարի հարավային կողին հետագայում փորագրվել են բազմաթիվ մանր խաչեր և 4 կարճ տողերով հիշատակագրություն.

Ես՝ | Հա|սա|նս:

Հրատ. ԴՀՎ V, էջ 188:

Գերեզմանական այլ հուշարձաններ. գերեզմանոցում պահպանվել են հիմնականում ուղղանկյուն բարձր և օրորոցաձև տապանաքարեր, որոնց թվում առկա են նաև ԺԴ-ԺԹ դդ. վերաբերող արձանագիրներ: Ստորև ներկայացնում ենք 7 տապանագիր:

ժը Տապանաքար օրորոցաձև. որմնափակ խաչքարի առջև, հարավային երեսին՝ կենցաղային պատկերներ, կենաց ծառ և անավարտ երկտող արձանագրություն.

Այս է հանգիստ բարեայպաշտին Ասո[ւդարայ, || որ կէսաւրեայ ժամ]անակաւ ի Ք(րիստո)ս փոխեցաւ, ով կա...:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 264: **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 67: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 22: ԴՀՎ V, էջ 188:

Ծանոթ. ի դեպ, վիմագրում հիշվող Ասուդարայի հոգու հիշատակի համար է կանգնեցվել որմնափակ խաչքարը, ըստ այդմ, հուշարձանը թվագրվում է նույն՝ 1346 թվականով:

Տապանագիրն անավարտ է, իսկ ջարդոտված միջնամասինը ներկայացնում ենք ըստ Ջալալյանցի և Բարխուտարյանցի ընթերցումների:

Տարընթերցում. Ջալալյանցի մոտ՝ անձնանունն *Ասուդարայ*-ի փոխարեն՝ *Բասուդարայ*:

Սպիտակ խաչ որմնափակ խաչքարի արձանագրությունը և գրչանկարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)



ժթ Տապանաքար օրորոցաձև. նախորդի մոտ, հարավային երեսը հարդարված է խաչաքանդակներով ու զարդաքանդակներով: Արձանագրությունը՝ արևմտյան, հարավային և հյուսիսային նիստերին՝ 1 տող, իսկ արևելյանին՝ 8 տող.

Ես՝ Խումար, որդի | Ջալալայ, կանգնե|ցի զխաչս ի փրկ|ութիւն հոգոյ | որդոյ Վէլիճանին: | Որք երկիրպ(ագան)էք, յաղ|աւթս յիշեցէք, թվ(ին) | ՋԻԷ (1478): || Այս է հանգիստ բարէպաշտ Վալիճանայ, որ || կէսաւրէ ժ|ամանակաւ ի Ք(րիստո)ս փոխեցաւ: Ով:



Սպիտակ խաչ որմնափակ խաչքարի արձանագրությունը և գրչանկարը (լուս.՝ Մ. Սարգսյանի, 1980-ական թթ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)

Հրատ. **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 264: **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 67: **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 22: ԴՀՎ V, էջ 188:

Ծանոթ. երեք նիստերին փորագրված միատող տապանագիրն անավարտ է: Ենթադրելի է, որ այն խաչքարային հիշատակագրություններին հատուկ պետք է լինի «Ով որ կարդա, աստուած ողորմի ասի» բանաձևային ձևակերպումը: Ջալալյանցի մոտ տրված է արևելյան նիստի արձանագրությունը և մի հատված երեք նիստերին փորագրվածից:

Տարընթերցում. Ջալալյանցի մոտ *կեսարէ ժամանակաւ*-ի փոխարեն՝ *երիտասարդ ժամանակին*:

ի Տապանաքար. գտնվել է որմնափակ խաչքարի դիմաց.

Այս է հանգիստ Խոնդբեկում՝ դուստր Ախիճանին, կողակից Կոստանտէլին և հոր՝ Վելիճանին: Յիշեցէք ի Քրիստոս յաստուծոյ, թվ(ին) ՋԿԱ (1512):

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 67: **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, էջ 22: ԴՀՎ V, էջ 190:

Ծանոթ. 1960-ականներին՝ Սեդրակ Բարխուդարյանի արշավախմբի ուսումնասիրության ժամանակ, տապանաքարն անհետացված էր:

իա Տապանաքար. ուղղանկյունաձև, բարձր, գերեզմանոցում, արձանագրությունը՝ 5 տող.

1745: | Ի գերեզմանի աստ ամփոփի մարմին | Պետրոսի մեծին արքեպիսկոպոսին: | Էր սա որդի մեծի իշխանին՝ գլու|խ դիւցազանց մերոց նահա(ն)գին:

Հրատ. առաջին անգամ:

իբ Տապանաքար. ուղղանկյունաձև, բարձր, արձանագրությունը՝ երեք լեզուներով (հայերեն՝ 8 տող, գրեթե նույն բովանդակությամբ՝ ռուսերեն՝ 4 տող և վրացերեն՝ 6 տող).

Յայս է տապան լուսահոգի | վաղաքառամ Ստեփաննո{ս}սի, | ազգաւ կոչի թիփլիզեցի, | թոռն ազնիւ Կանջումովի | եւ էր որդի Աղէքսանդրի, | փոխեալ աստէն սա ամուրի, | թողեալ զծնողն յոյժ կսկծալի, | 1854: | საფლავსა | ამასა მდებარე | ვარეძე | სტეფანე | განჯუმო|ვი: || Здесь покоится прахъ | гражданина Степана | Алексеева, сына Ганджумова, | скончавшагося 7 января 1854 г.

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար իա (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2022 թթ.)

իգ Տապանաքար. կանգնեցված միաստիճան պատվանդանին, ուղղանկյունաձև, բարձր, արձանագրությունը՝ 5 տող.

26.8.1867: | Ի սոյն տապանի հանգուցեալ դնիս, | իմոյ սիրելեաց ես միշտ կարօտիմ, | արդ սպասեալ մնամ ձայնին աւետե(ա)ց, | Սրաբիոն աւագ ք(ա)հ(անա)յ Վարդապետե(ան)ց:

Հրատ. առաջին անգամ:

իդ Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 4 տող.

Աստ հանգչի դի հատրութա|բնակ Թիփլիս քաղաքացի Բախշի | Իւանեան Գեանջումեանցի, վ(ախճանեալ) 1892 թ. | 92 ամեաց հասակում:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար իբ և իգ (լուս.՝ Ա. Ոսկանյանի, 2012 թ.)

ՓՐԿՎԱԾ ՄԱՄՆԻԿՆԵՐ ՀՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ

Ռաֆֆի Քորքոշյան

Սկիզբը՝ № 15 և № 17-ում

Հոդվածաշարի նպատակն է գոնե թղթի վրա փրկել հիմնականում գանձախույզներից (Թուրքիայի Հանրապետությունում գործող) ձեռք բերված լուսանկարներից մեզ հայտնի դարձած անշարժ և շարժական հուշարձանների պատմական, ինչպես նաև գրչագրական արժեք ունեցող արձանագրությունները՝ համոզված լինելով, որ դրանց մեծագույն մասն անխուսափելիորեն արժանանալու է ոչնչացված բյուրավոր հայկական հուշարձանների ճակատագրին:

Խա Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Իգդիր գավառում (ընակավայրը մեզ չի հաջողվել պարզել): Ունի կանոնավորին մոտ եզրագիծ և գեղազարդ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ խաչքարի եզրերին, 4 տող.

Ի թվ(ին) ՉԽԵ (1296) կանգ|նեցաւ ս(ուրբ)ք նշանս բարեխաւս Թաքլո(յի): | Տ(է)ր Յ(իսու)ս ողորմեա(յ) Թաքլոյ(ին): | Հանայի:

Խբ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան և գործածված որպես շինանյութ: Գտնվելու վայրը մեզ չի հաջողվել գանձախույզից պարզել: Ունի զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ խաչքարի վերնամասում, 5 տող.

Կանգ(ն)եցաք խաչս | ան[բ]առէլի բա(ր)էխաւսութ(ի)ն | Ք(րիստո)սի Մա[յր]տիկին(՞) Թագուհի: Փոխ|[ե]ցաւ բարէխաւս յովանու | ի Ք(րիստո)ս, ի թվ(ին) ՋՁԴ (1535):

Խգ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Հայտնաբերվել է Բաղեշ գավառի Փոր[4] գյուղում (այժմ՝ Դեղիրմենալթը): Ունի կանոնավորին մոտ եզրագիծ և զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ խաչքարի երեսին, 3 տող.

Դիլոյ յ(ի)շ(եցէ)ք ի Ք(րիստո)ս: | Տ(է)ր Ա(ստուա)ծ, | Յ(իսու)ս Ք(րիստո)ս:

Ծանոթ. խաչքարը մինչև Մեծ եղեռնը զուտ հայաբնակ Փոր գյուղի՝ Ի դարի երկրորդ կեսին հիմնովին ոչնչացված հայոց գերեզմանոցի վերջին մնացորդներից է:

Խդ Ափսե. ըստ հնավաճառի՝ գտնվում է Այնթապ քաղաքում: Փորագիր արձանագրությունը՝ եզրերին, 1 տող.



Խաչքար *խա* (լուս.՝ 2017 թ., գրչ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

4 1878 թ. ուներ 249 հայ բնակիչ (ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժ. 57/III, թ. 89): Ըստ Էփրիկյանի՝ 1880 թ.՝ 392 շունչ՝ 46 տուն բնակիչ (**Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-905, էջ 383), իսկ ըստ Կոլյուբակինի՝ 60 տուն (**Колюбакин А. М.**, Материалы для военно-статисческаго обозрения Азиятской Турции, т. VIII, часть II, с. 68): 1881 թ. գյուղն ուներ 30 («Լումայ», 1900, գիրք Ա, էջ 212), 1887 թ.՝ 40-50 (**Նահապետեան Ղ.**, Պոռայ վանք եւ իւր յիշատակ, «Մասիս», 1887, № 3885, 15 օգոստոսի, էջ 248), իսկ 1915 թ.՝ 59 տուն հայ բնակիչ (**Թէոդիկ**, Գողգոթա. թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, «Սիոն», 1968, № 1-2, էջ 37):



Խաչքար *խբ* (լուս.՝ 2017 թ., գրչ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

Խաչքար *խգ* (լուս.՝ Ա. Իշիքգյորի, 2016 թ., գրչ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է հավասար ժողովրդոց Ուզունլու Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնի եկ(ե)ղեց(ու)ն ՌՀՁ (1258 հիջրի, 1842-1843 թթ.):

Ծանոթ. Ուզունլու (Ուզունենա) գյուղը գտնվում է Սեբաստիայի նահանգի Յոզղաթ գավառի համանուն քաղաքից 80 կմ հարավ-արևելք, իսկ Կեսարիայից՝ 40 կմ հյուսիս: Հայտնի էր Սբ. Աստվածածին եկեղեցին: 1815 թ. ուներ 500 տուն զուտ հայ, իսկ 1872-73 թթ.՝ 180 տուն (110-ը՝ հայ, 70-ը՝ թուրք) խառը բնակչություն (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ 5, Երևան, 2001, էջ 173-174): 1946 թ. գյուղում շարունակում էր բնակվել 12 տուն հայ ընտանիք՝ 75 անձ (**Կարապետեան Հ.**, Անատոլուի հայութիւնը, «Հայաստանի կոչնակ», 1946, № 38, 21 սեպտեմբերի, էջ 901): Թուրք գանձախույզի մոտ հայտնված ափսեն հավանաբար Ուզունլուի՝ 1915 թ. թալանված Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից է:

Խե Տապանաքար. ըստ հայտնաբերողի՝ գտնվում է Կոնիա նահանգի Ագշեհիր քաղաքի հայկական Սբ. Երրորդություն եկեղեցում: Ելնդագիր արձանագրությունը՝ 6 տող հայատառ օսմաներեն և հայերեն.

Իսմիմ տիրացու Համբարցում: | Զալիմ էճէլ պուլտու հէմէն, | [օ]նսեգիս եաշ կարէրքէն: | Զիքր էյլեյին իրճամ սիզտէն: | Ա(ստուա)ծ ողորմի, | թվին 1864 ապրիլ:

Թարգ. Անունս տիրացու Համբարձում է: Անգութ մահը շուտ գտավ ինձ՝ 18 տարեկանի շեմին: Խնդրանքս ձեզանից՝ հիշե՛ք ինձ:

Ծանոթ. տապանաքարն Ագշեհիր քաղաքի (գտնվում է Կոնիայից 50 կմ հյուսիս-արևմուտք)՝ Մեծ եղեռնից հետո ոչնչացված հայոց գերեզմանոցի վերջին մնացորդներից է: Հայտնի է, որ 1883 թ. քաղաքում բնակվում էր 450 տուն (Պատմագիրք Սիվրի-Հիսարի Հայոց, Պէյրութ, 1965, էջ 154), իսկ ԺԹ դարի վերջերին՝ 2300 հայ բնակիչ (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 8): Վերջիններս թրքախոս էին (նույն տեղում), որն էլ բացահայտում է տապանաքարի հայատառ օսմաներենը:

ԺԹ դարի վերջերին քաղաքում գործում էր երկու եկեղեցի՝ Սբ. Պողոս-Պետրոս և Սբ. Երրորդություն: Վերջինս «...շինուած է 1859-ին հոյակապ եւ ընդարձակ» (նշվ. աշխ., էջ 8-9):

Ափսե *խդ* (լուս.՝ Հալիլի, 2021 թ.)

Տապանաքար *խե* (լուս.՝ 2021 թ.)

Տապանաքար *խզ* (լուս.՝ Դ. Թիմուրի, 2017 թ.)

Խզ Տապանաքար. ամբողջական է, գտնվում է Դերջան գավառի Սարիղայա գյուղում (այժմ՝ Սարըքայա): Կիսով չափ հողածածկ տապանաքարն ունի կանոնավոր եզրագիծ: Արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան ի հանգստեան կիւրէնացի Զն... | ...տաեան, որ փոխեցաւ առ տէր 1883 թվին փրկ|չական:

Ծանոթ. Սարիղայա գյուղը գտնվում է Էրզրումի նահանգի Դերջան գավառի համանուն քաղաքից 9 կմ հարավ-արևմուտք: Հայտնի էր Սբ. Աստվածածին եկեղեցին («ԲՀԱ», Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ. Սրվանձտյանցի կազմած վիճակագրություններից, 1976, № 2, էջ 70): 1530 թ. ուներ 28 տուն (**Սահակյան Լ.**, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 269), 1870-ական թթ.՝ 70 տուն (750) («ԲՀԱ», նշվ. հոդվ., էջ 70), 1888 թ.՝ 53 տուն (**Колобакин А. М.**, նշվ. աշխ., том I, часть I, Тифлис, 1888, с. 321; том II, часть II, Тифлис, 1890, с. 432): Ըստ Դեննետի տվյալների՝ գյուղում բնակվում էր 183 անձ (ար.՝ 101, իգ.՝ 82)՝ 30 տուն (նշվ. աշխ., էջ 433): 1909 թ. ուներ 100 տուն (**Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները, Երևան, 1912, էջ 187), իսկ 1913 թ.՝ 700 զուտ հայ բնակչություն (**Thierry de Crussol J.-M.**, Monuments de Haute-Arménie, Paris, 2005, p. 66):

Կյուրին քաղաքը գտնվում է Փոքր Հայքում՝ Սեբաստիա քաղաքից 115 կմ հարավ: 1880 թ. ուներ 1800 տուն հայ բնակչություն (**Մահտեսեան Օ.**, Համբարձում Գէորգեան (Մանուկ Զգօնեան-Զէյթունցի), «Հայաստանի կոչնակ», 1947, № 40, 4 հոկտեմբերի, էջ 944): Տապանաքարը հավանաբար կերտվել է տարագիր մի կյուրինցու հիշատակին (գտնվելու վայրը, ցավոք, անհայտ է):

Հայտնի է, որ ԺԹ դարի վերջերին քաղաքից արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնելու մեծ ալիք էր սկսվել. «...Սեբաստիայի (Սիվազի) վիլայեթում կայ մի մոռացված հայաբնակ քաղաք Գիւրիւն անունով: Նորա մէջ բնակութիւնը, ինչպէս և բոլոր հայաբնակ քաղաքների, չը կարողանալով իրան ապրուստը հայթայթել նախնական արուեստների մնացորդներով, ստիպված է եղել շարունակ ցրվիլ հեռու երկիրներ բեռնակրութեան համար: Այսպիսով, Գիւրիւնի ժողովուրդը, մանաւանդ արական սեռը, անչափ է սկսել սպառվել, որ տասներկու տարուայ ընթացքում երկու հազար հինգ հարիւր տուն զուտ հայ բնակչութիւնից մնացել է միայն չորս հարիւր տուն: Տեսնելով այսպիսի մի ակներև կորուստ, հայ կանայք, որոնք ի վերջոյ սկսել են բոլորովին առանց արական սեռի մնալ, միահամուռ որոշմամբ ձեռնարկել են այն արուեստների զարգացման, որոնց անկումը պատճառ է եղել իրանց եղբարց ու ամուսինների ցրվելուն...» (**Նիկողոսեան Գ.**, Նամակ Թուրքիայից, «Մշակ», 1881, № 77, 1/ 13 մայիսի, էջ 3):

Խէ Տապանաքար. ամբողջական է, սակայն տեղահան: Մինչև 2021 թ. գտնվում էր Բուրսայից 26 կմ հյուսիս-արևելք՝ Քարսաք գյուղում և գործածվում որպես աղբյուրի սալահատակ (այժմ տեղափոխվել է Իզնիկ քաղաքի թանգարան): Ունի կանոնավոր եզրագիծ: Փորագիր արձանագրությունը՝ 7 տող.

Տապան Կարապետ Տալպիզեանի, | երկրագործ էր ժրաջ[ան] | և այժմ հանգչի ա[յս] ..., | որոյ հողոյն պա[հապան] | լիցի տէր Աս[տուած]: | Ծն(աւ) 1844 նոյ(եմբեր), | հ(ա)նգ(եաւ) 1904 նոյ(եմբեր):

Տապանաքար *խէ* (լուս.՝ Օ. Քոքերի, 2021 թ.)

Ծանոթ. տապանաքարը Քարսաքի՝ հիմնովին ոչնչացված հայոց գերեզմանոցի վերջին մնացորդներից է:

Խը Արձանագիր սալիկ. ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Մշո Առաքելոց վանքի ավերակներից: Արձանագրությունը՝ 9 տող.

... Յ. Տ. 1857(՞) ...: | Զաւեր նշխար տանս Թարգմանչաց, | աղայ Վարդան Մամիկոնեանց, | ընդ անուանն շքեղ փառօք նախկին, | կանգնէ զանուն իւրայ տոհմին, | ի սէր ազգին ...ախոն զ..., | վառեալ սրտիւ շինման վանաց, | ըզյիշատակ քեռն իւր Նազ[ի]: | Դրոշմէ ի վէմս Ա(ստուա)ծ ի ՌՅԶ(՞) (1857):

Ծանոթ. Աղա Վարդան Մամիկոնյանը հիշվում է 1856 թ. որպես Մուշ գավառի ազգային գործակատար: Նույն թվականին այցելելով Սբ. Առաքելոց վանք՝ ուսումնարանը նորոգելու նպատակով հիմնում է Սուրբ Թարգմանչաց ընկերությունը. «Վարդան Մամիկոնեան, որ իր հանճարեղ եւ խոհեմ վարուքը գաւառիս բոլոր ժողովրդոցը սիրելի եղած է..., Սրբոց Երկոտասան Առաքելոց վանքը այցելութեան երթալով, քանի մը հարկաւոր բարեկարգութիւններէ ետեւ վանքին ուսումնարանն ալ բարեկարգելու փափաքելով, որն որ եկամտից անբաւականութեանը պատճառաւ երեսի վրայ մնացած էր, ձեռք զարկաւ ընկերութիւն մը կազմելու յանուն Սրբոց Թարգմանչաց, եւ արդէն յաջողեցաւ



Արծանագրություն *խը* (լուս.՝ է. Սուբաշիի, 2016 թ.)

Արծաթե զարդ *խթ* (լուս.՝ Հալիլի, 2021 թ.)

վաքսուն եւ հինգ բարեսէր անձինք անդամ գրելու ընկերութեան, եւ քսանի չափ ալ աշակերտ ընտրեց...» («Մասիս», 1856, № 237, 8 օգոստոսի, էջ 2):

Խթ Արծաթե զարդ. ըստ հնավաճառի՝ գտնվում է Այնթապ քաղաքում: Արձանագրությունը՝ 2 տող, հայերեն և օսմաներեն.

Մէլքոն Քալէմքեարեան: | ملكون (թարգ.՝ Մելքոն):

Ծանոթ. Մելքոն Քալեմքյարյանը (1855-1918) Այնթապի ինքնապաշտպանության հրամանատար Ավետիս Քալեմքյարյանի հայրն է և արծաթե ու պղնձե իրերի հայտնի փորագրիչ-քանդակագործ (**Քորքոշյան Ռ.**, Հալեպի արձանագրությունները, Երևան, 2013, էջ 600-601): Ի հիշատակ Համիդյան ջարդերից ընտանիքով փրկվելու՝ Մելքոնը 1897 թ. Այնթապի Սբ. Աստվածածին եկեղեցու համար ջահ է պատրաստում, իսկ 1915 թ. որդիների հետ՝ արծաթե տապանակ: Այնթապի հայության աքսորից հետո տապանակն ու ջահը բերվում են Հալեպ (նշվ. աշխ., էջ 89, 338, 582):

ծ Պղնձե սկուտեղ. գտնվում է Այնթապ քաղաքում՝ հնավաճառի մոտ: Արձանագրությունը՝ 3 տող, հայերեն և օսմաներեն.

1918, | Յովհաննէս Կըրպիճեան: | كليس (թարգ.՝ Քիլիս):

Ծանոթ. Քիլիս քաղաքը գտնվում է պատմական Ասորիքում: Մինչև 1921 թ. ուներ հայ բնակչություն:

Պղնձյա սկուտեղ *ծ* (լուս.՝ Հալիլի, 2021 թ.)

Շարունակելի

ԱՐՑԱԽՅԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԴԵՐԲԵՆԴԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻՑ

Էմմա Աբրահամյան

Հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության համար անգնահատելի սկզբնաղբյուր են տվյալ վայրում պահպանված հայերեն վիմագիր արձանագրությունները, որոնք կարող են լույս սփռել հայ համայնքի բազմաբնույթ հարցերի վրա: Հատկանշական է, որ դրանցում իրենց ուրույն տեղն ունեն տապանագրերը, որոնք հիմնականում տեղեկություններ են հաղորդում հանգուցյալի անվան, տոհմի, արհեստի, հազվադեպ նաև մահվան պատճառի մասին: Նրանց կարևորությունն է՛լ ավելի է մեծանում տեղանվան (ծննդավայր, գաղթավայր) նշումով: Այս տեսանկյունից արժանահիշատակ է Ռուսաստանի Դաշնության Դաղստանի Հանրապետության Դերբենդ քաղաքի հայկական գերեզմանոցը (N 42.046750, E 48.286033; ծ. մ.՝ 56 մ), որը գտնվում է քաղաքի հարավային եզրին՝ բերդից 1 կմ հարավ-արևելք: Վիմագրական նյութը վերաբերում է ԺԷ-ԻԱ դդ.: Տեղում պահպանված մեծաքանակ տապանաքարերի թվում առկա են նաև տարբեր հանգամանքների բերումով Դերբենդում հաստատված արցախցիների հիշատակին կերտվածները:

Սույն հոդվածում կդիտարկենք Սամվել Կարապետյանի գլխավորությամբ Դերբենդ քաղաքի՝ ՀՃՈ հիմնադրամի արշավախմբի կողմից[1] 2012 թ. ուսումնասիրված հայոց գերեզմանոցի այն տապանագրերը[2], որոնցում հիշատակված են արցախյան տեղանունները: Հավելենք, որ դրանց մի մասը հավաքել է երախտաշատ պատմաբան, վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը դեռևս 1960-ական թթ. և ընդգրկել վիմական արձանագրությունների ժողովածուի 8-րդ պրակում[3]: Սակայն ոչ բոլոր տապանագրերն են տեղ գտել աշխատության մեջ՝ ամենայն հավանականությամբ, հողով, խոտով, մացառներով ծածկված լինելու պատճառով:

Դերբենդի հայկական գերեզմանոցում պահպանված արցախյան տեղանունների հիշատակությունների տապանագրերի ընդհանուր քննությունը պարզում է, որ ամենահինը 1744 թ.-ից է, իսկ ամենանորը՝ 2001 թ.-ից: Դրանք կարևոր սկզբնաղբյուր են տեղի հայ գաղթօջախի, ինչպես նաև Արցախի բնակավայրերի պատմության և տոհմերի ուսումնասիրության համար: Ի դեպ, արձանագրություններում *յան* վերջածանցով հայրանվան ձևին երբեմն փոխարինում է *ով* վերջածանցով ռուսական տարբերակը:

Ստորև ներկայացնում ենք միայն արցախյան տեղանունների հիշատակություններով տապանագրերը ժամանակագրական կարգով: Քննության ենթարկված 71 միավոր տապանագրերից 58-ն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

ա Տապանաքար (142 x 27 x 40 սմ). արձ.՝ 3 տող.

Այս {յս} է տապան ***գանջեցի*** *Կիրակոսի | որդի Յարութի(ւ)նին, որ առ ա(ստուա)ծ փոխեց|աւ ՌՃՂԳ (1744) դեկտեմբերի ԺԵ (15)-ումն:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գանջա (Գանձակ) քաղաքը Հյուսիսային Արցախում է:



բ Տապանաքար (110 x 28 x 35 սմ). արձ.՝ 3 տող.

Այս է տ(ա)պ(ա)ն ***դարաբաղէցի*** *| Չալաբի որդի Արզան(ին), | թվ(ին) ՌՄ (1751):*

Հրատ. առաջին անգամ:



1 Խորին շնորհակալություն Դերբենդ քաղաքի հայ համայնքի ղեկավար Վիկտոր Միխայլովիչ Դանիելյանին՝ մեզ մեծապես աջակցելու համար:

2 Լուսանկարները՝ Ս. Կարապետյանի, գրչանկարները՝ Ս. Դանիելյանի:

3 Դիվան հայ վիմագրության, պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն (այսուհետ՝ ԴՀՎ VIII), աշխ.՝ Գր. Գրիգորյանի, Երևան, 1999, էջ 186-200: Ի դեպ, Դերբենդի գերեզմանոցից հրատարակվել է ընդհանուր 95 միավոր տապանագիր, որից միայն 15-ում են նշված արցախյան տեղանունները: Հավելենք նաև, որ հրատարակված արձանագրություններից 13 միավոր չենք տեսել:

գ Տապանաքար (118 x 29 x 33 սմ). արձ.՝ 3 տող.

*Ա(յ)ս է տ(ա)պ(ա)ն **գանջեցի** Առաքէլի | կող(ա)-կից Մանիա խանումին, ՌՄԼԷ (1788), | փետրվարի ԺԷ (17), 1788:*

Հրատ. առաջին անգամ:



դ Անհետացած տապանաքար. արձ.՝ 3 տող.

*Այս է տապան ի **Ղարապաղու | կուլլ(ս)դանցի** Եսայի որդի Պաշչի | Աբին, թ(ւի)ն ՌՄԼԹ (1790):*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 189:

Ծանոթ. Գյուլիստան գյուղը գտնվում է Արցախի Հանրապետության (ԼՂՀ) Շահումյանի շրջանում:

ե Տապանաքար. արձ.՝ 3 տող.

*Այս է տապան ի **Ղար(ա)պաղու կուլ/ըդանցի** Եսայի որդի պաշ/արդչի Ավաքին, թվին ՌՄԿԹ (1820):*

Հրատ. առաջին անգամ:

զ Տապանաքար. արձ.՝ 4 տող.

*Այս է դապան **դարաբաղց/ի** քովխա Օհանի որբի | հանկուցե(ա)լ Թաքոսի, | ասկն Չալապե(ա)ն, 1824:*

Հրատ. առաջին անգամ:

է Տապանաքար. արձ.՝ 5 տող.

Յայս դամբարան հանգչի մարմին | այն վարժապետ Գաբրիէլ Տէր Յոհան/նէս Տէր Բարս(ե)ղեանց

*Ղարապաղու Վա/ռանդեցին, այլեւ գ(ի)ւղ(ի)ւ **Թաղավարդցին**, | եւ է այս քա(ղի)ն 29 ամեա կենօք հանգ(ե)աւ ի տէր 1836:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Թաղավարդ գյուղը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

ը Տապանաքար. արձ.՝ 3 տող.

*Այս է տապան **դարաբաղեցի** | դարզի Մկրդիչ Դավիդե(ա)ն, | 1838 ամի դեկ. 13:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. դարզի՝ դերձակ:

թ Անհետացած տապանաքար. ուղղանկյուն, վրան՝ թևավոր խաչ, պատվանդանով, արձանագրությունը՝ 2 տող.

*Այս է տապան **Ղարաբաղու Փաղիմալցի** իսնա-լառ(՞) Մոսէս Տէր Եսաեան(ի). հանգեաւ ի Ք(րիս-տո)ս | 1850 ամի, յունիսի 20-ին:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 195-196:

Ծանոթ. տապանագիրը տալիս ենք ըստ Գր. Գրիգորյանի ընթերցման (չենք տեսել): Ենթադրում ենք, որ տեղանունը պետք է համապատասխանի ԱՀ Ասկերանի շրջանի Փիրջամալ (Վարդաձոր) գյուղին: Հանգուցյալը, անկասկած, 1830 թ.-ից առնվազն 1844 թ. գյուղում քահանայագործած Եսայի Հարությունյան Տեր-Եսայանցի ազգականներից էր (ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533):

ժ Տապանաքար. արձ.՝ 7 տող.

*Յայս տապան կայ անկեալ մթագգած | Յարութիւն Գրիգորեան Բաբայեանց(ը), | որ **Շուշի** քաղաքի էր բնակ | եւ հանգեաւ ի **Ղուբայ** մեծ քաղաք, | ե-դաւ աստ սա ի դիր հանգստեան, | երեք օր զկնի իւր մահուան | ի **Դարբանդ** 1855 մարդի 12:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Շուշի քաղաքը ԱՀ համանուն շրջանի վարչական կենտրոնն է: 2020 թ. նոյեմբերից գտնվում է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո:

Ղուբա քաղաքն Ադրբեջանի Հանրապետության համանուն շրջանի վարչական կենտրոնն է:

ժա Տապանաքար. արձ.՝ 6 տող.

*Այս է տաբան **դարբանդեցի** դուստր Գրիգոր | Աբրամովի՝ Կադարինի, | ծնաւ ի մորէ 1840 թիւն դեկ-դեմբերի 20-ին, | ամուսնացաւ **գանջէցի** Խաչատուր*

Ղազարովին | 1857 թիւ փ(ե)տրվ(ար)ի 3-ին, փոխեցաւ առ աստ|ուված 1862 թիւն ղ(ե)կ(տեմ)բերի 25-ին:

Հրատ. առաջին անգամ:

ժբ Անհետացած տապանաքար. ուղղանկյունաձև, երկաստիճան պատվանդանով, երեսին՝ խաչանշան, արձ.՝ հյուսիսային կողին, չափածո 8 տող.

*... ներքոյ ետեալ մարմին եւ ոսկերք այսմ տապան(ին) | ... երիտասարդ եւ յուժ պանծալի խեղճ Ստեփան(ին), | է վաղաքառամ որդի Սարգիսին թոռն՝ Յոհան(ին), | **Շուշուայ** քաղաքի բնակիչ վախճանն ի օտար երկր(ին): | Ծնունդ ի մօրէ 1838 ամի փրկչական թիւ(ին), | առ տէր փոխեցաւ 1870 ամի **Դարբանդ** քաղաք(ին), | իւր խղճիկ կնոճ անտէր թողելով աչք ճանապար(ին): | Ով արծան կարդողք, մէկ բերան ասէք ա(ստուա)ծ ողորմ(ին):*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 199:

ժգ Անհետացած տապանաքար. ուղղանկյունաձև, բուսական զարդաքանդակներով, արձ.՝ 5 տող.

*Աստ հանգչի **ղարաբաղցի Ղարախան** | գիւղացի Կարապետ Տէր Աւետիսեան | Տէր Սիմէօնեանց, որ յ38 ամեայ | հասակի փոխեցաւ ի կեանս անանց | յ9 օգոստոսի 1877 թ., ի **Դարբանտ:***

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 198:

Ծանոթ. Ղարախան (Ղավախան, Կավահան) գյուղը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում: Հանգուցյալը, ըստ ամենայնի, 1835 թ.-ից առնվազն 1842 թ. Ղավախան գյուղում քահանայագործած տեր Ավետիս Վարդանյան Հարությունյանցի որդին էր (ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531):

ժդ Տապանաքար. արձ.՝ 3 տող.

*Ընդ այսու շիրմաւ հանգչի **Շուշուա** | քաղաքացի Անդրէաս Աւետիսեան Ֆանո|ւնցեանց(ը), որ վախճանեցաւ ի հասակի 35 | ամաց ի 16 սեպտեմբերի 1877 ամի, ի Դարբանդ:*

Հրատ. առաջին անգամ:

ժե Տապանաքար. արձ.՝ 3 տող.

*Տապան **շուշեցի** պարոն | Պօղոսի Ղազարեան Զիալեանց(ի), | վախճանեցաւ ի 17 հոկտ(եմբեր) 1877 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հայտնի է, որ Պողոս Զիալյանը, ի նպաստ աղքատների, կտակել էր 700 ռ. («Մշակ», 1879, № 11, 30 յունվարի/11 փետրվարի, էջ 3):

ժզ Անհետացած տապանաքար. արձ.՝ 5 տող.

*Աստ դնի մարմին աստիճանաւոր | Յակոբ Բէկի Բաղդասարբէկեան | Ղազեանց **Շուշեցւոյ.** վախճա|նեցաւ ի 20 յուլիսի 1878 ամի, | ի 37 ամաց հասակի:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 198:

ժէ Տապանաքար. արձ.՝ 3 տող.

*Այս է տապան **Շուշուա** քաղաքացի | Աւետիս Առուշանեան Թառումեանցի, | վախճանեալ ի 31 մարտի 1880 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Թառումյանները Շուշիի հայտնի ազգատոհմերից են:

ժը Տապանաքար. արձ.՝ 6 տող.

*Յայսմ տապանի անփոփել | պահէսցի մարմինն **Շուշու|այ** քաղաքացի Թաքէոս Օհանճ|անեան Գրիգորեանց, վախճանեցաւ | 30 ամեայ հասակի 1881 ամի | յունուարի 12, **Դերբենտ**:*

Հրատ. առաջին անգամ:

ժթ Տապանաքար. արձ.՝ 4 տող.

*Այս է տապան լուսահոգի **Շուշուա** / քաղաքաբնակ Մարիամգիլ Յովհանն/էսեան Շահբազե(ա)նց, վախճանեցաւ / 1882 ամի 25 յունվարի:*

Հրատ. առաջին անգամ:

ի Անհետացած տապանաքար. արձ.՝ 4 տող.

*Աստ հանգչի **Շուշուա** քաղաքացի Համբ/արձում Մկրտիչեան Գուրջիեանց, որ վա/խճանեցաւ ի 60 ամեայ հասակի 3 փետրվ/արի 1882 ամի ի **Դարբանդ**:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 192:

իա Տապանաքար. արձ.՝ 5 տող.

*Այս է տապան **Շուշվայ** / **Խունեշենակ** գուղացի Ղարա/խան Սողոմօնեան, յասակն ե 20 ա/մաց, վախճանվեցաւ 24 յու/նիսի 1882 թիւ:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խնուշինակը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

իբ Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, արձ.՝ մի կողին՝ 5, մյուսին՝ 6 տող.

*Աստ հան(գ)չի Գալելեայ Յակոբեան, որ է / կողակից Կարապետ Յարութիւնեան Օր/բէլեանցի, որ վախճանուեց 8 հոկտէմբէրի / 1882 ամի, 19 ամաց հասակի, իւր / հարսնութեան եր(ր)որդ դարում, ծնուած է **Շուշի** քաղաքում 1861 թ.: // Վայ հարսնութեան իմ օրերուն, / որ լոյս չդեսած խաւարեցան, / կեանքիս արեւը երկրի ծոցում / յաւէրժ քնով ընկղմեցաւ / եւ խեղճ զաւակս՝ Յովհաննէսը, / դեռ մանկութեան մէջ որբացաւ:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 193-194:

իգ Տապանաքար. արձ.՝ մի երեսին՝ 5, մյուսին՝ 4 տող.

*Աստ հանգչի **դարաբաղցի Աւետ/արանոց** գիւղացի Գրիգոր բէկ Ման/ասբէկեան Մելիք-Շահնազարեանց, որ է 26 / ամեայ հասակի, փոխեցաւ ի կեանս ան/անց 9 յունվարի 1883 թիւ, **Դարբանդ**: // Ո՜վ մարդ, տե՛ս ինձ և մտածի՛ր, / վերջդ այս է, զգուշացի՛ր, / սիրի՛ր աստուած և քո ընկեր, / այդ է բարին, հաւատացի՛ր:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ավետարանոց գյուղը գտնվում է ԱՀ Ասկերանի շրջանում: 2020 թ. հոկտեմբերից գտնվում է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո:

Հանգուցյալն Արցախի հայ իշխանական-մելիքական (իշխանանիստ կենտրոնն Ավետարանոցն էր) տոհմից էր:

իդ Տապանաքար. արձ.՝ 4 տող.

*Այս է տապան լուսահոգի **Շուշուա** ք/աղաքաբնակ Աղաջան Առաքելեան / Շահբազեանց, վախճանեցաւ 1883 ամի / 5 մարտի:*

Հրատ. առաջին անգամ:

իե Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, արձ.՝ 4 տող.

*Այս է տապան **դարաբաղաբնակ** / Կարապետ Մսրիխանեանցի, ծնաւ / 5 յունվարի 1838 ամի, վախճանեցաւ / 12 յունիսի 1884 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

 իզ Անհետացած տապանաքար. արձ.՝ 5 տող.

Այս է տապ(ա)ն Արսէն քահանայ | Տէր Ղազարեանցի. ծնաւ 1844 ամի, օգոստոսի 17-ին, ի ***գեղջն Աւետարանոց*** *| **Շուշուայ գաւառի**: Վախճանեցաւ | 1885 ամի, մարտի 25-ին, Դերբ(ե)նդ:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 199:

Ծանոթ. հանգուցյալ Արսեն քահանա Տեր-Հովսեփյան Տեր-Ղազարյանցը մեծ ներդրում է ունեցել դերբենդաբնակ հայ մանուկների կրթության գործում: Հայտնի է, որ հայոց դպրոց չլինելու պատճառով 1875 թ. «...ժողովեալ ի տուն իւր զերկսեռ մանկունս Հայոց ուսուցանէր ձրիապէս զկրօն, զՀայոց և Ռուսաց լեզու, զՀայոց պատմութիւն, զԹուաբանութիւն և զվայելչագրութիւն» («Արարատ», 1876, Ա, էջ 34): Նրա ջանքերով 1879 թ. Դերբենդում բացվում է օրիորդաց դպրոց (***, Նամակ Դերբենդից, «Մշակ», 1882, № 236, 18 դեկտեմբերի, էջ 2-3): 1881 թ. քաղաքի Մեսրոպյան գրադարանը հարստանում է նաև քահանայի նվիրած գրքերով (**Մելիք-Շահնազարեանց Կ.**, Դարբանդ, «Մեղու Հայաստանի», 1882, № 18, 26 փետրվարի, էջ 3): Տեր Արսենը մեծ հեղինակություն էր վայելում հասարակության մեջ. «...մեր քահանաների մէջ հազուագիւտ էր և մինչև վերջի րոպէն հաւատարիմ մնալով իւր սկզբունքին մաքառում էր իւր և հասարակութեան բաղդը ազատ պահելու աղայական կամայականութիւններից, որոյ և իսկ պատճառաւ, բազմիցս խեղճը նիւթապէս և բարոյապէս տուժեց» («Նոր-Դար», 1885, № 51, 6 ապրիլի, էջ 2): Ի դեպ, ըստ լրատվական թղթակցություններից մեկի՝ վախճանվել է մարտի 19-ին (նույն տեղում): Տեր Արսենը թերևս ԺԹ դ. Ավետարանոցում հովված քահանաների շառավիղներից էր (ՀԱԴ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 531-533, 538):

իէ Անհետացած տապանաքար. ուղղանկյուն, արձ.՝ 6 տող.

Աստ հանգչի ***դարաբաղցի | Ղզղալա*** *գիւղացի Հռիփսիմէ | Յովհաննէսեան Ազարեանց: | Վախճանեցաւ 29 մարտի 1886 | ամի 70 ամեայ հասակի ի |* ***Դարբանտ:***

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 197:

Ծանոթ. Ղզղալա (Բերդաշեն) գյուղը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

իը Տապանաքար. արձ.՝ 5 տող.

Աստ ամփոփե(ա)լ գայ մարմ|ին ***Ղարաբաղա*** *բնակչուի | Հռիփսիմէի Պետրոսեան | Մոյրատեանց, հանգեաւ ի 28 | օգոստոսի 1886 ամի ի ք(աղաք)* ***Դերբենդ****:*

Հրատ. առաջին անգամ:

իթ Անհետացած տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, նախշազարդ, արձ.՝ 6 տող.

Աստ հանգչի ***դարաբաղցի Ղզղ|ալա*** *գիւղացի Յարութիւն Ղու|կասեան Ազարեանց, որ 35 ամ|եայ հասակի փոխեցաւ ի կեանս | անանց 18 ապրելի, 1887 ամի, ի |* ***Դարբանտ:***

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 197:

լ Տապանաքար. արձ.՝ 3 տող.

Այս է տապան ***շուշուաբնակ*** *| Յովհաննէս Փանունցեանցի, | վախճանեցաւ 1886 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

լա Անհետացած տապանաքար. դագաղաձև, սև, ողորկ մարմարից, արձ.՝ հյուսիսային կողին, 4 տող.

Ի յայսմ տապանիս հանգչի | մարմին ***Շուշւոյ*** *քաղաքացի | Առաքելի Գրիգորեան Բաբաեանցի, | վախճանելոյ ի 13-ն նոյեմ(բերի), 1887 ամի, ի հասակի 80 ամ(ա)ց:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 200:

լբ Տապանաքար. արձ.՝ 4 տող.

Այս է տապան ***շուշուաբնակ*** *| լուսահոգի Առաքել Շահբազեանցի, | վախճանեցաւ 1888 ամի 29 ապրելի, | 75 ամօք հասակի, ի* ***Դարբանդ****:*

Հրատ. առաջին անգամ:

լգ Անհետացած տապանաքար. զարդանախշերով, արձ.՝ 5 տող.

Աստ հանգչի մարմին լուսահոգի | Սիմեաց գաւառէ ***Գիւրիս*** *գիւղացի |* ***շուշուաբնակ*** *Հայրապետ Պողոսեան(ի), | ազգատոհմ Տօռոզեանցի. վախճանեցաւ | 1888 ամի, 4 յունիսի, 80 ամօք հասակի:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 195:

Ծանոթ. Գորիս քաղաքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում:

լդ Տապանաքար. արձ.՝ 4 տող.

Աստ հանգչի մարմին լուսահոգի | ***շուշուաբնակ*** *Թագուհի Յոհաննեան | Տէր Գրիգորեանցի, վախճանեցաւ 1888 | ամի 4 յուլիսի, 75 ամօք հասակի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հանգուցյալը, ըստ ամենայնի, Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցում 1848-1857 թթ. քահանայագործած Հովհաննես Տեր-Գաբրիելյան Տեր-Գրիգորյանցի դուստրն էր (ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 538, ց. 18, գ. 542):

լե Տապանաքար. արձ.՝ 6 տող.

Ընդ այսու շիրմաւ հանգչի լուսահոգի | Ավանէս Միրզաեան Ղահրամանեանց, | ծնեալ է ***Վարանդայի Խերխան*** *գիւղումն, | ի գաւառն Արցախ, վախճանեալ է* ***Դեր/բենդ*** *ք(աղաք) 1889 թ(վին) 18-ն մայիսի, 75 ամաց | հասակի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խերխանը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

լզ Տապանաքար. երեսին՝ խաչ և զարդաքանդակներ, արձ.՝ պատվանդանի վրա, 5 տող.

Այս է տապան ***Շուշվայ*** *| գաւառի* ***Գաղարծ*** *գիո(ւ)ղացի | Խաչատուր Սարգսեան | Թումասեանցին, վախճանեցաւ | 1890 թ(վին) նոյեմբերի 10-ին:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 196:

Ծանոթ. Կաղարծի (Գաղարծ) գյուղը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

լէ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

Աստ հանգչի մարմին լուսա/հոգի ***Շուշուաքնակ Մուշկապատ*** *| գիւղացի Միրզայ Կարապետեան Սարգ/իսեանցի, վախճանեցաւ 1890 ամի | 18 նոյեմբերի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մուշկապատը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

լը Տապանաքար. արձ.՝ 5 տող.

Աստ հանգչի մարմին լուսահոգի | ***Շուշուա*** *գիւղացի նալբանդ Յակոբ | նալբանդ Հայրապետեան Ապարեանցի, | վախճանեցաւ 1892 ամի 13 օգոստոսի, | 35 ամօք հասակի:*

Հրատ. առաջին անգամ:



լթ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

Ի յայսմ տապանիս հանգչի | մարմին ***Շուշուայ*** *քաղաքացի | Դաւթի Մնացականեան Միսկարեան-ց(ը), | վախճանեցաւ ի 15 օգոստոսի 1892 ամի, | ի հասակի 72 ամաց:*

Հրատ. առաջին անգամ:



խ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

Յայսմիկ տապանի ***Ղարաբաղու*** *| բնակիչ* ***Վանք*** *գո(ւ)ղացի Աղաբեկ | Մկրտչեան Թայիրեանց, վախճանվէց | ամփոփեալ մարմին 1892 թ(վի) սեպտեմ(բերին), | 45 ամաց հասակի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Վանք գյուղը գտնվում է ԱՀ Մարտակերտի շրջանում:



խա Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 4 տող.

*Աստ հանգչի մարմին լուսահոգի | **շուշուաբնակ** Արտեմ Բաղտասարեան | Տէր Գրիգորեանց, ծնեալ է 1858 ամի, | վախճանեցաւ 1893 ամի յուլիսի 30:*

Հրատ. առաջին անգամ:

Խբ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Ի յայսմ տապանիս հանգչի | մարմին **Շուշուայ** քաղաքացի | Իվան Աբաբէկեան Աբաբէկեանցի, | վախճանեցաւ ի 1-ն փետրվարի 1894 | ամի, ի հասակի 59 ամաց:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հանգուցյալը թերևս Սահակ Աբաբեկյանցի եղբայրն էր (արձ. *խա*): Շիրմաքարը կից է նրա տապանաքարին:

Խգ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Աստ հանգչի մարմինն լուսահոգի | **Շուշուա** քաղաքացի Պետրոս | Թադէոսեան Շաբարեանցի, վախճանեցաւ | 1894 ամի հոկտեմբերի 30-ին 40 ամօք | հասակի, ի քաղաքն **Դերբենդ**:*

Հրատ. առաջին անգամ:

Խդ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Ի յայսմ տապանիս հանգչի | մարմին **Շուշուայ** քաղաքացի | Մարքարիդ Ավաքեան Բողդանեանցի, | ծնաւ 1823 ա(մ)ի, հանգեաւ ի տէր | 1894 ամի դեկտեմբերի 26-ի:*

Հրատ. առաջին անգամ:

Խե Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 6 տող.

*Այս է տապան **Դարաբաղու** | բնակիչ **Շուշի** գ(ո)ղացի | Սարգիս Ավաքեան Հայրապետեանց, | վախճանվէց ամփոփեալ | մարմին 8 ամաց հասակի, | 1896 թ(վին) յունվարի 3:*

Հրատ. առաջին անգամ:

Խզ Տապանաքար. սպիտակ մարմարից, երկաստիճան պատվանդանի վրա, արձանագրությունը՝ երկլեզվյան (հայերեն և ռուսերեն), 5-ական տող.

*Այս է շիրիմ հանգստեան **Շուշուայ** քաղաքացի | Սահակայ Աբաբեկեան | Աբաբեկեանց, | ծնեալ ի 22 սեպտեմբերի 1853 ամի, | վախճանեալ ի 3 դեկտեմբերի ի 1896 ամի, ի **Յարիցին** եւ 30 ապրելի 1897 թիւ տեղափոխեցաւ ի **Դարբանդ**: || Исаакъ Атабековичъ | Атабековъ | родился 22 сентября 1853 года, | скончался 3 декабря 1896 года въ г. Царицинъ | и 30 апреля 1897 года перевезенъ въ г. Дербентъ.*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 192:

Ծանոթ. «Դիվան»-ում բացակայում է *1897 թիւ* հատվածը:

Հանգուցյալը թերևս Իվան Աբաբեկյանցի եղբայրն էր (արձ. *խբ*): Շիրմաքարը կից է նրա տապանաքարին:

Խէ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 4 տող.

*Այս է տապան լուսահոգի **Շուշուա** քաղաքաբնակ Մանուշակ Յակոբ | Շահբազեանց(ի), վախճանեցաւ 1897 | 20 փետրվարի:*

Հրատ. առաջին անգամ:



խը Տապանաքար. արձ.՝ 6 տող.

*Այս տապանիս մեջ հանգչի | **Շուշվաի Ղայբալու** գուղացի | նալբանդ Իվան Ահասեանցի որդի | Արմենեակն, ծնեալ ի 1895 թիւ, | սեպդեմբ(եր) 22-ն, վախճանեալ է | 1898 ամի մարդի 3-ին, **Դարբանդ:***

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ղայբալու գյուղը գտնվում է ԱՀ Շուշիի շրջանում:

խբ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 6 տող.

*Դամբարան Մարեամ | Տէր Յովհաննիսեանցի, դուստր | {տուստր} տէր Յոհաննէսի, **Բալլուճայ** | գիւղացի եւ ծնեալ է ի 1875 ամաց, | հանգ(ե)աւ **Դերբենդում** 1898 | ամաց սեպտեմբեր ամսուն:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 199:

Ծանոթ. Բալլուջա (Այգեստան) գյուղը գտնվում է ԱՀ Ասկերանի շրջանում:

գ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Աստ հանգչի մարմին | **շուշուաբնակ** Խաչատուր | Մարգիսեան Բաղտանեանցի, | վախճանեցաւ 1904 ամի 25 | յունիսի, 52 ամօք հասակի:*

Հրատ. առաջին անգամ:

դա Տապանաքար. արձ.՝ 4 տող.

*Այս է տապան լուսահոգի | Ղուգաս Հարութունով **Ղարաբ|աղի Յիրհէրի** գուղացի, վախճա(նեցաւ) | 1907 թ. ապրէլի 11-ն, հասակ 45 տ(արեկան):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հերհեր գյուղը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

դբ Անհետացած տապանաքար. արձ.՝ 4 տող.

*Այս է տապան **ղարաբաղցի** Տիգրան | Մարգիսեան Տէր Սիմէօնե(ա)նցի. ծն|աւ 1886 ամի, 2 օգոստոսի, վախճան|եցաւ 1910 ամի, 30 յուլիսի:*

Հրատ. ԴՀՎ VIII, էջ 199:

դգ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Աստ հանգչի մարմին լուսահոգի | **Միանեաց գաւառի Կիւրես** գիւղացի | **Շուշուա** բնակիչ Հայրապետի կողակից | Մարգարիտ Խաչատուրեան Պողոսեանցի, | վախճանեցաւ 1910 ամի 5 հոկտեմբերի, | 85 ամօք (հ)ասակի:*

Հրատ. առաջին անգամ:

դդ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 4 տող.

*Այս է տապան լուսահոգի | **Շուշուա** քաղաքի բնակչուհի | Ղումաշ Գրիգորե(ա)նց(ի), վախճան(եցաւ) | 1912 թ(վին) յուլիսի 12, հաս(ա)կ 75 տ(արեկան):*

Հրատ. առաջին անգամ:

դե Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Այս է տապան լուսայոգի **ղարա|բաղցի** վերաբնակ ի **Դարբանի** | Թադէոս Նաւասարդեան Մելիք Մ(ու)ռա|տեանցի, վախճանեցաւ 1912 ամի 26 | դեկտեմբերի, 58 ամօք | յասակի:*

Հրատ. առաջին անգամ:

ծզ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Այս է տապան լուսա|յիոքի Ե{օ}նօկ Պէտրոսեանց, | ի գիո(ւ)ղն **կա(ր)մրակուջեցի**, վա|խչանվէց 20 հասակիո(ւ)մն, | 1912:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կարմրակուճ գյուղը գտնվում է ԱՀ Հադրութի շրջանում: 2020 թ. հոկտեմբերից Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո է:

ծէ Հարթ ուղղանկյունաձև սալատապան. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Արտյունով | Соня Д., | 1900-1932 г., Степанакертский | р., с. **Бадара**, | память от мужа.*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Բադարա (Պտրեցիք) գյուղը գտնվում է ԱՀ Ասկերանի շրջանում:

Ի դեպ, տապանաքարին հետագայում տեղադրվել է սպիտակ մարմարից սալիկ՝ ռուսերեն գրությամբ, որի հետևանքով հայերեն արձանագրությունը երևում է մասամբ:

ծը Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 4 տող.

*Այս է Շամամ | Զախ|արեանց, ծնվեց 1865 թ., վախ(ճանվեց) | 1935 թ., **Նինգի** գու(ղի)ց:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Նինգի գյուղը գտնվում է ԱՀ Մարտունու շրջանում:

ծթ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 6 տող.

*Այս է տապանը | Ավետիս Արուս|տամեանցի, ծնեց | գիւղն **Նինգի** 1878 թ., | վախճանվեց 23-ին | սեպտեմբերի 1939 թ(իվ):*

կ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Այս է տապան լուսահոգի | Բագրատ Սարգիսեան, ծնվէլ է | 1894 թ., վախճանվէլ ա 1944 թ(վին) | հունիսի 12, **Վարքնաշատ** | գուղացի:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Վարքնաշատ գյուղը գտնվում է ԱՀ Հադրութի շրջանում: 2020 թ. հոկտեմբերից Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո է:

կա Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 5 տող.

*Այս է տապան | Գրիգորյանց Սայի, ծնվէլ ա | գյուղ **Նինգի** 1890 թ(իվ), 1-XII-|1949, հիշատաք փէսա Վաղա|ղշակից:*

Հրատ. առաջին անգամ:

կբ Տապանաքար. պատվանդանի վրա, երկլեզվյան (հայերեն և ռուսերեն), արձ.՝ 7 (համապատասխանաբար՝ 4 և 3) տող.

*Այս է տապանը Գյուլու | Ավանէսյան, գ(յուղ) **Նինգի**, մահ | 1949 թ(իվ), ծն(ունդ) 1845 թ(իվ), հիշատակ որդի | Աշօտից: || Здес покоится прах | Гюли Аванесян, умерла 1949 г., | памят от сына Ашота.*

Հրատ. առաջին անգամ:

կգ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ.՝ 3 տող.

Абалова Ануш | Абрамовна, р. 1853 г. | с. Гадрут, у. 6.IX.1961 г.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հադրութ քաղաքը ԱՀ համանուն շրջանի կենտրոնն է: 2020 թ. հոկտեմբերից գտնվում է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո:

կդ Տապանաքար. պատվանդանի վրա, արձ՝ 3 տող.

Давыдова Ареват | Барсеговна, р. 1885 г. | с. Гад-рут, у. 5.III.1961 г.

Հրատ. առաջին անգամ:

կե Մահարձան. երկլեզվյան (ռուսերեն և հայերեն) արձանագրությունը՝ 7 (համապատասխանաբար՝ 6 և 2) տող.

Здесь похороненый | Джалавян | Мосес Арутюнович | 4.11.1900-15.1.1974, | память от жены | Рантика, Папика, Рачика. | Գէտէշնէցի | Մօսէս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գետաշեն գյուղը գտնվում է բռնազավթված Հյուսիսային Արցախի Խանլարի շրջանում:

կզ Կոթողաձև մահարձան. երկլեզվյան (հայերեն և ռուսերեն), արձ.՝ 8 (համապատասխանաբար՝ 2 և 6) տող.

Գ.յուղ | Հարավ: || Закиян | Хачатур | Самсонович | 1912-1982, | НКАО, с. Гаров, | от детей.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հարավ գյուղը գտնվում է ԱՀ Ասկերանի շրջանում:

Հանգուցյալը Ռեբեկա Զաքիյանի ամուսինն էր և Անդրանիկի հայրը: Շիրմաքարը կից է տիկնոջ և որդու տապանաքարերին:

կէ Կոթողաձև մահարձան. արձ.՝ 4 տող.

Закиян | Андроник | Хачатурович | 1938.15-I.-23.X.1991 г.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. բացառության կարգով ներկայացնում ենք այս տապանագիրը, քանի որ հանգուցյալը հարավցի Խաչատուր և Ռեբեկա Զաքիյանների որդին էր: Շիրմաքարը կից է ծնողների տապանաքարերին:

կը Կոթողաձև մահարձան. արձ.՝ 6 տող.

Закиян | Ребека | Семеновна | 20.XII.1914-13.III.2001, | от детей и внуков. | С. Гаров.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հանգուցյալը Խաչատուր Զաքիյանի կինն էր: Շիրմաքարը կից է ամուսնու և որդու տապանաքարերին:

կթ Տապանաքար. արձ.՝ 3 տող.

***Ղարաբաղցի** | Խուբլար-Օհան(եան)ց | Սիմօն:*

Հրատ. առաջին անգամ:

ի Կոթողաձև մահարձան. արձ.՝ 10 տող.

*Այս է | տապան | լուսահոգի | **Շուշուաբնակ** | Ա-լավէրդի | Յովանէսով, | ... թ(վին) | սէպտէմբ(էր) 19, | հասակ | 50 տարեկ(ան):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. մահվան տարեթվի հատվածը ցեմենտով ծածկվել է շիրմաքարի վերանորոգման ժամանակ (երևում է թվերի վերնամասը, հավանաբար՝ 1909):

իա Կոթողաձև մահարձան. արձ.՝ 9 տող.

*Այս է | տապան **Շուշ|վայ** քաղաք|ացի Զարվարդ | դուստ{ու}ը | Գալուստին, | գօղագից | Ավաքջանին | Վարդանեանց:*

Հրատ. առաջին անգամ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՄԱՆՐԱՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ



ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

ՀՕՖ,

ԲԵԿՈՐ ԵՎ ՄԱՐԻ ԼՈՒ ՓԱՓԱՋՅԱՆՆԵՐ

ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

Flanders State of the Art — ՖԼԱՆԴՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

FORD FOUNDATION — ՖՈՐԴ ՀԻՄՆԱԴՐԱՄ

TUFENKIAN FOUNDATION — ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՐ ԿԱՅՔԷՋ

artsakhmonuments.org



ԵՍԱՔԱՏԻՐՈՒԹԻ ՈՒԽՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱՅԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՈՑՈՐԴ ՈՑԽՄ ՈՑԱՍՈՒԴԱՐԱՑՈՐ ՔԿԱՐ ԵՔԵՑԻՆԵՑԵԼԻՍՈՒՐԲՁ ԱՐԹՍԱԳԵՐԱՂԱՀԵՄՏԻԹՎ ԻՍԿԶՈՒՅԵՆ

ՀԻՆԼԻՑԱՔ ՌԱՖ ՁԴԱՅՆՏԱՒԷՆ ԷՐ ԹԱՀԱՌԶԽԱՉ

ՅՈՎԱՏԻՒ ՁԱՀԿ ԱՏՈՒԵԱԾՈՅ

ՍԱՂ ՊԴՈՒՔԻՆ ԵՊԿԱՆ

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, RAA-USA ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

RAA

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2022

ISSN 1829-2003

22001 >

9 771829 200001